ԷՋՄԻԱԾԻՆ

1989

ԲԳ

АЖ 146

ԽԱՉ

ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վիեննա – Մոսկվա

1989



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետի զատկական քարոզը՝ արտասանուած Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում 3

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարութեան տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 5

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու Episկոպոսական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 8

ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշի նամակը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին 10

Պետական բարձր պարգևի հանձնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին . 11

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Ս. Մարգարյանցը Մայր Աթոռում . 12

Ցավակցական հեռագիր Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ին . 13

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի քարոզը՝ արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում 14

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հանդիպումը իր ընտրողների հետ Էջմիածնի մշակույթի պալատում 18

Հաղորդագրություն 24

Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի այցը Միացյալ Նահանգներ . . . 26

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 68

ԾԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԵՄՅԱՆ—Քարոզ՝ խոսված Մայր տաճարում Ս. Զատկի Ճրագալույցի օրը 67

Տ. ԱԲԵԼ ԱԲԵՂԱ—Քարոզ 69

Եկեղեցեաց Համաշխարհային Խորհուրդի ենթայանձնախումբի նիստ Գահիրեի մէջ 72

ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ ՊԵՆԼԻՑԱՆ—Սրբոց Վարդանանց զորավարաց ոգեկոչման և Վազգեն Վեհափառի անվանակոչության հանդիսավոր պատարագ Սոֆիայի մեջ 78

ՄԻՔԱՅԵԼ ԱԲԵՂԱ ԱԶԱՊԱՀՅԱՆ—Լենինականում 75

475-ամյակ Հաճկատար Ս. Աստվածածին վանքի հիմնադրության . . . 76

ԽԱՉԱԿ ՎՐԴ. ՊԱՐՍԱՄԵԱՆ—Կարգ Իւդաբերից Հայաստանեայց Եկեղեցւոյ . . 78

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ—«Ծարժի տարեգրություն հայոց մէջ» 86

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Էջմիածնի Կաթողիկոսարանը և հայ գաղթականների հոգևոր-մշակութային արժեքների փրկության հարցը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ 91

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 95

«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 96

«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine . . . 97

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine». Etchmiadzine. Arménie. URSS

Հանձնված է արտադրության 10.04.1989 թ.: Ստորագրված է տպագրության 19.05.1989 թ.:
Տպագրական 6,12 մամուլ+6 ներդիր, թուղթ 60×84/¹₈, պատվեր 564
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1989 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (26 մարտ 1989 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:
«Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ Մեր,

Օրացոյցը մեզ աւետում է, թէ Զատիկ է այսօր: Զատիկ՝ յաղթանակը կեանքի ընդդէմ մահուան ու չարիքի, Զատիկ՝ յաղթանակը իւսչի վրայ Յիսուսի զոհաբերութեան, Զատիկ՝ Յոյսի լուսաբաց Գողգոթայից յետոյ:

Մեր Եկեղեցին ու ժողովուրդը, այս տարուայ Զատիկը ողջունում են դեռեւս Գողգոթայի և յոյսի ճանապարհին: Այդ ճանապարհը երկար է տակաւին: Քրիստոնէական յոյսը սակայն լոկ պատրանք չէ, այլ՝ լոյս ստուգութիւն: Քրիստոնէական յոյսը յուսահատութիւն չէ, այլ՝ լաւատեսութիւն, քրիստոնէական յոյսը վհատութիւն չէ, այլ՝ ներգործող եռանդ, հոգու տոկունութիւն և հաւատք, որ Գողգոթայի ճանապարհը տանում է դէպի յարութիւն, դէպի նոր ծնունդ: Քրիստոնէական յոյսը լաց ու կոծ չէ և ոչ էլ կրաւորական հոգեկան վիճակ, այլ՝ մղիչ ուժ դէպի աշխատանք, դէպի մաքառում, դէպի կեանք:

Ս. Գրիգոր Նարեկացին պատգամում է մեզ՝ «Երբ կեանքն ու մահը իրար մօտ յայտնուեցին, և լոյսը ծագեց խաւարից, լոյսը և կեանքը խափանեցին ինչ որ իրենց հակառակ էր, որովհետև իր բնութեամբ՝ խաւարը չի կարող տոկալ լոյսի առաջ, և մահը չի կարող գոյատևել այնտեղ, ուր գործում է կեանքը»: Թող այս պատգամը առաջնորդող ոգի հանդիսանայ մեր ժողովրդի կեանքի ճանապարհին:

Անցնող տարում մեր ազգի արդար սպասումների վրայ, մի պահ խաւար իջաւ, իսկ Դեկտեմբերի 7-ի երկրաշարժը մահաբեր հարուած հասցրեց մեր հայրենի աշխարհին:

Անցնող տարին մեր ազգի համար եղաւ Գողգոթայի ճանապարհ, գրեթէ 1915-ի մեծ Եղեռնը յիշեցնող:

Այո, այդ օրերին յիշեցինք ցեղասպանութիւնը 1915 թուի, յիշեցինք մեր պատմութեան բազում Գողգոթայի ճանապարհները, յիշեցինք բիւրա-

ւոր մեր նահատակների արեան ձայնը, յիշեցինք հայրենիքի փրկութեան համար մարտնչող հերոսների կանչը:

Յիշելով այդ բոլորը, այսօր մեր գիտակցութեան առաջ յառնում է սակայն պայծառ ստուգութիւնը, թէ մեր Եկեղեցին ու ժողովուրդը դարեր և դարեր շարունակ առաջնորդուել են ու յաղթանակել յարութեան յոյսով և վերածննդի եռանդով: Այսպիսով է, որ հայոց պատմութիւնը, աշխարհի պատմութեան հորիզոնի վրայ, հանդիսանում է մի դիւցազներգութիւն՝ վասն Յիսուսի և վասն հայրենեաց: Վարդանանց պատերազմը միշտ շարունակուել է:

Այսօր, երբ ոգեկոչում ենք Քրիստոսի Յարութեան յիշատակը, նրա փրկարար յաղթանակը ընդդէմ մահուան ու չարի կապանքների, եկէք, սիրելի հաւատացեալներ, լուսաւորենք մեր հոգիները կենարար յոյսով ու յաւատեսութեամբ, յաղթահարելու վճռականութեամբ այն ծով դժուարութիւնները, որոնց առաջ կանգնած էք դուք՝ հայրենաբնակ գաւակներդ մեր ազգի: Այո, պէտք է տոկալ ու յաղթահարել դժուարութիւնները, միասնական կարգապահ ճիգերով, կենդանի գործով, անսակարկ հայրենաշէն աշխատանքով, զի երկրաշարժից զոհուածների յիշատակը յաւերժացնելու լաւագոյն յուշարձանը վերաշինուած Մայր Հայաստանն է:

Մենք օրհնում ենք լաւատես ու հայրենաշէն աշխատանքի այդ ոգին:

Մենք օրհնում ենք միասնութիւնը և համերաշխ համախմբումը մեր ժողովրդի, եկեղեցական ու ազգային կեանքի մակարդակի վրայ, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Մենք օրհնում ենք միասնութիւնը և համերաշխութիւնը հայրենի ժողովրդի ծոցում, մայր հայրենիքի ու հայրենի պետութեան գերագոյն շահերի գիտակցութեամբ: Մայր հայրենիք և հայրենի պետութիւն իրարից անբաժան են:

Անցեալ Փետրուարի սկզբին Մեր այցը Միացեալ Նահանգներ, Տանն Կիլիկիոյ Աթոռի Գահակալ Գարեգին Բ. Կաթողիկոսի հետ, խորհրդանշեց ուժգին կերպով միասնութիւնը սփիւռքի հայութեան՝ մէկ Եկեղեցի, մէկ ժողովուրդ, մէկ մայր հայրենիք նշանաբանով, որ առաջնորդող ոգի պիտի մնայ նաև յետ այսու բոլորիս համար:

Այս տարուայ մեր Զատիկը, Յարութեան աւետիս լինելուց աւելի՝ յոյսի աւետիս է և հայրենաշէն երազանքների իրականացման սրբազան ուխտ:

Թող զարթնի ու մարմին և հոգի զգենու Վարուժանեան «Հայկեան հանճար»-ը, թող վերածնուի փլատակներից մեր վիրաւոր ժողովուրդը, հուժկու բազուկներով թող գործեն մեր ժողովրդի քաջարի բանուոր զաւակները, և թող իրենց փառագոյ քնարը վերցնեն մեր բանաստեղծները, մեր երաժիշտներն ու արուեստագէտները նոր խօսք ասելու տեսիլքներով, հորիզոններ ճեղքելով դէպի բարձունքները աստղերի:

Լսենք Վահան Տէրեանին՝

«Կանգնիր, անկեալ իմ ժողովուրդ,
Եւ հաւատա և տոկա,
Յաւիդ մէջ կայ մեծ խորհուրդ,
Եւ խաչեսղին մահ չկայ»:

Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի. ամէն:



ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂԻՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի Ուղղափառ Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՄԵՐԿՈՐԻՈՍԻՆ (Ադիս Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏԻՆ (Բուխարեստ),

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԶԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԳՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԹՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՄԱՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐԻՆ (Բքերքե),
Նորին Ամենապատվություն կարդինալ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
Գոկտ. ՀԵՐՄԱՆ ԳՐՈԵՐԻՆ (Վիեննա),
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵԻՆ (Փարիզ),
Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԲԵՐ ԳԵԿՈՒԻՐՏՐԵԻՆ (Լիոն),
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԷՐԻԿ ՄԵՍՏԵՐՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԿՈՒՆՈ ՊԱՅՈՒԼԱՅԻՆ (Տալլին),
Ֆրանչիսկյան միաբանության կուսակրոն
ԿԱՐԼՈ ՉԵԿԿԻՏԵԼԼԻԻՆ (Եղուսաղեմ),
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ, Նորին Սրբազնություն ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար
դոկտ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ (Ժնև),
Մխիթարյան ուխտի ընդհանուր քարտուղար Հայր
ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

Հայոց քրիստոնեական հավատքի կենտրոն Սուրբ Էջմիածնից և Մեր սրտից հարգալից սիրով բերում ենք Ձերդ Սրբությանը Մեր եղբայրական ողջույնը մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի հրաշալի Հարության ավետիսով:

Սուրբ Հարության ավետիսը, մանավանդ մեր Եկեղեցու ու ժողովրդի համար տխուր այս օրերին, հանդիսանում է հույսի և վերածննդի ավետիս:

Մենք երախտապարտ ենք Ձերդ Սրբության աղոթքների ու բարի մաղթանքների համար:

Թող միշտ հաղթող մեր Տերը Ձեզ պարգևի լուսառատ խաղաղ տարիներ և միշտ պայծառ պահպանի Ձեր մեծ Եկեղեցին իր պատմական առաքելության ճանապարհի վրա, մեր օրերի տագնապներով լի աշխարհին աստվածային լույսը բաշխելով:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց և մահուամբ զմահ կոխեաց». ամեն:

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Սուրբ Հարության ավետիսով հղում եմ Ձերդ Ամենապատվության Մեր եղբայրական ողջույնը և Մեր հայրական օրհնությունը Սուրբ Աթոռիդ ուխտապահ միաբանության, թեմական, վարչական մարմիններին և համայն ձեր հավատացյալ ժողովրդին ջերմ մաղթանքով, որ Փրկչին մեր Քրիստոսի լույս Հարության շնորհները բաշխվեն առատապես բոլորիդ ու բոլորին, անսասանություն Տիրախնամ Աթոռիդ, ի պայծառություն ձեր եկեղեցյաց և ի հոգևոր առավել շինություն ձեր հավատացելոց հոգևոր կյանքի: Սուրբ Հարության ավետիսը մանավանդ մեր Եկեղեցվո և ժողովրդի համար տխուր այս օրերին հանդիսանում է հույսի և վերածնունդի ավետիս:

Քրիստոս հարյավ ի մեռելոց: Ձեզ և մեզ մեծ ավետիս:

Սեր և խաղաղություն ընդ ձեզ: Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄՆ-Ի ՊՐԵԶԻԴԵՆՏ ՋՈՐՋ ԲՈՒՇԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Սպիտակ տանը, հիրավի, պատիվ էր ողջունելու Ձեզ և Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսին՝ ուղեկցությամբ արքեպիսկոպոս Մանուկյանի և Ռաբբի Ծնայերի:

Գիտցեք, խնդրեմ, որ Հայաստանի ավերիչ երկրաշարժից տուժածներին օգնություն ցույց տալու վերաբերյալ մեր զրույցները ես բարձր եմ գնահատում: Իմ կառավարությունը և ամերիկյան ժողովուրդը քաջ գիտակցում են, որ երկրաշարժի հետևանքները վերացնելու գործում ցուցաբերած մեր աջակցությունը գործնականապես կգոտեպնդի քաջակորով հայ ժողովրդին:

Խորին Ծնորհակալություն Ձեր սքանչելի նվերների առթիվ: Ես գուրգուրանքով կպահպանեմ հաղորդության հրաշագեղ սկիհը: Եվ թոռանս եմ հանձնել նրա համար Ձեր բերած նվերը: Գիտցեք, խնդրեմ, որ մենք այս ամենի մեջ տեսնում ենք Ձեր բարի կամքի արտահայտությունը, որը մեծապես բարձր ենք գնահատում:

Բարբարան իր ջերմ մաղթանքներն է միացնում իմ ողջույններին:

Հարգանոք՝

ՋՈՐՋ ԲՈՒՇ

Վաշինգտոն, Սպիտակ տուն,
2 մարտի 1989 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՎԻ ՀԱՆՁՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Խաղաղարարական գործունեության համար և ծննդյան 80-ամյակի առթիվ Նորին Սրբություն Վազգեն Ա Կաթողիկոսը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Սույն թվականի մարտի 31-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Մ. Ոսկանյանը հանդիսավոր պայմաններում հանձնեց բարձր պարգևը նախագահության սրահում:

Վեհափառ Հայրապետի գործունեության բարձր գնահատումի խոսք ասաց տիար Ոսկանյանը:

Ծնորհակալական պատասխան խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ծնորհավորական և ողջույնի խոսք ասաց նաև Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Պարգևի հանձնմանը ներկա էին Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. պրն. Ս. Հ. Վարդանյանը և տեղակալներ Ռ. Վ. Զարգարյանը և Լ. Բ. Սուջյանը:

Նորին Սրբության շքախմբի մաս էր կազմում նաև Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը:

ԹՂԹԱԿԻՑ



ՀԽՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1989 թվականի փետրվարի 27-ին Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Ս. Մարգարյանցը այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին և հանդիպում ունեցավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ:

Նորին Սրբությունը մեծարգո հյուրին պատմեց ԱՄՆ կատարած ուղևորության արդյունքների, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների բոլոր հայ համայնքների՝ քաղաքական, բարեգործական և մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների մասին: Վեհափառի առաքելության հիմնական նպատակն էր միավորել երկու Ամերիկաների բոլոր հայկական կազմակերպությունների ջանքերը՝ օժանդակելու համար դեկտեմբերի 7-ի երկրաշարժից ավերված քաղաքների ու գյուղերի վերականգնմանը: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց ամերիկահայ գաղութի կատարած մեծածավալ աշխատանքի համար և հույս արտահայտեց, որ աշխատանքը նույն եռանդով կշարունակվի:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ամերիկահայության օգնության իրականացման գործնական ուղիները:

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Ս. Մարգարյանցը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին իր հայրենասիրական մեծ աշխատանքի համար:

Հանդիպմանը մասնակցում էին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. պրն. Ս. Հ. Վարդանյանը, տեղակալ Ռ. Զարգարյանը և Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը:

ԹՂԹԱԿԻՑ



ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ
ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻԼԻԱ Բ-ԻՆ

Թբիլիսի·

Վշտահար սրտով մասնակցում ենք ձեր Եկեղեցու և ժողովրդի սուգին և աղոթում ենք ձեր մայրաքաղաքում զոհվածների հոգիների համար:

Թող բարին Աստված միշտ խաղաղության ու ապահովության մեջ պահի եղբայրական Վրաստանը և նրա ազնիվ ժողովրդին:

Ձեզ մաղթում ենք մխիթարություն Սուրբ Հոգով:

Եղբայրական ջերմագին Սիրով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
11 ապրիլի 1989 թ.



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(19 փետրվար 1989 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Հավատացյալ ժողովուրդ մեր, այսօր սուրբ պատարագի ընթացքում ընթերցվեց Սուրբ Ավետարանից այն հատվածը, որտեղ Հիսուս պատմում է մի առակ: Մի առակ, որը կոչվում է «Անառակ որդու» առակը: Տեր Տիրոջ՝ Հիսուսի Ավետարանի ամենանշանակալից առակներից մեկն է, որ նույնիսկ շատեր համարում են այն մարգարիտը առակների: Խոսքը վերաբերում է մի մարդու, որը անհնազանդ է գտնվում իր հորը նկատմամբ, թողնում է իր հայրենական տունը, հեռանում է ժառանգության բաժինը ստացած և անառակ կյանքի ճանապարհի վրա նա վատնում է իր ամբողջ ունեցվածքը, թշվառ և դժբախտ կյանքի մեջ է ընկնում և մի քանի տարիներ անց խորը զղջում է ապրում ե մտածում է վերադառնալ տուն, իր հորը մոտ, ծնկի գալ նրա առջև, ներողություն խնդրել և աղերսել, որ նրան գոնե մի ծառայի պաշտոն տա իր տնտեսության մեջ և այդպիսով քավե իր մեղքը: Եվ նա կատարում է այդ քայլը վստահ չլինելով, որ հայրը արդյոք ներելու է նրան, թե չի ընդունելու նրան իբրև հարազատ որդի: Սակայն պատահում է մի հրաշք, մի հրաշալի իրողություն, այն, որ հայրը ոչ միայն ընդունում է նրան գրկաբաց, ողջագուրվելով, արտասուքը աչքերին, այլ նաև հրամայում է, որ նրա ցնցոտիները վոխեն, լավագույն զգեստը դնեն իր ուսերի վրա և ընդունում նրան իբրև հարազատ զավակ:

Այս առակում, սիրելի ժողովուրդ, մանավանդ վեր է առնվում ներողամտության գաղափարը, որ քրիստոնեական հիմնական գաղափարներից մեկն է: Վրեժխնդիր չլինել, ներողամիտ լինել և հանցագործին նույնիսկ ներել, եթե նա իրապես զղջում է իր արած մեղքի կամ սխալմունքների համար: Եվ անառակ որդին իր զղջումի մեջ իրոք անկեղծ էր: Իրոք որ անկեղծ էր, ամբողջ հոգով նա խոստովանեց և զղջումի եկավ: Գթասրտության, ներողամտության ոգին է, որ ճառագայթում է այդ առակի միջոցավ, և բոլոր քրիստոնյաների համար հանդիսանում է ուղեցույց, կյանքի ուղե-

ցույց և նույնիսկ պատգամ, որպեսզի կյանքում բոլոր մակարդակների վրա տիրապետի ոչ թե անհամաձայնությունները և թշնամությունները, անկարգությունները, այլ ընդհակառակը, և՛ ընտանեկան կյանքում, և՛ հասարակական կյանքում, և՛ ժողովուրդների կյանքում տիրի ներքին համերաշխություն, փոխադարձ ներողամտություն, և այսպիսով թագավորի Աստուծո խաղաղարար պատգամը:

Ահա, սիրելի ժողովուրդ, մի քանի խոսքով իմաստը «Անառակ որդու» առակի:

Այսօր, սիրելիներ, ես ուզում եմ իմ խոսքը շարունակել, որպեսզի ձեզ տեղյակ պահեմ իմ ուղևորության մասին, որ կատարեցի այս ամսվա սկզբին դեպի Ամերիկա, դեպի Միացյալ Նահանգներ: Իմ ուղևորությունը անակնկալ էր, որովհետև ես Միացյալ Նահանգներ արդեն իսկ հովվապետական այցելություն տվել էի մեկ ու կես տարի առաջ: Սակայն այն աղետը, որ տեղի ունեցավ Հայաստանում, մեր մայր երկրում, ահավոր երկրաշարժը իր զարհուրելի հետևանքներով առիթ տվեց, որ ես գնամ վերստին դեպի Միացյալ Նահանգներ, այս անգամ հրավերովը այնտեղի եկեղեցական մեր կազմակերպությանց, իբրև հետևանք հոգեկան ցնցումին, որ ապրեց ամերիկահայ ողջ հայ ժողովուրդը, մեր երկրում պատահած երկրաշարժի պատճառով: Մի անգամ ևս, սիրելիներ, ես հաստատեցի, թե ամբողջ երկրագնդի վրա ապրող հայությունը, սփյուռքի հայությունը զգաց իրեն հարազատ զավակը մայր հայրենիքի իր ցավակցական արտահայտություններով, իր վշտակցությամբ և իր պատրաստակամությամբ՝ որևէ չափով օգնության ձեռք երկարելու մեր աղետյալ ժողովրդին, մեր սգավոր ժողովրդին:

Իբրև պատասխան՝ ամերիկահայ ժողովրդի այդ զգացմունքների և այդ պատրաստակամության, ես պարտք համարեցի գնալ անձամբ այնտեղ, իմ օրհնությունը տանել Ս. Էջմիածնից: Տանել հայաստանցի ժողովրդի եղբայրական սիրո ողջույնը և իմ քաջալերանքը, որպեսզի նրանց օգնության ծրագրերը հաջողությամբ պսակվեն: Իմ գնալը հատկապես երկու պատճառներ ուներ, նախ տանել և նրանց ներկայացնել ավերված քաղաքների և գյուղերի վերաշինության ծրագիրը, որպեսզի նրանք հստակ պատկերացումը ունենան, թե ինչ շինարարական գործերի, իրագործումների կարիքը ունի Հայաստանը այս պահուն, և ըստ այնմ նրանք իրենց միջոցներով իրենց մասնակցությունը բերեն հայրենաշեն այս գործին: Իսկ երկրորդ իմ մտածումն էր, որ այդ օգնության գործը կազմակերպվի Ամերիկայում ողջ հայության միասնական ճիգերով: Դուք գիտեք, որ Սփյուռքում ամեն տեղ կան բազմաթիվ հայկական կազմակերպություններ, միություններ, թե՛ եկեղեցական, թե՛ մշակութային, թե՛ կրթական, բարեգործական և քաղաքական, և հասարակական, ավելի քան 25—30 կազմակերպություններ Ամերիկայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում: Ես գնացի, որպեսզի նրանք միասնաբար աշխատեն, ոչ թե ցրվածությամբ և մեկը մյուսին անհաղորդ: Մանավանդ դժբախտության պահերին, մի ժողովուրդ պետք է ապացուցը տա իր ներքին միասնության, ամեն ուրիշ հարց մեկ կողմ թողնելով, ամեն վիճելի խնդիր արհամարհելով: Առողջ ժողովուրդները, իմաստուն ժողովուրդները կվարվեն այդպիսի առիթներով՝ միասնականությամբ, ձեռք-ձեռքի տված, մեկը մյուսին օգնական և ներողամիտ, եթե պետք լինի նույնիսկ: Ահա այդ էր գուցե իմ գլխավոր նպատակը: Եվ որպեսզի այդ լիությամբ իրագործվի, ես հրավիրեցի ինձ հետ միասին լի-

նելու արտասահմանի Հայ Եկեղեցու մեծագույն կենտրոնի գահակալը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ Հայրապետը, որպեսզի մեր երկուսի հովանավորության ներքո տեղի ունենա համախմբումը ողջ ամերիկահայության և սկզբնավորումը հայրենաշեն գործի: Եվ իրապես, նույն օրը, փետրվարի 8-ին, թե ես, իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս, թե Գարեգին Բ Հայրապետը՝ կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիո, ժամանեցինք Նյու Յորք, հանդիսավոր կերպով մուտք գործեցինք Ս. Վարդան Մայր Տաճարում բազմահազար հայ հավատացյալների ներկայությամբ, որտեղ բարի գալուստի խոսք արտասանեց մեզ Նյու Յորքի հայոց թեմի առաջնորդ Թորգոմ արքեպս. Մանուկյան, և ապա խոսք առանք մենք՝ ես և Գարեգին կաթողիկոս, ընդգծելով պատմական կարևորությունը մեր երկուսի այցելության, խորհրդակցության և միասնության: Բոլոր հայերը ոգևորված էին և խանդավառված այս միասնության ոգու դիմաց: Եվ թերթերը հայկական գրեցին, արձանագրեցին, թե այդ օրը պատմական օր եղավ ոչ միայն Միացյալ Նահանգաց Հայ Եկեղեցու կյանքում, այլ նաև համայն Սփյուռքահայության կյանքում: Այսպիսով ճշմարտապես իրագործվեց միասնությունը համայն ամերիկահայության: Փետրվարի 6-ին և 7-ին, տեղի ունեցավ խորհրդակցական մեծ ժողով Ս. Վարդան եկեղեցում, որին ներկա էին պատգամավորները հայ եկեղեցական բոլոր կազմակերպությունների Կանադայից, Միացյալ Նահանգներից, Բրազիլից, Ուրուգվայից և Արգենտինայից, նաև լիազոր ներկայացուցիչները բոլոր հայկական կազմակերպությունների, որոնց անունը քիչ առաջ հիշեցի արդեն: Մեծ համազգային ժողով էր, որի նմանը երևի տեղի չէր ունեցած գոնե այս վերջին 50—60 տարիների ընթացքում: Հենց այդպիսի ժողովի գումարումը հայ ազգային կյանքի հաղթանակներից մեկն էր հանդիսանում Սփյուռքի տարածքի վրա: Մեկ սկզբունք ղեկավարում էր մեզ բոլորիս, որ աշխարհի բոլոր հայերը, Հայաստանից սկսյալ մինչև հեռավոր անկյունները Սփյուռքի, կազմում են մեկ Եկեղեցի, մեկ ազգություն և մեկ Մայր Հայրենիք: Ահա այս սկզբունքով է, որ առաջնորդվեց ողջ ամերիկահայությունը և խորհրդակցությունները տեղի ունեցան այդ ոգով, այդ լույսի ներքո: Արտասանվեցին բազում հայրենաշունչ խոսքեր, կոչեր: Ներկա էին 26 հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Եվ ամեն մեկ կազմակերպություն շինարար գործի մի բաժին վերցրեց, քանդված քաղաքների և գյուղերի, բայց մանավանդ Ստեփանավան քաղաքի վերաշինության կապակցությամբ: Բարեբախտաբար, մեր պետական իշխանությունները անհրաժեշտ միջոցառումները արդեն ձեռնարկած են, դուք գիտեք այդ, ամենքը ծրագրված է 2—3, կամ 4 տարիների ընթացքում վերաշինել բոլոր քանդված քաղաքները և գյուղերը և այդ ընդհանուր ծրագրի մեջ մենք առաջարկեցինք, որ իրենց բաժինը վերցնեն Ստեփանավան քաղաքում, և այդպես էլ եղավ: 18 կազմակերպություններ արդեն ճշտեցին իրենց մասնակցության բաժինը, իսկ մնացած յոթը կազմակերպությունները մնաց որ ճշտեն մոտ ապագային: Ես կուզեի ձեզ հայտնել, որ Ստեփանավանում բոլոր տեսակի շինությունները պետությունը իր միջոցներով պիտի կառուցի, ամերիկահայերը իրենց օգնությունը պիտի մատուցեն, ստանձնելով մի շենքի ներքին կահավորումը և սարքավորումը: Ահա այս սկզբունքով է, որ ղեկավարվեց այնտեղ խորհրդակցական ժողովը: 18 կազմակերպությունները ստանձնեցին չորս հինգ դպրոց, չորս հիվանդանոց, հինգ մանկապարտեզ, ֆաբրիկա, հանգստյան տուն, որբանոց և այլ մի քանի շենքերի ներքին կահավորումը

և սարքավորումը: Այս խոստումները պաշտոնապես արձանագրվեցին, և հիմա մնում է, որ այդ կազմակերպությունների ներկայացուցիչները, հառաջիկա ամիսներին գան ուղղակի Մայր Հայրենիք և մեր պետական համապատասխան իշխանությանց հետ հարաբերության մեջ մտնելով, ճշտեն հստակ և ճշգրիտ կերպով իրենց օգնության բաժինը, սահմանը և կերպերը:

Ահա սիրելի ժողովուրդ, սրտցավ և հայրենասիրական վերաբերմունքը ողջ ամերիկահայ ժողովրդի:

Քանի որ գտնվեցինք Միացյալ Նահանգներում, տեղի ունեցան նաև բազմաթիվ եկեղեցական արարողություններ: Ես պատարագեցի ամսի 5-ին Նյու Յորքի մեծագույն ամերիկյան եկեղեցու մեջ, որտեղ ներկա էին ավելի քան 12 000 հայ հավատացյալներ, հոգեշունչ և բարեպաշտ մթնոլորտի մեջ: Հետո, կարևոր պաշտոնական հանդիպումներ էլ տեղի ունեցան, որի ամենակարևորը այն էր, որ մեզ ընդունեց, ինձ և Գարեգին կաթողիկոսին և մեր շքախումբի անդամներին, Միացյալ Նահանգների նորընտիր պրեզիդենտ Ջորջ Բուշը հարգալիր խոսքերով: Ամերիկայի պրեզիդենտը բարի քրիստոնյայի ոգով հետաքրքրվեց աղետի հետևանքների մասին, հիշեց իր որդու այցելությունը Հայաստան և հետաքրքրվեց հայ եկեղեցական կյանքով Հայաստանում:

Ապա այցելություն տվեցինք Խորհրդային Միության մեծ դեսպան պրն. Գուբինինին և իր կնոջը, որը մեզ ճաշի հրավիրեց մեր շքախումբի հետ միասին: Մեր միջև ջերմ մթնոլորտ կտիրեր, և խորհրդային դեսպանը այնքան հարազատ զգացումներով իր վշտակցությունը կներկայացներ մեր ժողովրդին մեր միջոցով: Մենք նաև հանդիպում ունեցանք Նյու Յորք քաղաքի քաղաքագլուխի հետ՝ Արթուր Գոչի հետ, որ՝ նույնպես անցավ բարեկամական մթնոլորտի մեջ: Տեղի ունեցան նաև այլ հանդիպումներ, այլ հարցազրույցներ, ժողովներ:

Եվ վստահ եմ, որ արտասահմանի հայությունը պատվով պիտի բերե իր աշխատանքի, իր օգնության բաժինը ընդհանուր մեր աղետյալ շրջանների վերաշինության գործին: Եվ վերջացնելե առաջ կուզեմ ձեզի մի բարի լուր էլ բերել, այն, որ մեր իշխանությանց բարյացակամ վերաբերմունքով և հավանությամբ Սպիտակ քաղաքը, որ գիտեք, ամբողջությամբ քանդված է, ավերակներից մի քանի կիլոմետր հեռու նոր Սպիտակ քաղաք պիտի կառուցվի: Մեր փափագին ընդառաջելով, համաձայնություն գոյացավ, որ Սպիտակ նորաշեն քաղաքը ունենա մի նորակառույց աղոթքի տուն, մի հայկական եկեղեցի, փառավոր ճարտարապետությամբ, որը նաև խորհրդանշի և հավերժացնի հիշատակը երկրաշարժի բոլոր զոհված հոգիների: Մենք, Հայաստանյայց Եկեղեցվո սպասավորներս և դուք՝ Հայաստանյայց Եկեղեցվո հավատացյալներ, ոգեպես մխիթարություն պիտի ապրեք այն օրը, երբ այդ ծրագիրը իրականանա, վերաշինվի նոր Սպիտակը և նրա կենտրոնում դեպ երկինք բարձրանա Ս. Խաչը նորակառույց հայկական տաճարի: Թող Աստված օրհնի ձեզ բոլորդ, թող Աստված օրհնի համայն ժողովուրդը մեր ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, ուժ, եռանդ և լավատեսության ոգի ներշնչի մեզ բոլորիս, որպեսզի համայն մեր ժողովուրդը կարճ ժամանակի ընթացքում ամոքի իր վերքերը և դիմի դեպի նոր կյանք, նոր վերածնունդ:

Ողջ լերուք զորացյալ Ս. Հոգով, այժմ և միշտ:

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԻՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԷՋՄԻԱԾՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Սույն թվականի մարտի 21-ին Էջմիածնի մշակույթի պալատում տեղի ունեցավ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիպումը Էջմիածնի, Արովյանի, Հոկտեմբերյանի, Աշտարակի, Ապարանի, Բաղրամյանի և Նաիրիի շրջանների ընտրողների հետ, որոնք Վեհափառ Հայրապետին առաջադրել են որպես ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երեսփոխան:

Վեհափառ Հայրապետի կյանքի և գործունեության մասին ելույթներով հանդես եկան ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Վարդանյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և ուրիշներ:

Հանդիպման վերջում հետևյալ բովանդակալից խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

1. Սիրելի քաղաքացիներ, ես գալիս եմ Սուրբ Էջմիածնից և բերում եմ ձեզ իմ հայրական ողջույնն ու օրհնությունը, իմ սրտից բխած բարի մաղթանքներով ուղղյալ ձեզ բոլորիդ:

Ես միշտ խոսել եմ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի բեմից, և ձեզանից շատերը եկել են այնտեղ ինձ լսելու: Այսօր ես եմ եկել ձեզ մոտ, ձեր ժողովրդական տան մեջ:

Սա մի նոր առիթ է ինձ համար իմ խոսքը բերելու ոչ միայն եկեղեցու բեմից, այլ նաև այստեղ մշակութային այս պալատում, ձեր տան հարկի տակ: Վստահեցնում եմ ձեզ, որ նաև այստեղ ձեր մեջ, ես ինքս զգում եմ ինչպես իմ տան մեջ, իմ հարազատների մեջ:

2. Ստեղծված այս առիթը, մեր երկրում մի նոր իրադարձություն է, մի նոր անկյունադարձ, Եկեղեցու և հասարակության միջև հարաբերությունների, Եկեղեցու՝ պետական կառույցի հետ հարաբերությունների զարգացման ճանապարհի վրա:

Եկեղեցին անցյալում ծանր օրեր ապրելուց հետո անձի պաշտամունքի շրջանում, վերջին տասնամյակներին թեև գրեթե բնականոն հարաբերություններ էին ստեղծվել Եկեղեցու և պետական կառույցի միջև, սակայն ինչ-որ մի պատնեշ դեռևս մնացել էր: Այդ պատնեշը այսօր վերացվել է մեր երկրում ծավալվող վերակառուցման, արմատական բարեփոխումների և ժողովրդական ըմբռնումների հառաջդիմությամբ:

Այսպիսով՝ Խորհրդային Միության մեջ բոլոր քրիստոնյա և կրոնական այլ դավանանքների պատկանող կազմակերպությունների ներկայացուցիչների ընտրվելու հնարավորությունը իբրև երեսփոխան (դեպուտատ) մեր բազմազգ երկրի երեսփոխանական բարձր ժողովում (դեպուտատների միութենական խորհուրդ), մի նոր և հատկանշական երևույթ է, որով նաև կրոնական կազմակերպությունները իրենց մասնակցությունն են բերելու երկրի ընկերային կյանքին:

3. Որով, նաև Հայաստանյայց մեր Եկեղեցին, իրավապես իր խոսքը ասելու օրինական հնարավորությունը պիտի ունենա ոչ միայն կրոնական ու եկեղեցական, այլ նաև ընկերային, բարոյական, դաստիարակչական, մշակութային և ազգամիջյան հարաբերությունների հետ կապված հարցերում:

Ես սրտանց ողջունում եմ այս նոր իրավիճակը և հայտնում իմ խորին գնահատանքը Խորհրդային Միության վերին ղեկավարության՝ վերակառուցման հետևանքով Եկեղեցու նկատմամբ ցուցաբերած ոգու համար: Շատ բան է բարեփոխվում մեզ մոտ օրեցօր մեր աչքի առաջ և դեռևս շատ բան էլ պիտի վերափոխվի, բարեկարգվի:

Այս վերափոխումների շարքում նոր իրադարձություն է Խորհրդային Միության երեսփոխանական մեծ ժողովում տեղ տալ նաև հոգևոր պետերին՝ քրիստոնյա, մահմեդական և այլ կրոնական հարանվանություններին, ինչպես նման կարգ կա նաև որոշ այլ երկրներում, ինչպես օրինակ Անգլիայում, որտեղ Անգլիկան Եկեղեցու պետը անդամ է Բրիտանական պառլամենտի Լորդերի պալատի:

Ավելացնեմ նաև այն կարևոր նորությունը, որ մեր պետությունը որոշել է նոր օրենք հրապարակել խղճի ազատության ու կրոնական գործունեության վերաբերյալ, որի նախագիծը ուղարկվել է նաև մեզ, որպեսզի ծանոթանանք և ի հարկին մեր առաջարկությունները ներկայացնենք:

Այս օրենքը պետք է հանդիսանա բացառիկ նշանակություն ունեցող պետական փաստաթուղթ: Խորհրդային Միության մեջ առաջին անգամ լինելով օրենքի ուժով Եկեղեցին հռչակվում է իրավական անձ, որով լայն հնարավորություններ են տրվում եկեղեցական կյանքի ազատ կազմակերպման:

4. Եկեղեցական-ազգային ու ընկերային կյանքի նոր ու ավելի ուրդար իրագործումների ճանապարհին, մեր Եկեղեցին իր հույսը դրել է վերակառուցման և ժողովրդավարական քաղաքականության հաղթանակի վրա: Ես հույս ունեմ, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մեր հայրենի հանրապետության ղեկավարության հետ համերաշխ գործակցությամբ, պիտի կարողանա քայլ առ քայլ հառաջդիմել ու հասնել նոր իրագործումների, ի

մասնավորի եկեղեցաշեն ու ազգանվեր իղձերի կենսագործման ի խնդիր:

Իրաք շնորհիվ վերին պետական կարգադրությանց, այդ-ենն իսկ վերաբացվել են չորս վանքեր ու վեց եկեղեցիներ Հայաստանում, Ռուսաստանում ե Արցախում: Ուրախ սրտով հայտնում եմ ձեզ, որ Արցախում արդեն իսկ գործելու են երկու վանքեր՝ Ամարասի (5-րդ դար), Գանձասարի (13-րդ դար) և Մարտակերտի ու Հադրութի եկեղեցիները: Մեր առաջ են դրված այժմ նրանց վերանորոգության ու բարեկարգման հրատապ հարցերը: Նաև այլ հայկական եկեղեցիներ վերաբացելու անհրաժեշտությունը կա, հավատացյալ ժողովրդի դիմումներով, թե՛ մեր սայր հայրենիքում ե թե՛ այլ հանրապետություններում, որտեղ ապրում են հոծ թվով զավակները մեր հավատացյալ ժողովրդի: Ես հետամուտ պիտի լինեմ, որպեսզի ա.դ օրինական առաջադրանքները իրականացվեն աստիճանաբար:

5. Մեր առաջ է դրվում նաե երկրաշարժից ավերված քաղաքների ե գյուղերի վերաշինությանը, մեր Եկեղեցու մասնակցությունը բերելու հրամայականը, օգնությամբը սփյուռքի հայ եկեղեցական, բարեգործական, մշակութային կազմակերպությունների ու նաև օժանդակությամբը արտասահմանի մեր բարեկամ և ցավակից քույր Եկեղեցիների, որոնք բոլորը տարբեր երկրներից այնքան սրտցավորեն պատրաստ են օգնելու վիրավոր Հայաստանին: Ինչպես գիտեք հավանաբար, այդ նպատակով փետրվարի սկզբին ես ուղևորվեցի դեպի Միացյալ Նահանգներ Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ, իմ օրհնությունը տանելու այդ օգնության գործի սկզբնավորման: Արդեն իսկ համապատասխան աշխատանքները կատարվում են և հետզհետե նվիրատու կազմակերպությունները հայկական կամ օտարազգի, ժամանելու են Հայաստան, որպեսզի Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսության միջնորդությամբ հարաբերությանց մեջ մտնեն մեր պետության վերաշինությանց հատուկ Հանձնաժողովի հետ, իրագործելու համար իրենց ստանձնած հայրենաշեն ծրագրերը: Իմ պարտականությունը պիտի լինի մոտիկից հետևելու ու քաջալերելու, որ վերաշինության այս ծրագրերը կյանքի կոչվեն մոտ ապագայում:

6. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմական առաքելությունն է նաև հոգևոր և ազգային կապը ու գործակցությունը պահպանել և զարգացնել մայր հայրենիքի ու սփյուռքի տարածքի վրա ապրող շուրջ երկու միլիոն հայերի միջև՝ եկեղեցական և ազգային-մշակութային մակարդակների վրա: Ես ուրախ եմ ձեզ ավետելու, թե մեր օրերում, հետզհետե առավել թափ է ստանում այդ նվիրական առաքելությունը, հետզհետե առավել շեշտվում է անհրաժեշտությունը միասնության պահպանման հայրենիքի և սփյուռքի հայերի միջև՝ մի՛ Եկեղեցի, մի՛ ազգություն և մի՛ մայր հայրենիք կարգախոսի ներքո: Վերջին իմ ԱՄՆ այցելությունը մի նոր առիթ ստեղծեց, որ համայն հայության մեջ ամրապնդվի այդ գիտակցությունը: Ես իմ պարտականությունն եմ համարում այդ ուղղությամբ շարունակելու իմ քարոզչությունը և իմ գործունեությունը, այդ նկատելով իմ սեպուհ պարտականությունը՝ եկեղեցական, ազգային ու հայրենասիրական տեսակետից:

7. Խորհրդային Միության երեսփոխանական օրենսդիր բարձրագույն ժողովին իբրև երեսփոխան մասնակցելու նոր առաջադրանքի լույսի ներքև, ես զգում եմ՝ Հայաստանյայց Եկեղեցու և մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարոյական հեղինակության էլ ավելի ամրապնդումը թե՛ մեր երկրում և թե՛ արտասահմանում: Ես վստահ եմ, որ Հայաստանյայց Եկեղեցին՝ միջեկեղեցական ու միջազգային կյանքի մակարդակի վրա հետզհետե իր արժանի

տեղը պիտի գրավի և պետք է գրավի: Կարծում եմ, որ այս նոր պայմաններում Սուրբ Էջմիածնի խոսքը առավել ուժգին պիտի հնչի միջեկեղեցական և արդի աշխարհը հուզող հարցերի լուծման առնչությամբ: Իմ պարտքը պիտի համարեմ մանավանդ ավելի գործուն կերպով մեր Եկեղեցու քարոզչությանը զարկ տալ աշխարհի խաղաղության պահպանման ու ազգամիջյան հարաբերությունների համերաշխության ի խնդիր: Մանավանդ փոքր ազգերը, ինչպես մենք հայերս ենք, առավելագույն չափով վտանգված կլինենք պատերազմների ընթացքում, անկախ պատերազմի ելքից: Մեր մայր հայրենիքը կա՛մ իր գոյությունը և զարգացումը կշարունակի մեր օրերի անվտանգ պայմաններում, կա՛մ պատերազմի դեպքում ոտքի կոխան կդառնա, մանավանդ նկատի ունենալով նրա աշխարհագրական դիրքը:

8. Նույնքան կենսական է մեր ժողովրդի համար ազգամիջյան հարաբերությունների համերաշխ զարգացումը և եղբայրական գործակցությունը, այն, ինչ մեր երկրում կոչվում է ինտերնացիոնալ ոգի, որ հիմքերից մեկն է խորհրդային բազմազգ պետության կազմավորման:

Ես վստահ եմ, որ եթե Լեռնային Ղարաբաղի հայության նկատմամբ այս ինտերնացիոնալ ոգին իրապես պահպանվեր, ոչ թե լոկ խոսքով, այլ գործով, մեզ կխնայվեին անցյալ տարվա տագնապները և Սումգայիթի ողբերգությունը: Անցյալում հին ղեկավարության օրերին, ինտերնացիոնալիզմի անվան տակ, ավա՜ղ, փաստորեն ի գործ էր դրվում ազգայնական մոլեռանդ քաղաքականություն Ղարաբաղի հայության նկատմամբ: Ղարաբաղի ողջ հայության պահանջը արդար էր և սահմանադրական ու հարազատ արտահայտությունը ինտերնացիոնալ ոգու կենսագործման, ազգային ինքնորոշման իրավունքի հիման վրա: Այսօր մենք գոհ ենք անշուշտ, որ արցախցիների արդար պահանջները կարևոր չափով բավարարություն գտան, մեզ բոլորիս հայտնի ծանոթ վերջին տնօրինումներով:

Մենք հայերս ուր էլ որ գտնվենք, Հայաստանում թե նրա սահմաններից դուրս, պետք է մերժելի գտնենք ամեն տեսակի մոլեռանդություն, ծայրահեղություն, ազգայնական թե կրոնական: Մենք տեսնում ենք մեր օրերին, թե աշխարհի տարբեր վայրերում ինչպիսի ողբերգական կացություններ, արյունահեղություններ են տեղի ունենում, իբրև հետևանք կրոնական կամ ազգայնական մոլեռանդությունների: Ամեն տեսակի մոլեռանդությունները ապագա չունեն և չեն կարող ունենալ մարդկային աշխարհում: Նրանք վատառողջ ու անցողական երևույթներ են: Ամեն տեսակի մոլեռանդություն տգիտություն է և հետադիմություն, երբեմն նույնիսկ բարբարոսություն:

Ապագան պատկանում է ազգությունների խաղաղ ու համերաշխ գործակցության, համբերատար երկխոսության և շինարար գործակցության, կրոնների, ազգությունների ու պետությունների միջև: Այս հիմնական ճշմարտությունները ես պարտք եմ համարում հիշեցնել մեր ժողովրդի զավակներին և մեր մտավորականներին:

Ինչպես ես արտահայտվել եմ Ռոստովում կրոնական ժողովի ընթացքում անցյալ տարի մայիսի 4-ին՝

«Ինտերնացիոնալ ոգի նշանակում է Խորհրդային Միության ազգային հանրապետությունների և ամեն մի հանրապետության տարածքի վրա բնակվող ազգությունների միջև խաղաղ գոյակցություն, նշանակում է, որ ամեն ազգություն հարգի մյուսի ազգային ինքնությունը և արժանապատվությունը, որ ամեն ազգություն հարգի մյուսի ազգային լեզուն ու մշա-

կույթը, և կրոնական դավանանքը: Այլապես ինտերնացիոնալիզմի գաղափարը կարող է վերածվել պատրանքի և խաբկանքի: Իմ խոսքը մասնավորելով անդրկովկասյան ժողովուրդներիս, կուզենայի հաստատել, թե հատկապես հայ, վրացի ու ադրբեջանցի ազգություններս, կոչված ենք միատեղ ապրելու խաղաղ ու համերաշխ, փոխադարձ հարգանքով, միշտ կողք-կողքի, երեքս իրարից անբաժան, երեքս երբեք անբաժան ռուս եղբայր ժողովրդից: Սա հրամայականն է մեր պատմության ու մեր ճակատագրի»:

Իմ խորհուրդն է և հորդորը բոլորին ուղղյալ՝ պահպանել զգացմունքների հավասարակշռություն, ողջմտություն, կարգապահություն և գործարար հայրենասիրություն:

9. Ցանկանում եմ մի քանի խոսք ասել նաև Խորհրդային Միության մեջ վերջին տարիներին ծավալվող վերակառուցման գործի ընթացքի մասին: Ես սրտանց ողջունում եմ հեղափոխիչ այս զարգացումը, որն անհրաժեշտ էր և վաղուց սպասելի: Վերակառուցումը, բարեկարգումները, տնտեսական, ընկերային, կրոնական, մշակութային կյանքում, կոչված են հետզհետե նոր ճանապարհներ գտնելու, դուրս բերելու համար երկիրը անձի պաշտամունքի և լճացման տարիների ազդեցություններից ու հետևանքներից: Ընկերվարական գաղափարախոսության և ընկերային կառույցին պետք է տալ նրանց հարազատ համապատասխան դիմագիծը, հոչակումովը և կենսագործումովը մարդու ու ազգությունների ինքնորոշման իրավունքների: Մենք ընդգծում ենք այս ճշմարտությունը, մանավանդ որ ընկերվարական գաղափարախոսությունը իր հարազատ էությամբ, ընկերային բարոյական տեսակետից կարևոր չափով համապատասխանում է Քրիստոսի Ավետարանի պատգամներին: Պետք է ուշադիր կարդալ Ավետարանը և մանավանդ առաջին դարերի քրիստոնյա հեղինակների երկերը՝ համոզվելու համար այս ճշմարտությանը:

Ես ողջունում եմ բոլոր այն քաղաքացիներին և հեղինակներին, որոնք հրապարակով լծված են անցյալի սխալների քննությանը, ի պաշտպանություն վերակառուցման գործի հաջողության: Այդ քննադատության ոգին, այո՛, ողջունելի է, սակայն ես կուզենայի ավելացնել, թե բավական չէ վերակառուցումը պահանջել միայն ուրիշներից կամ ղեկավարներից: Որպեսզի վերակառուցման փրկարար քաղաքականությունը ամբողջապես հաջողվի, ամեն մի քաղաքացի, նաև ինքը անհրաժեշտորեն պետք է վերակառուցվի: Ընկերությունը բաղկացած է անհատ քաղաքացիներից, հետևաբար ընկերության բարեկարգումը կախում ունի նաև անհատ քաղաքացիների բարեկարգումից: Շատ հեշտ է ուրիշներին քննադատել, շատ դժվար է սակայն անկեղծ ինքնաքննադատությունը, սեփական թերությունների խոստովանությունը, որը քրիստոնեական բարոյականի հիմքերից մեկն է հանդիսանում: Այլապես կարող է ստացվել այն, ինչ մեր Սուրբ Գրքում պատկերավոր կերպով ասված է, թե՝ «տեսնում ես ուրիշի աչքի շյուղը, բայց քո աչքի գերանը՝ ոչ»: Հին ճշմարտություններ են սրանք, որոնք այժմեական են մեր օրերում ամեն տեղ աշխարհի վրա: Երկու հազար տարի առաջ Հիսուս մեղադրում էր նման հիվանդագին երևույթները, ասելով՝ «Վայ ձեզ փարիսեցիներ, կեղծավորներ, որ սրբում եք բաժակի ու սկավառակի արտաքինը, իսկ ներքուստ մնում եք լի հափշտակությամբ և անիրավությամբ: Փարիսեցի կույր, նախ սրբիր բաժակի ներսը, որպեսզի արտաքինն էլ լինի սուրբ» (Մատթեոս ԻԳ 25—26):

10. Սիրելիներ, ես իմ հույսը դրել եմ, այո՛, վերակառուցման ու ժողովրդավարական քաղաքականության ամբողջական հաղթանակի վրա: Դա պիտի լինի հաղթանակը խորհրդային մեծ երկրի տնտեսական կյանքի արմատական բարեկարգման, հաղթանակը աշխատավոր ժողովրդի կյանքի պայմանների բարելավման, հաղթանակը մարդու և ազգությունների իրավունքների հռչակման:

Վստահ եղեք, թե իմ ուժերի և իմ հնարավորությունների չափով պիտի աշխատեմ իմ համեստ նպաստը բերել ի խնդիր այդ հաղթանակի իրագործման: Վերակառուցման և ժողովրդավարության գործը արդար է ու հրամայական, նաև Հայ Եկեղեցու համար: Ջի Քրիստոսի Ավետարանը ևս մի պատմական սրտառուչ կոչ է՝ ընկերային արդարության, մարդասիրության ու խաղաղության:

Մաղթում եմ ձեզ բոլորիդ վերանորոգման ուժեր ու ազնիվ ներշնչանքներ, ձեր հայրենաշեն աշխատանքի ճանապարհին, նաև բարօր ու երջանիկ կյանք ձեր ընտանեկան հարկերի տակ:

Մնում եմ աղոթող, որ մեր մայր հայրենիքը կարճ ժամանակ անց ազատվի երկրաշարժի հետևանք՝ մեր օրերի ծանր դժվարություններից և դիմավորի նոր արշալույս, նոր իրագործումներով, նոր երազանքներով, նոր երգերով: Ամեն:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռս խոր գոհունակութեամբ ի գիտութիւն հաղորդում է մեր ժողովրդին, թէ համաձայն հաստատուած կարգի Մարտ ամսի ընթացքում Հայաստան ժամանեցին ստորև նշուած քոյր Եկեղեցիների ներկայացուցիչները և Մայր Աթոռիս միջնորդութեամբ համաձայնագրեր կնքեցին վերաշինութեանց պետական Յատուկ Յանձնաժողովի հետ, ստանձնելով ներքոյիշեալ յանձնառութիւնները.

1. Զուիցերական Բողոքական վերակազմեալ Եկեղեցի—**Զիւրիխ**
   ա. Քար կտրող ու տաշող մեծադիր հինգ մեքենաներ, մէկ միլիոն դոլլարի արժողութեամբ.
   բ. Մէկ մանկապարտէզ Ստեփանաւանում:
2. Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ—**Ժընեւ**
   գործակցութեամբ կաթոլիկ «Քարիթաս» և Բողոքականյան «Դիակոնիա» կազմակերպութիւնների.
   ա. Տնաշինական մի գործարանի ամբողջ սարքաւորումը և մեքենաները բնակելի առանձնատներ արտադրելու և մի մանկապարտէզ; առաջին 100 բնակարանների համար, շուրջ եօթ միլիոն դոլլար:
   բ. Մի հիւանդանոց-ծննդատուն ներքին ամբողջ սարքաւորումներով և կահաւորումներով 100—120 հոգու համար, հինգ միլիոն դոլլարի արժողութեամբ.
3. Սբ. Էճիտիոյ Եկեղեցու համայնք—**Հռոմ**
   ա. Երևանի Օնկոլոգիայի հիւանդանոցի համար յատուկ գործիքներ, կէս միլիոն դոլլար արժողութեամբ.
   բ. Աղէտեալների համար մէկ հազար շարժական տաքացնող վառարաններ և այլ օգտագործելի պիտոյքներ:
   Վերոյիշեալ գործիքները և իրերը ստացուել են Մայր Աթոռում Մարտի 21-ին:
4. Կաթոլիկ «Քարիթաս» կազմակերպութիւն—**Վիեննա**

ա. Պատրաստի մի ֆիննական սառնարան-շինություն ութսուն տոննա սննդամթերքի համար և կամ Նալբանդ գիւղի համար պատրաստի 100 տնակներ, շուրջ կէս միլիոն դոլլարի արժողութեամբ:

5. Վիեննայի Kurier թերթի հանգանակութեամբ 70 պատրաստի տնակներ, 3 միլիոն դոլլարի արժողութեամբ:

6. Ժընևի հայ գաղութի ջանքերով, Զուիցերացի ժողովրդի հանգանակած միջոցներով՝

ա. Սարքաւորումներ և մեքենաներ պանիրի մի գործարանի համար Ստեփանաւանում, երկու միլիոն դոլլարի արժողութեամբ:

բ. Սարքաւորումներ, մեքենաներ մի տեքստիլ (հիւսուածքեղէնի) ֆաբրիկայի համար, մէկ միլիոն դոլլարի արժողութեամբ:

Մայր Աթոռս յայտնում է իր ջերմագին երախտագիտութիւնը վերոյիշեալ բարերար կազմակերպութիւններին և բոլոր-նուիրատուներին:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
25 Մարտ 1989 թ.

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՑՑԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

1988 թվականի դեկտեմբերի 7-ին, վերջին հազար տարիների ընթացքում այս էլ քանիերորդ անգամ, շարժմունք եղավ Հայաստանում: Այս անգամ անողոք երկրաշարժը հարվածեց Հայաստանի ամենաբերրի շրջաններից մեկը՝ Շիրակ—Գուգարք—Լոռի ուղղությամբ: Կործանվեց խինդ ու սրամտությամբ ապրող Լենինականը, հիմնահատակ եղավ հացառատ Սպիտակը, ավերներ ունեցան անտառաշատ Կիրովականն ու Ստեփանավանը, և խոնարհվեցին տասնյակ շեն ու ավանդապահ գյուղեր: Մեկ ակնթարթում մահը սփռվեց Հայոց հյուսիսականաց կողմանց կենդանի ու շենշող բնակավայրերում և խլեց տասնյակ հազարավոր կյանքեր. կյանք ծերի ու մանուկի, կյանք՝ հույսի ջահը ձեռքին իր ժողովրդի ապագան որոնող երիտասարդության, կյանք բոլորի՝ հավասարապես:

Սև վարագույր իջավ Մայր Հայաստանի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վրա: Ամենայն Հայոց Հայրապետը տագնապած սրտով աղոթեց առ Աստված. «Անցո, Տէր» այս դառնության բաժակը իմ տառապած ժողովրդի գլխից: Եվ Վեհափառը անմիջապես լծվեց տենդագին աշխատանքի՝ շուտափույթ անմիջական օգնություն հասցնելու աղետյալ ժողովրդին՝ գոնե մնացածներին փրկելու համար: Շուտով սկսեցին հեռագրերը, հեռախոսազանգերը ի սփյուռս աշխարհի տարտղնված հայ ազգի զավակներից,

որոնք առաջարկում էին իրենց օգնությունը, խորհուրդ էին ուզում՝ ինչպես գործել, տագնապում էին իրենց հայրենակիցների ճակատագրով: Վեհարանը դարձավ կարծես գործունեության կենտրոն, ուր խաչաձևվում էին ու բաշխվում երկրաշարժի մասին տեղեկություններն ու սփյուռքահայության պատրաստակամությունը՝ արագ օգնության ձեռք մեկնելու:

Երկրաշարժի սարսափելի հետևանքների բացահայտման հետ հետզհետե աճագնացան կանչերը, և հրամայական դարձավ համախմբել, հունի մեջ դնել և ի մի բերել սփյուռքահայության օգնության հնարավորությունները: Օգնում էին բոլոր գաղութները անխտիր, ով ինչքան կարող էր, ով ինչով կարող էր: Սակայն պետք էր կազմակերպել, համատեղել այդ օգնությունները, որոնք ավելի անհրաժեշտ էին դառնալու վաղը՝ ավերված քաղաքներն ու գյուղերը վերականգնելու համար:

Այդ մտահոգությամբ էլ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը որոշեց մեկնել ԱՄՆ՝ տեղում ապահովելու համար բոլոր հայկական՝ կրոնական և աշխարհիկ, քաղաքական, մշակութային, բարեսիրական կազմակերպությունների համագործակցությունը, կուտակված և կուտակվելիք զոհողությունները մեկ ընդհանուր նպատակի մեջ կիրառելու համար՝ որպես Հյուսիսային և Հարավային Ամերիկաների հայության ներդրում վերականգնման աստվածահաճո գործին:

ՄԵԿՆՈՒՄ ԵՐԵՎԱՆԻՑ

Փետրվարի 1-ին, կեսօրին, Մայր տաճարում լուռ, ծանր տրամադրություն էր: Առաջին անգամ լինելով Ամենայն Հայոց Հայրապետը Մայր Աթոռից մեկնում էր այսքան կոտրված սրտով, որպես Ամենայն Հայոց **մխիթարիչ կաթողիկոս**՝ ցավակցություն և մխիթարություն տանելու Սփյուռքի հայության: Մայր տաճարի լուսարարապետ Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը «Բարի ճանապարհ» մաղթեց, և ժողովուրդը «Ամէն» ասաց ու հոգոց հանեց:

Նորին Սրբությանը ուղեկցում էր ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Գրիգոր Խանջյանը:

Օդանավն անգամ կարծես այսօր դանդաղ էր թռչում:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Ինքնաթիռը վայրէջք կատարեց Մոսկվայի «Վնուկովո» օդանավակայանում: Տխուր էին նաև դիմավորողները: Հանդիսավորություն չկար: Լուռ էին բոլորը: Միայն «Բարի գալուստ» և հետո՝ հյուրանոց:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՐՈՆԻՑ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Փետրվարի 2-ին Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնից գործերի խորհրդի նախագահ տիար Կ. Մ. Խարչևի հետ:

Տիար Խարչևը խոր վշտակցություն հայտնեց Վեհափառ Հայրապետին

աղետի առթիվ և պատարաստակամություն արտահայտեց աջակցել Նորին Սրբության բոլոր ջանքերին՝ երկրաշարժի հետևանքների շուտափույթ վերացման համար: Վեհափառ Հայրապետը ականատեսի վկայությամբ ներկայացրեց աղետի տարողությունը, բացատրեց իր՝ ԱՄՆ այցելության նպատակը և հույս հայտնեց, որ իր միաբարական պատգամը որոշ չափով կամրջի հայ Սփյուռքի հոգեխոով ցավը՝ հայրենիքից հեռու, հարազատ եղբայրներին անմիջական օգնության հասնելու հնարավորությունից զուրկ: Տիար Խարչևը մաղթեց, որ Նորին Սրբության առաքելությունը պսակվի հաջողությամբ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Փետրվարի 2-ի երեկոյան ԱՄՆ-ի դեսպանատանը կազմակերպված էր մեծահանդես ընդունելություն ի պատիվ ամերիկացի նշանավոր քաղաքական, հասարակական և եկեղեցական գործիչ Ջեյսի Ջեկսոնի, որը մի քանի օր առաջ ժամանել էր Հայաստան, նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածին, եղել էր աղետի վայրերում, բաժանել հայ ժողովրդի ցավն ու կորուստը ու խոստացել էր ապահովել ամերիկյան հասարակության ամբողջական աջակցությունը՝ երկրաշարժից տուժած վայրերում նոր կյանք վերականգնելու գործում:

Ընդունելությանը, ի թիվս օտարերկրյա բազմաթիվ դեսպանների և Խորհրդային Միության բարձրաստիճան պաշտոնյաների, հրավիրված էր նաև Ամենայն Հայոց կաթողիկոսը: Ելույթ ունեցան Խորհրդային Միությունում ԱՄՆ-ի դեսպան պրն. Մեթլոքը, քարոզիչ Ջեյսի Ջեկսոնը և ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարի տեղակալ պրն. Պետրովսկին: Երեք ատենախոսներն էլ խոսեցին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի մասին, ընդգծեցին համաշխարհային հասարակայնության համագործակցության անհրաժեշտությունը, որպեսզի հնարավոր լինի ամենակարճ ժամանակամիջոցում բուժել երկրաշարժի պատճառած վերքերը: Դրվատական խոսքեր ասվեցին հայ ժողովրդի ոգեկան ամրության և Հայ Եկեղեցու դերի մասին, ի մասնավորի ընդգծվեց Վեհափառ Հայրապետի բոլորանվեր գործունեությունը տագնապի այս պահին: Շնորհակալության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը:

ՄԵԿՆՈՒՄ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Փետրվարի 3-ին «Շերեմետևո—2» օդանավակայանից Մոսկվայից մեկնեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ ուղեկից ունենալով Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ Տիրան եպս. Կյուրեղյանին և պրն. Գրիգոր Խանջյանին:

ԺԱՄԱՆՈՒՄ ՆՅՈՒ ՅՈՐՔ

Փետրվարի 3-ին, ուրբաթ, հետմիջօրեի ժամը 14.30-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ժամանեց Նյու Յորքի Ջոն Քենեդիի անվան միջազգային օդանավակայան: Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել

Ողջույն սուրբ վիմագրի ցեղակցության մեջ գտնվող մարդուն մեր կողմից ի ցեղակցություն

Օրհնութիւն Մայր Հայրենիքէն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն

Զույգ կաթողիկոսները ԱՄՆ-ի հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների հետ

Հյուսիսային և Հարավային Ամերիկաների թեմական առաջնորդներ Տ. Թորգոմ և Տ. Վաչե արքեպիսկոպոսները, Տ. Մեսրոպ, Տ. Տաթև, Տ. Գրիգորիս սրբազանները, ինչպես նաև Նյու Յորքի հայոց առաջնորդարանի հոգևոր դասը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով նույն օրը իր շքախումբով Նյու Յորք ժամանեց նաև Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը՝ համատեղ գործունեությամբ միավորելու համար ամերիկահայության ջանքերը՝ առավել արդյունավետ օժանդակություն կազմակերպելու համար:

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ Ս. ՎԱՐԴԱՆ ՏԱՃԱՐՈՒՄ

Փետրվարի 3-ի երեկոյան Ս. Վարդան տաճարի «Կոմիտաս», Նյու Յորքի «Համազգային», ինչպես նաև երեք այլ եկեղեցիների դպրաց դասերից կազմված երգչախմբի «Հրաշափառի» և «Ուրախ լերի» հզոր հնչյունների տակ և Հայրապետական մաղթերգի երգեցողությամբ երկու կաթողիկոսները առաջնորդվեցին Ս. Վարդան Մայր տաճար, ուր հավաքված էր ավելի քան երկու հազար հոգուց բաղկացած մի բազմություն, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, մամուլի թղթակիցներ:

Զույգ Վեհափառների համաքայլ մուտքը տաճար այնքան ոգևորիչ էր, որ հավատացյալների շարքերը պայթեցին որոտընդոստ ծափողջույնով. պատմական պահ էր վերջին տարիների Հայ Եկեղեցու կյանքում ընդհանրապես և ամերիկահայ գաղութի կյանքում մասնավորապես:

Երկու կաթողիկոսներին բարի գալուստի խոսք ասաց ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, «Կու գաք երկրաշարժի օգնության և հայ ժողովուրդի մխիթարության տարբեր միջոցներ որոնելու, կործանած հայրենի տունը վերակառուցելու: Կարիքը ունինք Ձեր մխիթարության»*: Վերջում Սրբազան հայրը, դիմելով Վազգեն Ա կաթողիկոսին, ասաց. «Վեհափառ Տեր, Ձեր զավակները հուզումով կողջունեն Ձեր գալուստը և կմաղթեն արևշատ տարիներ: Կխնդրեինք բաշխել Ձեր օրհնությունը»:

Ապա, ոգեշնչված՝ տաճարում տիրող համահայկական ոգևորությունից, Ամենայն Հայոց Հայրապետը տվեց իր պատգամը.

«Ի՞նչ մխիթարություն և ի՞նչ օրհնություն, որ շրջապատված եմ ձեզմով: Իմ հոգեկան խոր մխիթարությունը կապրիմ Տ. Տ. Գարեգին Բ Հայրապետի ներկայությամբ: Եկած ենք նույն զգացումներով, նույն հույսերով, որպեսզի միասին ձեռք-ձեռքի տանք և ապահովենք ամերիկահայության մասնակցությունը Հայաստանի վերակառուցման:

Կհավատամ, որ մեր երկուքի ներկայությունը և գործակցությունը պիտի ստեղծե նոր մթնոլորտ, որ պիտի առաջնորդե մեզ մինչև երկու եկեղեցիներու վերամիավորում: Գուցե տակավին այդ մեկը ժամանակի կկարոտի: Սակայն, այլևս ժամանակն է, որ փոխադարձ սիրով և հասկացողությամբ ճանապարհը բացվի, որ մեզի տանի այն կետին, որ աշխարհի բո-

* Այս հատվածի խոսքերի ուղղակի մեջբերումները առնված են «Նոր կեանք» շաբաթաթերթի 1989 թ. փետրվարի 9-ի համարից:

Երկու վեճարանները «Հրաշափառ»-ով մուտք են գործում Նյու Յորքի Ս. Վարդան տաճար
(3 փետրվար 1989 թ.)

լոր հայկական եկեղեցիներում դոները բաց ըլլան հայ բոլոր եկեղեցականներում և հայ հավատացյալներում առջև: Բոլորս պիտի սպասենք վերամիավորման լրումի պահին»: Ապա Նորին Սրբությունը խոսելով երկրաշարժի մասին ասաց. «Մենք հոգեպես այնքան տխուր ենք, մեր սրտերը այնքան լեցուն վշտով, որ կարելի չէ մխիթարությամբ ծածկել»: Վեհափառ Հայրապետը հուզումով պատմեց աղետյալ վայրեր կատարած իր այցելությունների մասին՝ Էնինական, Սպիտակ, Ստեփանավան և Կիրովական. «Դժվար է այս օրերում Հայաստան ապրիլ և տեսնել աղետյալ ժողովուրդին պատկերը: Անոնք կուզեն մնալ հայրենի հողին վրա: Հեռացողները կվերադառնան. լսեցի՝ շատերը: Անոնք ունին բողոք, խնդրանք, աղերս: Ամեն մեկը ունի իր ողբերգությունը»:

Վեհափառը սրտառուչ մանրամասներ պատմեց և ընդգծեց մանավանդ հայ ժողովրդի կամքն ու վճռականությունը՝ պատվով դուրս գալու այս ամենակործան արհավիրքից: Խոսեց Խորհրդային Միության կենտրոնական կառավարության մեծածախս ներդրումների և Խորհրդային Միության ժողովուրդների աջակցության, արտասահմանյան բազմաթիվ երկրների վերշտակցության և գործարար օժանդակության մասին, ապա և սփյուռքահայության միլիոնանոց զանգվածների եղբայրական զորակցության մասին և խոսքն ավարտեց ասելով. «Կբերեմ ձեզի մեր ժողովուրդին համար կամքը՝ հաղթահարելու դժվարությունները: Վստահ եմ, որ մեր առաքելությունը հաջողությամբ կպսակվի: Ողջ լերուք»:

Ապա խոսք ասավ Գարեգին Բ կաթողիկոսը. «Այս պահը իմ կյանքի գերագույն երջանկության պահերեն մեկն է: Կողք-կողքի Վազգեն Ա կաթողիկոսին հետ Ս. Վարդան Մայր տաճարին մեջ. գերազանցապես գոհունակություն կհայտնեմ Աստուծո, որ այս պահը շնորհեց:

Պատմությունը անցյալին հետ կնույնացնենք, այս պահուն սակայն մենք պատմությունը կկերտենք»:

Ապա Կիլիկյան Աթոռի գահակալը խոսեց զույգ Վեհափառների համատեղ կոչի մասին: «Պահպանենք Հայաստանը,—շարունակեց Գարեգին Վեհափառը,—որովհետև չունինք երկու Հայաստան, պահպանենք Եկեղեցին, որովհետև չունինք երկու Եկեղեցի, այլ միայն մեկ Եկեղեցի: Մեկ Հայաստան, մեկ Եկեղեցի, մեկ հայություն: Այս է մեր երկիրը, այս է մեր Հայաստանը. մեկ Հայրենիք, մեկ միասնականություն»:

«Մեր եղբայրը Վազգեն կաթողիկոս,—ընդգծեց Մեծի Տանն Կիլիկիո գահակալը,—ըսավ որ մեր երազն է՝ խտրություն չդնել: Վեհափառ, ես այս գաղութին մեջ ապրած եմ. այս վայրկյանը իմ երազն եղած է. եկեք միասին գործենք, չսպասենք. հիմա է պահը: Տարակարծություններ ունեցած ենք պատմության ընթացքին, որոնք դարմանված են: Հիմնականը ազգն է, հիմնականը Եկեղեցին է: Կոչ կընեմ բոլորին, կղերականներում և հավատացյալներում. ոչ մեկ խտրություն դրեք. գացեք այն եկեղեցիները որոնք Էջմիածնականն են: Ասիկա նաև ժողովուրդին ցանկությունն է»:

Ապա Գարեգին կաթողիկոսը խոսեց երկրաշարժի մասին և եզրակացրեց.

«Աշխարհը արթնցավ Հայաստանի համար: 97 երկիրներե օգնություն հասավ Հայաստան: Պետք է արժեցնենք աշխարհին մեզի տված վկայությունը: Պզտիկ հարցերով մեր կյանքը չթունավորենք: Աշխարհին պետք է զգացնենք, որ Հայաստանը մերն է: Ինչ որ մենք պիտի ընենք, դուրսեն

Հայրապետական պատարագ Նյու Յորքի Սեմտ Ջոն Դը Դիվայնը տաճարում
(5 փետրվար 1989 թ.)

տրված նպաստ չէ: Մեր տունն է, որ կշինենք: Այս գիտակցությունը պետք է ծագի մեր մեջ»*:

Երկու կաթողիկոսների պատգամից հետո հնչեց քառաձայն «Հայր մերը», ե հավատացյալները գոհունակ սրտով, միասնական կամքով և ոտքի կանգնելու լավատեսական վճռականությամբ հեռացան Ս. Վարդան Սպարապետի անունը կրող Տաճարից:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փետրվարի 4-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հյուրանոցի իր հարկաբաժնում խորհրդակցական հանդիպումներ ունեցավ նախ Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսների հետ: Ապա, օրվա երկրորդ կեսին Ամենայն Հայոց Հայրապետին այցելեց Գարեգին Բ կաթողիկոսը՝ Կիլիկյան Աթոռի եպիսկոպոսների հետ: Վազգեն Ա Վեհափառը բոլորին մանրամասն ներկայացրեց այցելության ծրագիրն ու իր առաքելության նպատակը՝ միասնական ջանքերով առավելագույն արդյունքի հասնելու համար:

Իսկ փետրվարի 5-ին, առավոտյան, Վեհափառ Հայրապետը ընդունեց ՀԲԸՄ ներկայացուցիչներին՝ տիկին Լուիզ-Սիմոնի գլխավորությամբ: Ապա Նորին Սրբությանը ներկայացան Բրազիլիայի հայ գաղութի ներկայացուցիչները Տաթև եպս. Ղարիպյանի գլխավորությամբ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ST. JOHN THE DIVINE ՏԱՃԱՐՈՒՄ

Փետրվարի 5-ին, կիրակի օրը, ավելի քան տասնհինգ հազար հայ հավատացյալներ Նյու Յորքի ընդարձակածավալ st. John The Divine տաճարում սպասում էին արարողության: Այնտեղ էին քույր Եկեղեցիների պետեր, պաշտոնական անձինք և թղթակիցներ: Ամենակարևորը, սակայն, այդ օրը առաջին անգամ կողք-կողքի աղոթքի էին կանգնել հայ ժողովրդի զավակները՝ միասնական աղերսով առ Աստված. չկար Էջմիածնական ու Անթիլիասական, չկային տարբեր կուսակցությունների առանձնացյալ ներկայացուցիչներ, չկային տարբեր հարանվանությունների, քաղաքական, բարեսիրական և եկեղեցական զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ կար միակամ, իրերահաղորդ, համազգային համագործակցության պատրաստակամ հայ ժողովուրդ: Պատարագիչն էր Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին Ամենայն Հայոց: Սրբազան պատարագին ներկա էր Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը: Այդպիսին էր օրվա խորհուրդը եկեղեցական պետերի, քաղաքական ղեկավարների, կազմակերպչական մարմինների, բայց մանավանդ ժողովրդի համար, որ երբեք այսքան միատարր չէր եղել: Պատարագը առավել հուզական ու նվիրական էր ներկայությամբ այն աղետյալ երեխաների, որոնք բերվել էին ավերյալ Լենինականից՝ մասնագիտական բուժում ստանալու համար: Թաց էին բոլորի աչքերը ի տես այդ անդամահատված կամ այլ ծանր վնասվածքներ ստացած 18 երեխաների, որոնք նստած էին ծաղիկներով ու վիրակապերով:

* Վերջ «Նոր կեանքից» մեջբերումների:

Երբ երգեհոնի և շարականի ուղեկցությամբ երկու Հայրապետները առաջնորդվեցին սուրբ խորան, տաճարի Անգլիկան Եկեղեցու սկսեցին Եպիսկոպոսը ողջունեց նրանց և ժողովրդին: Նա բարի գալուստին զուգորդեց նաև իր մաղթանքները, որ Աստված Իր օրհնությունն ու մխիթարությունը պարգևի զույգ Վեհափառներին և հայ ժողովրդին: Նորին Սրբություն Վազգեն Ա Վեհափառը շնորհակալություն հայտնեց և ասաց, որ այս իր չորրորդ այցելությունը St. John The Divine տաճար առասել հատկանշական է դառնում Գարեգին Բ կաթողիկոսի ներկայությամբ. «Միասին կներկայացնենք ամբողջական Հայաստանյայց Եկեղեցին,—ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:— Այս պահուն, սիրեցյալ եղբայր, կուզեի ձեզի վստահեցնել, որ այստեղ ներկա է ոչ միայն Նյուորքահայ, ամերիկահայ ժողովուրդը, այլև Հայաստանի և Սփյուռքի ողջ հայությունը: Բոլորս կաղոթենք, որ Աստված այս տաճարը բարգավաճ պահե և Ս. Հոգիի շնորհները բաժնե: Կաղոթեմ առ Աստված, որ մեզ զորացնե ս. պատարագով և եղբայրական սիրով»:

Ապա սկսվեց պատարագի հոգեպարար արարողությունը: «Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը հավատացյալ բազմությանը բաշխեց իր հայրապետական պատգամը.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՔԱՐՈԶԸ
(5 փետրվար 1989 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Զի բարի կամ զի վայելուչ, զի բնակեսն եղբարք ի միասին»:

Սիրեցեալ հոգևոր եղբայրներ և հաւատացեալներ,

Իմ առաջին զգացումը այս պահուն հոգեկան գոհունակությունն է, որ այս սուրբ Տաճարի կամարներուն տակ միասին կը գտնուիմ մեր քոյր Եկեղեցիներու և մեր առաքելական մայր Եկեղեցւոյ եղբայրներուն հետ, այս անգամ թէ շատ տխուր առիթով մը: Բայց գուցէ այդ իսկ պատճառաւ առաւել խորհրդպի է այս պահը, երբ մեզ կը միաւորեն վիշտն ու տառապանքը: Իրօք, այս պահուն մենք բոլորս աւելի ուժգնօրէն կը զգանք որ միատեղ բնակուող եղբայրներ ենք Քրիստոսի սիրոյն մէջ, մարդկային ճակատագրի ողբերգութիւնը ապրող: Ձեր ներկայութիւնը մխիթարութիւն է ինձ համար, մեր Եկեղեցիին ու ժողովուրդին համար:

Բարի ողջոյն բոլորիդ և Աստուծոյ օրհնութիւնը Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն:

Այո, տխուր է այս պահը: Սգաւոր է Հայ Եկեղեցին իր հաւատացեալներուն հետ միասին: Սգաւոր է մանաւանդ Հայաստանի մեր ժողովուրդը, որ մեծ հարուած կրեց անցեալ 7 Դեկտեմբերին, սաստկագոյն երկրաշարժի հետևանքով, որ իր վղատակներուն տակ թաղեց աւելի քան քսան և հինգ հազար բնակիչներ, մեծ մասը երեխաներ ու պատանիներ, հիւսիսային Հայաստանի չորս քաղաքներու և 58 գիւղերու մէջ: Նաև մօտ քսան հազար վիրաւորներ, որոնց մէջ շատերը ծանր վիճակի մէջ են տակաւին: Իսկ նիւթական վնասները, աւերումները անհաշուելի են:

Փլուզումի ենթարկուած են ոչ միայն շինութիւնները, այլև խուճապահար վերապրողներու սրտերը: Երկրաշարժի հինգերորդ օրը, Դեկտեմբերի 11-ին, ես այցելեցի Լենինական քաղաքը և տեսայ, զգացի այդ խոր-

տակուած սրտերը՝ վշտի, յուսահատութեան, խելագարութեան անդունդի եզրին հասած:

Աղօթք և հոգեհանգիստ կատարեցինք Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, որ հրաշքով կանգուն էր մնացած, միայն զանգակատունը վնաս էր: Մխիթարութեան և օրհնութեան իւսք արտասանեցի ներկայ ժողովուրդին թէ՛ եկեղեցւոյ մէջ և թէ՛ յետոյ քաղաքի հրապարակի վրայ հաւաքուած բազմութեան: Թէ բոլորը լուռ, քարացած ինձ կը լսէին, բայց կը զգայի թէ ինձ չեն հասկնար, և վիճակի չեն հասկնալու: Բոլորի խօսքն էր. «Վեհափառ, ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը»: Միջին տարիքի մարդ մը մօտեցաւ ինծի արցունքը աչքերուն՝ ըսելով. «Փառք Աստուծոյ, երկու երեխաներիցս մէկին գտայ սուերակների տակ»: Հարցուցի՝ «ինչպե՞ս է, առո՞ղջ է, վիրաւորուա՞ծ է»: Պատասխանեց հեկեկալով. «Վեհափառ, դիա՛կը գտայ, իսկ աղջկանս դիակն էլ չգտայ»: Ապա մայրիկ մը, որ իր երեք զաւակներները կորսնցուցած էր, բացականչեց՝ «Թող Աստուած մի երկրաշարժ էլ տայ, բոլորս թաղուենք ու ամէն ինչ վերջանայ»: Երիտասարդ մը՝ «Վեհափառ, մենք քրիստոնեայ հին ժողովուրդ ենք, ինչո՞ւ Աստուած միշտ միայն մեզ է պատժում աղէտներով, կոտորածներով, իսկ միւսներին ոչինչ չի պատահում»: Իսկ հեռուէն երիտասարդ ձայն մը հնչեց՝ «Բայց, Վեհափառ, Ղարաբաղն էլ չմոռանանք»: Ահա հոգեկան պատկերը մեր աղէտեալ ժողովուրդին, այդ օրերուն:

Յունուարի 21-ին այցելեցի նաև Սպիտակ, Կիրովական և Ստեփանաւան քաղաքները: Գրեթէ նոյն հոգեկան վիճակը, թէև շնորհիւ պետական մեծածաւալ միջոցառումներու և օգնութիւններու խորհրդային Միութեան հանրապետութիւններէն և արտասահմանեան երկիրներէն, կացութիւնը սկսած էր զգայի կերպով բարելաւուիլ: Այնուամենայնիւ մեծ հարցը զոր արագ կարելի չէ լուծել, այն է, որ շուրջ կէս միլիոն բնակիչներ անտուն մնացած են: Յառաջիկայ երեք-հինգ տարիներու ընթացքին անհրաժեշտ է հարիւր հազար բնակարան կառուցել, բացի բազմահարիւր դպրոցներէ, հիւանդանոցներէ, առողջարաններէ, վարչական շէնքերէ, գործարաններէ և գիւղատնտեսական շինութիւններէ:

Ահա այս կացութեան առջև գտնուելով և քաջ տեղեակ ըլլալով արտասահմանի մեր հաւատացեալներու պատրաստակամութեան և բուռն փափաքին՝ օգնութեան ձեռք երկարելու վերաշինութեան մեծ գործին, ես պարտք համարեցի անձամբ գալ իմ օրհնութիւնը բերելու ամերիկահայութեան հայրենաշէն գործի կազմակերպման սկզբնաւորումին:

Եւ շատ մխիթարուած եմ, որ այս աստուածահաճոյ շինարար գործի կազմակերպումը պիտի կատարուի լիակատար միասնութեանբը Հիւսիսային և Հարաւային Ամերիկաներու Հայաստանեայց Եկեղեցւոյ համայնքներու, հայ Կաթողիկէ և Աւետարանական համայնքներու և բոլոր բարեսիրական, մշակութային, հասարակական, ազգային կազմակերպութիւններու:

Ինձ համար մխիթարութիւն է նաև, որ առաջադրուած հայրենաշէն գործի կազմակերպման այս պահուն, իմ հրաւէրով, մեր մէջ իմ կողքին կը գտնուի Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ Կաթողիկոսը, իբրև վշտակից և գործակից հարազատ եղբայր:

Մեր ազգային կեանքին մէջ եղան անցեալ տարուոյ Ղարաբաղեան տագնապալի իրադարձութիւնները և ապա երկրաշարժի այս սոսկալի հարուածը, բնական էր, որ Մայր Աթոռս և Կիլիկեան Աթոռը առաւել միանային իրենց մտահոգութիւններով, առաւել ներդաշնակէին իրենց մտածում-



Ջեյսի Ջեկսոնը Մայր Աթոռում

ները այն հրամայականով, որ, ամէն բանէ վեր, մենք մէկ ժողովուրդ ենք՝ մէկ Եկեղեցիով, մէկ մայր հայրենիքով, մէկ ճակատագրով և մէկ ապագայով: Այդ գիտակցութեամբ է, որ մենք պիտի մէկտեղենք մեր ուժերը իբրև գործակից եղբայրներ: Եւ ես կ'աղոթեմ, որ եղբայրական սիրոյ և գործակցութեան այս ոգին, որ պայծառ կերպով կ'արտայայտուի Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Տանն Կիլիկիոյ Աթոռի յարաբերութեանց մակարդակի վրայ, հետզհետէ տարածուի ամենուրեք հայ սփիւռքի մէջ, մանաւանդ այս մեծ երկրի երկնքի տակ, ու ծաւդի գործակցութիւնը թեմական կեանքի մակարդակի վրայ, որպէսզի երջանիկ օր մը դուք հասնիք եկեղեցական վարչա-կազմակերպչական վերամիաւորման:

Վաղը պիտի գումարուի խորհրդակցական ժողովը Հիւսիսային և Հարաւային Ամերիկաներու հայկական եկեղեցական համայնքներու և կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն: Մեր առաջադրանքը պիտի ըլլայ ժողովականները տեղեակ դարձնել, ճշգրիտ տուեալներով, Սուեփանաւան քաղաքի վերաշինութեան ծրագիրներուն, այն մտածումով, թէ բոլոր մասնակից կազմակերպութիւնները պիտի կարողանան ճշտել իրենց մասնակցութեան բաժինը այդ քաղաքի վերակառուցման ընդհանուր ծրագրին մէջ: Վստահ եմ, թէ ամերիկահայութիւնը իր առջև դրուած այս հայրենաշէն գործը պատուով պիտի կյանքի կոչէ:

Սիրելի հաւատացեալներ, մենք քրիստոնեայ ժողովուրդ ենք մօտ երկու հազար տարիներէ ի վեր: Դարերու ընթացքին բազում փոթորիկներ, աղէտներ ու կոտորածներ տեսած ենք: Երբեմն յուսահատութեան ու մահուան եզրին հասած ենք, ինչպէս 1915-ի ցեղասպանութեան սև օրերուն, սակայն ամէն անգամ վերագտած ենք մեր ուժերը, մեր լաւատեսութիւնը, մեր վերածնունդը:

Այս ոգին կայ նաև այսօր Հայաստանեայց Եկեղեցւոյ կեանքէն ներս: Մեր երկրին մէջ, վերջին քանի մը տարիներուն, վերագնահատումներու այս շրջանին, մեր Եկեղեցական կեանքը նոր փուլի մէջ մտած է: Կ'ընթանա դէպի աւելի լաւը: Ժամանակը ինչքան կը փոխէ կեանքի երեսը մեր օրերուն այնտեղ: Դուք գիտէք, թէ ինչքան ծանր օրեր ապրեցան Էջմիածինը և Հայաստանեայց Եկեղեցին երկար տարիներ, մանաւանդ Բ աշխարհամարտէն առաջ: Պահ մը նոյնիսկ հայ հաւատացեալ ժողովուրդը յուսահատութեան սեմին հասած էր այն օրերուն, երբ Խորէն Մուրատբէկեան կաթողիկոսը իր աչքերը կը փակեր ողբերգական պայմաններու մէջ: Փառք Աստուծոյ, այդ տխուր օրերը այժմ հեռու են մեզմէ, և քայլ առ քայլ մեր Եկեղեցին կը գտնէ իր բնական ընթացքը: Անգամ մը ևս կը փաստուի, որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, միշտ յաղթական է: Եւ ահա, երկրաշարժէն ետք, Հայաստանի ժողովուրդին մտքին մէջ վերաշինութիւն ըսելով կը հասկցուի նաև վերաշինութիւնը մեր հոգևոր կեանքին: Հրաշքի համազօր երևոյթ է, որ ժողովուրդն ու մտաւորականները կը վերադառնան իրենց քրիստոնէական արմատներուն: Նոյնիսկ հիւանդանոցներուն մէջ, շատեր տակաւին մկրտուած չըլլալով, կը դիմեն այցելու կղերականներուն և կը մկրտուին: Ինչպէս գիտէք, նոր վանքեր և եկեղեցիներ վերաբացուեցան: Ոմանք կը կարոտին վերանորոգման: Այս աշխատանքը պիտի շարունակենք ոչ միայն Հայաստանի, այլ նաև Ղարաբաղի մէջ, ուր ժողովուրդը ներշնչուած է քրիստոնէական հաւատքով: Արցախի մէջ արդէն պետութիւնը որոշեց վերադարձնել երկու եկեղեցիներ: Կը սպասենք, որ վերադարձուին նաև Ամարասի և Գանձասարի վանքերը: Ըսողներ կ'ըլլան, թէ Գանձասարը հայկական վանք

չէ: Ասիկա մինչև երկինք աղաղակող անարդարութիւն է: Գանձասարի վանքը տարիներ շարունակ եղած է Ղարաբաղի հոգևոր կեդրոնը ու նաև այնտեղէն սկիզբ առած է հայ ազատագրական շարժումը:

Մինաս վարդապետ և Իսրայէլ Օրի Գանձասարէն մեկնած են դէպի Եվրոպա և Ռուսիա՝ օգնութիւն խնդրելու Հայաստանի ազատագրութեան համար: Մարդարապատի հրդեհը սկիզբ առած է Գանձասարէն արձակուած կայծերէն: Թող Աստուած մեզ զօրացնէ մեր արդար պայքարի յաղթանակին համար:

Միշտ արտասուքով ցանած ենք և ցնծութեամբ հնձած: Այսօր ալ նոյն ժողովուրդն ենք. և վերջացնելէ առաջ կ'ոգեկոչենք հայ բանաստեղծի պատգամը «Կանգնի՛ր, անկեալ իմ ժողովուրդ և հաւատա՛ և տոկա՛, ցաւերի մէջ կայ մեծ խորհուրդ և խաչեալին մահ չկայ»:

Իմ հայրական սէրը, մաղթանքները և օրհնութիւնը ձեզի. քաջալերուեցէք և ձեր սրտերը պիտի զօրանան:

«Քաջալերեցարուք և զօրասցին սիրտք ձեր, ամենեքեան ոյք յուսացեալ էք ի Տէր»: Ամէն:

Հավարտ ս. պատարագի տեղի ունեցալ հոգեհանգստյան պաշտոն՝ երկրաշարժի և Սումգայիթի զոհերի հիշատակին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 6-ին երկու կաթողիկոսներին քաղաքապետարանում ընդունեց Նյու Յորքի քաղաքապետ Էդուարդ Քոչը: Մեծարգո քաղաքապետը ողջունեց երկու Հայրապետների այցելությունը Նյու Յորք: Վշտակցություն հայտնեց հայ ժողովրդի մեծ ցավին: Զույգ Վեհափառները խոսեցին երկրաշարժի ծանրագույն հետևանքների մասին, բացատրեցին իրենց առաքելության նպատակը, արտահայտեցին հայ ժողովրդի վճռականությունը՝ ավերակներից նորոգ հառնելու: Մեծարգո քաղաքապետը Հայրապետների առաքելությունը համարեց սեփական ժողովրդի ճակատագրով խորագույն մտահոգության արտահայտություն և նրանց մաղթեց հաջողություններ և բազմարդյուն գործունեություն:

ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Փետրվարի 6-ին Ս. Վարդան Մայր տաճարում տեղի ունեցալ ընդարձակ միացյալ խորհրդակցական ժողով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, ներկայությամբ Գարեգին Բ կաթողիկոսի, մասնակցությամբ Հյուսիսային և Հարավային Ամերիկաների թեմական-առաջնորդների և մոտ 30 հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների: Խորհրդակցության նպատակը մեկն էր. միավորել բոլորի ջանքերը Վազգեն Վեհափառի առաջադրած ծրագրի իրականացման համար. Նորին Սրբությունը առաջարկում էր միջոցները միավորել Ստեփանավան քաղաքի գոնե մասամբ վերականգնման համար:

Նախ հանդես եկալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ ժողովականներին ներկայացնելու իր մտածումներն ու ծրագրերը.



Փետրվարի 6-ին. Վեհափառ Հայրապետը բացում է ժողովը

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(6 փետրվար 1989 թ.)

Այս պահը չափազանց հուզիչ է և քաջալերիչ։ Հուզիչ, որովհետև կուգամ Ս. Էջմիածնեն, Մայր Հայաստանեն տխուր առիթով մը։ Ինչպես գիտեք, այնտեղ, Հայաստանի հյուսիսային շրջանը՝ Շիրակի և Լոռիի տարածքի վրա տեղի ունեցավ սաստիկ երկրաշարժը 7-ը դեկտեմբերի։ Երկրաշարժ մը, որուն սաստկությունը բացառիկ էր նույնիսկ աշխարհի պատմության մեջ։ Ռիխտերի 9—10 աստիճանի չափանիշով երկրաշարժներ աշխարհի վրա քիչ տեղի ունեցած են։ Այդ սաստկագույն երկրաշարժը մեր ազգի բաժինը եղավ, մեր ուրիշ մտահոգություններու և վիշտերու վրա ավելանալով։ Այս աղետի առջև առաջին վայրկյանին մենք՝ բոլոր այնտեղ ապրողներս, Հայաստանի ժողովուրդը, մանավանդ աղետահար ժողովուրդը՝ սարսափի, խուճապի, հուսահատության մթնոլորտի մեջ էինք։ Կարծես թե աշխարհի վերջը եկած ըլլար։ Ես այդ զգացի մանավանդ երբ չորս օր հետո անձամբ այցելեցի Լենինական քաղաքը։ Սակայն անցան շաբաթներ և արդեն երկու ամիս, և մեր ժողովուրդը ինքզինքը սկսավ գտնել հոգեբանորեն, հուսահատության վիճակը գրեթե փարատեցավ։ Սակայն մնացին բազում դժվարություններ, որոնց առջև կգտնվին մեր աղետյալ զավակները։ Մեր պետական մարմինները բնականաբար առաջին հերթին, առաջին օրեն իսկ սկսան իրենց օգնության աշխատանքները ծավալել թե՛ Հայաստանի և թե՛ ամբողջ Խորհրդային Միության տարածքի վրա։ Կնախատեսվի նույնիսկ, որ երեք տարիներու ընթացքին վերաշինվին ավերված քաղաքներն ու գյուղերը, առանց բացառության, ամբողջապես, օգնությամբը ու գործակցությամբը Խորհրդային Միության բոլոր հանրապետություններու։ Հիմա արդեն որակյալ մասնագետներ, բանվորներ և վարպետներ կաշխատին այդ բոլոր շրջաններուն մեջ, եկած մասնավորապես Ռուսաստանեն, Ուկրաինայեն, Վրաստանեն։ Պետք է ըսել, որ վրացիները այս առիթով բացառիկ սրտցավությամբ և զոհաբերության ոգիով գործի անցած են։ Այս հարցերու վերաբերյալ շինարարական ավելի մանրամասնություններ քիչ հետո պիտի ներկայացնեն ինձ հետ եկած նկարիչ Գրիգոր Խանջյանը։ Առաջին օրերեն ես, իբրև Հայոց Հայրապետ, հոգեպես մխիթարվեցայ, որ նաև արտասահմանի հայության հոգին, խիղճը ցնցվեցավ։ Եվ ամեն գաղութներեն, առանց բացառության, եկան օգնության պատրաստակամություններ, ներկայացուցիչներ, պատվիրակություններ գրեթե ամեն օր։ Նաև ապրանքներ՝ դեղորայք, հագուստեղեն, սննդամթերք, վրաններ նույնիսկ, հարյուրավոր օդանավերով (Երևանի օդանավակայանը), Խորհրդային Միության տարբեր շրջաններեն և արտասահմանի օտար պետություններու կողմե, եկեղեցական կազմակերպություններու կողմե և այլն։ Բայց ինձ համար նշանակալից էր և խորհրդանշական այն վերաբերմունքը, որ ունեցավ արտասահմանի ողջ հայությունը, դուք բոլորդ, որոնք այսօր կներկայացնեք ամերիկյան հողամասի շրջանները, Կանադայեն սկսյալ մինչև Բուենոս Այրես։

Այս քաջալերիչ, մխիթարիչ, հուզիչ պատկերի առջև ես հարմար և անհրաժեշտ գտա, որպեսզի անձամբ գամ Գարեգին Վեհափառի հետ միասին այստեղ՝ հովանավորելու այս օգնության գործի սկզբնավորումը, մեր օրհնությունը բերելով։ Իմ կարծիքով լավ ըրինք, որ մենք եկանք Գա-

րեգին Վեհափառի հետ միասին: Նախ, որպեսզի ընդգծվի, որ այս մեծ գործի առջև համայն հայությունը իր միասնությունը պիտի հոչակե, ինչ որ եղավ: Սքանչելի երևույթ մըն է այս, որ իմաստ և նշանակություն ունի ոչ միայն այդ շինարարական գործի առնչությամբ, այլ ընդհանրապես մեր ապագա կյանքի զարգացման ընթացքին՝ Հայրենիք—Սփյուռք, Էջմիածին—Անթիլիաս հարաբերությունների ճանապարհի վրա: Գալով գործնական հարցերուն, մեր առաջադրանքն է, որ ամեն մեկ կազմակերպություն ինքը ընտրե իր շինարարական առարկան, իր աշխատանքի բաժինը և ուղղակի հարաբերության մեջ մտնե մոտ ապագային Մայր Աթոռի հետ: Մայր Աթոռս միջնորդ հանդիսանալու դերին մեջ կգտնվի: Մենք պիտի չզբաղինք թեքնիք հարցերով: Բայց միջնորդ պիտի հանդիսանանք, որպեսզի մեր ներկայացուցիչները գան և ուղղակի հարաբերության մեջ մտնեն պետական կեդրոնական մարմնի հետ, որ կազմված է նախարարաց խորհրդի կողքին: Անոնց հետ է, որ պետք է խոսքի նստինք, հայտնվի փափագը, ծրագիրը և կազմվի արձանագրություն հատուկ մանրամասնություններով, ճշտումներով: Մեր վարչապետը լայնախոհ մարդ է, ըսավ. «Ամեն մեկը թող գա իր մտածումներով, իր ծրագիրներով, իր փափագին համաձայն, այս կամ այն շինարարական գործը ստանձնե, իր անունն ալ կարձանագրվի շենքի վրա՝ պատմության մեջ որպես հիշատակ»: Ահա այդպիսի լայն, ազատ հնարավորություններ կան, որ ամեն միավոր իր հնարավորության սահմանի մեջ, իր չափի և իր փափագի համաձայն իրականացնե այն, ինչ որ ծրագրած է համապատասխան կազմակերպությունը: Իմ կարծիքով, շատ գործնական գործելակերպ է այս: Այստեղ հատուկ մարմին մը ստեղծելու կարիքը պիտի չըլլա: Գործնական ըլլանք և խուսափինք ապագա բարդություններե: Մեր մեկնելեն հետո ձեզմե ամեն մեկ կազմակերպություն ինքը պիտի որոշե իր ընելիքը և ուղղակի հարաբերության մեջ մտնե Մայր Աթոռի հետ, որպեսզի մենք, իբրև միջնորդ, ներկայացնենք տվայլ պետական մարմնին և ծրագիրը կազմվի: Կկարծեմ, որ կրնա պատահիլ, որ մեկ-երկու, կամ գուցե երեք միավոր ձեր շրջաններեն միանան, այդ ուրիշ խնդիր է, այդ ձեր հարցն է, և միասին իրականացնեն մեկ ծրագիր: Օրինակի համար, եթե ոչ թե պարզ դպրոցի մը, մանկապարտեզի մը կամ հիվանդանոցի մը հարց ըլլա, այլ ֆաբրիկայի մը ստեղծման, որ պետք է ըսել, շատ կարևոր է տնտեսական կյանքի զարգացման և բնակչության աշխատանք հայթայթելու տեսակետեն: Դուք գործի մարդիկ եք, կարծեմ ինքներդ ալ լավ կհասկանաք այդ: Քանի մը մեծ ֆաբրիկաներ կային մանավանդ Ստեփանավանի շրջանը, որ բավական կարևոր կեդրոն է, հոչակավոր հոլանդական պանիրի մեծ ֆաբրիկա մը կար, որ հոչակ ուներ ամբողջ Միության մեջ: Այդ ֆաբրիկան կարելի է ավելի արդիական ձևերով իրականացնել: Խորհրդային Միության մեջ մեծ նշանակություն կունենա առևտրական և Հայաստանի հարստացման տեսակետեն, և նաև բնակչության համար օգտակար, քանի մը հազար հոգիի աշխատանք հայթայթելու տեսակետեն: Բայց այդ մեծածախս գործ կըլլա: Այդպիսի մեծ ծրագիր մը իրագործելու համար գուցե մեկ միավոր ի վիճակի չըլլա, բայց երկու-երեք միավորներ կրնան միանալ, միասին իրագործելու համար այդ: Սա իբրև օրինակ բերի ես: Հետո, անշուշտ, կմնա ազատ հնարավորություն, որ բացի կազմակերպություններեն գուցե ձեր մեջ այստեղ, կամ Հարավային Ամերիկա գտնվի ազգային բարերար մը, որ ինքը միայն իր անունով ստանձնե այս կամ այն շինարարական գործը Ստե-

փանավանի մեջ: Այդ ալ ընդունելի է բնականաբար: Մեկ խոսքով, բոլոր հնարավորությունները կան: Կա նաև ուրիշ մեկ հնարավորություն. կրնա ըլլալ, որ ձեր կազմակերպություններեն մեկը ավելի լայն ծրագիրներ ունենա և փափագ, ուրիշ քաղաքի մը մեջ ևս շինարարական գործ ստանձնել: Մեկը մյուսին չի խանգարեր: Տվյալ կազմակերպությունը կրնա իր բաժինը բերել Ստեփանավանի համար, բայց հավելյալ ուրիշ ծրագիր մըն ալ կրնա իրականացնել Սպիտակի կամ Լենինականի մեջ: Ուրեմն, բոլոր հնարավորությունները կան Հայաստանի ավերված շրջաններու վերակառուցման, վերաշինության գործին մասնակցելու:

Բայց առաջին հերթին մեր ցանկությունն է, որ կատարվելիք գործը կենտրոնացվի Ստեփանավանի վրա, որ տեսակ մը պատմական նշանակություն ալ կունենա, թե ամբողջ ամերիկահայությունն իր բոլոր միավորներով վերականգնումի իր կարևոր բաժինը բերավ Ստեփանավան քաղաքին: Վերջացնելև առաջ պիտի ուզեի նաև ձեզի ի գիտություն հայտնել, թե քիչ հետո Տիրան եպիսկոպոսը պիտի ներկայացնե պատկերը Մայր Աթոռի, Էջմիածնի և Հայ Եկեղեցիի գործունեության այնտեղ այս տխուր առիթով, նաև շարք մը թիվեր, գումարներ, որոնք ուղղակի հանձնվեցան մեզի, թե հայ նվիրատուներու կողմե, և թե ոչ հայ նվիրատուներու կողմե: Օրինակ, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ներկայացուցիչները, Ֆրանսայի Սեքյուր Կաթոլիկը և Արևմտյան Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցին եկան և ուղղակի ինձ հանձնեցին ամեն մեկը հիսունական հազար դոլլար այդ նպատակի համար: Կամ պարսկահայության կողմե երկու հայ երեսփոխաններ Պարսկաստանի հայության անունով հանձնեցին 100 000 դոլլար: Ուրուգվայի գաղութեն ևս նույնքան գումար: Այս նպատակով Ժենևի մեր դրամատան մեջ հատուկ հաշիվ բացինք, աղետյալներու ֆոնդ անվան տակ: Մայր Աթոռի այդ հաշվին հավաքված գումարներով պիտի իրագործվի շինարարական ծրագիր մը Ստեփանավանի մեջ: Այդ մասին մենք հրապարակավ հաշվետվություն պիտի ներկայացնենք:

Մեկ կետ ևս կուզեմ ավելցնել. բացի այս շինարարական ծրագիրներեն, գիտեք աղետյալներու թիվը շատ-շատ է: Ճիշտ է, փողոց մնացած մարդ չկա հիմա, և սակայն 500 000 ժողովուրդ անօթևան, անտուն մնացած են: Ես երբ հինգերորդ օրը Լենինական գացի, տեսա, որ հարյուրավոր ընտանիքներ փողոցն էին ուղղակի տակավին, վերմակներով փաթթված: Գիշեր-ցերեկ այդ վիճակի մեջ էին, հուսահատ: Անշուշտ, այդ կացությունը հիմա չկա, սակայն ծանր վիճակի մեջ են: Մոտավորապես կեսը ցրված են Հայաստանի տարբեր գյուղերու ու քաղաքներու մեջ: Սպիտակի բնակչության գրեթե մեծամասնությունը: Ճիշտ է, որ պետությունը անոնց տրամադրած է բնակության որոշ հնարավորություններ, և սակայն Լենինական և Սպիտակ կան, հիմա վրաններու տակ, վագոններու մեջ, օթոբուսներու մեջ տեղավորված են, կամ մեկ հարկանի շենքերու մեջ, որոնք համեմատաբար անվտանգ են: Ամեն մեկ սենյակի մեջ 8—10 հոգի պառկելով երբեմն: Նույնիսկ Լենինականի մեր առաջնորդը՝ Նարեկ սրբազան, թեև բնակարանը փլած չէ, բայց փլցվելու ենթակա է, տեղափոխված է իր եղբայրներու բնակարանը, ուր մեկ սենյակի մեջ կապրին 9 հոգի: Ահա այսպիսի պայմաններու մեջ կգտնվի ժողովուրդը: Հետևաբար, նաև նյութական կարիքներ ունին: Պետությունը որոշ գումար կտրամադրե, բայց նաև Մայր Աթոռս կմասնակցի այս օգնության: Մենք մինչև հիմա երկու ու կես միլիոն ռուբլի բաժնած ենք այսպիսով մեզ բոլոր դիմողներուն: Ձենք կրնար

անպատասխան ձգել, չենք կրնար չընդառաջել: Սակայն մեր նյութական հնարավորություններն ալ անսահման չեն: Հետո, երեխաներ շատ ունեցողները նույնպես օգնություն կուզեն, և մենք կշարունակենք հոգալ անոնց կարիքները: Ըսել կուզեմ, որ Մայր Աթոռս դրամի ալ կարիքը ունի: Շինարարության հետ կապված չէ այս, այլ դրամական օգնություններու, որոնք կարևոր են: Իմ մեկնումեն քանի մը օր առաջ մտավորական ծանոթ տիկին մը, տիկին Նինել Ոսկանյան, հոդված մըն ալ գրած էր «Խորհրդային Հայաստան» թերթի մեջ, հետաքրքիր առաջարկով: Ինք լսեր էր 15 հունվարին իմ քարոզը Մայր տաճարի մեջ, երբ այս ողբերգության մեջ կոչ ուղղեցի Հայաստանի մայրերուն, որ ամեն մեկ հայ հավելյալ երեխա մը ծնի, որպեսզի մեկ-երկու տարիներու ընթացքին Հայաստանը ունենա հավելյալ ծնունդներ հիսուն հազարով: Հայաստանի մեջ տարեկան շուրջ 60 000 երեխա կծնի: Եթե այդ 60.000-ի վրա տարեկան 80 000 ավելնա, արդեն 50—60 000 նոր, այսպես ըսենք, հավելյալ երեխաներ կրնանք ունենալ՝ մեր երկրի բնակչության թիվը աճեցնելու համար: Եվ տիկին Ոսկանյան եկավ ինձ մոտ ըսելու. «Վեհափառ, չի բավեր միայն այդ կոչը ընել մայրերուն, պետք է նաև ապահովել նյութապես, որ անոնք քաջալերվին և կարողանան իրենց հավելյալ երեխաները խնամել հավելյալ նյութական միջոցներ ունենալով: Ձեմ դիտեր, ինչքան գործնական կերպով այս կարելի է կազմակերպել, սակայն այդ մասին պետք է լրջորեն խորհինք»: Այս ևս նկատի առնվելիք պարագա մըն է, որպեսզի օգնության հասնինք այն ընտանիքներուն, որոնք երեխաներ շատ ունին և կամ հավելյալ ծնունդներ պիտի ունենան:

Անհավասիկ, այն, ինչ որ ուզեցի ձեզի ներկայացնել ընդհանուր կերպով: Խնդրանք մը ևս. սրբազանը ինձի կհարցնե երեխաներու՝ որբերու մասին: Այս առիթով ըսեմ, որ մահացածներու, վիրավորվածներու մեծամասնությունը երեխաներ են, պատանիներ և ուսանողներ, որովհետև երկրաշարժը եղավ ճիշտ դասի ժամին: Ուրեմն, նախ ավելի շատ ծնողներ կան առանց երեխայի մնացած, քան թե երեխաներ առանց ծնողներու: Բայց կան անշուշտ նաև որբեր, որոնք կորսնցուցած են իրենց ծնողները: Անոնք խնամքի տակ առնված են իրենց մորաքույրներու, հորաքույրներու, մեծ մայրերու կամ ազգականներու կողմե: Հայաստանի մեջ ընտանեկան կապը շատ ուժեղ է: Անկարելի է, որ այդ որբ երեխան նվեր տվող ըլլա կամ ուրիշ տեղ ղրկվի: Այս է իրողությունը: Ավելցնեմ նաև, որ Ռուսաստանի կողմերը 20 000 ոչ որբ երեխաներ ղրկված են իրենց մայրերու հետ միասին, որպեսզի ժամանակավոր այնտեղ ապաստան գտնեն: Հայրերը մնացած են իրենց տեղը՝ մասնակցելու համար աշխատանքներուն:

Վերջացնեմ իմ խոսքը: Այսօր դուք պիտի լսեք նաև ինձ հետ եկողները, և եթե հնարավոր է, վաղը կրկին պիտի հանդիպինք: Ձեզի հայտնի պիտի ըլլա ծրագիրը Ստեփանավանի վերաշինության, որպեսզի դուք ուսումնասիրեք և որոշ եզրակացությանց հանգիք, և գուցե հնարավոր դառնա վաղը ցուցակ մը կազմել, թե ձեր կազմակերպությունները, եկեղեցական և ոչ եկեղեցական, ամեն մեկը մոտավորապես ինչ պիտի կարենա իրագործել, որպեսզի իմ վերադարձին շոշափելի պատկեր մը կարողանամ տանիլ ինձ հետ: Սա ստիպողական պայման մի՛ նկատեք, բայց լավ է նման մոտավոր ծրագիր կազմվի:

Շնորհակալություն ձեզի բոլորիդ: Իմ բարի մաղթանքները և իմ օրհնությունները ձեզի ամենուդ և ձեր կազմակերպություններուն:

Թող Աստված օգնական մնա բոլորիս. ամեն:

Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ Տ. Տիրան եպս. Կյուրեղյանը խոսեց երկրաշարժի սարսափելի հետևանքների մասին, նկարագրեց Մայր Աթոռի ջանքերը՝ առաջին անմիջական օգնության ձեռք մեկնելու աղետյալ շրջաններին, ստացած հազարավոր տոննաներով ապրանքը հասցնելու աղետահար ժողովրդին: Շեշտեց, որ զգալի նյութական օգնություն է ստացվել քույր Եկեղեցիներից և համաշխարհային եկեղեցական կազմակերպություններից, որոնք, սակայն, խոստացել են շարունակել իրենց օգնությունը նաև վերաշինության աշխատանքներին:

Ապա ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը նկարագրեց երկրաշարժի տարողությունը, խոսեց շատ մեծ նյութական վնասների, բայց մանավանդ երկրաշարժի պատճառած հոգեկան վնասների մասին: «Երկրաշարժը, ասաց պրն. Գ. Խանջյանը, սասանեց նաև մեր ժողովրդի հավատը վաղվա նկատմամբ: Ուստի եթե վերականգնումը լինի միայն նախորդ մակարդակի վերականգնում, ապա դա կլինի անօգուտ գործ՝ մեր ժողովրդի հեռանկարի տեսակետից, վերականգնումը անպայման պետք է գերազանցի նախորդ վիճակը, կատարվի գիտության և տեխնիկայի համաշխարհային վերջին խոսքով, որպեսզի ապահովենք մեր ժողովրդի առաջընթացը 21-րդ դարում»: Հետո պրն. Խանջյանը պատմեց, թե վերականգնողական ի՞նչ ծրագրեր կան մշակված, և առաջադրեց, որ ներկա կազմակերպությունների ներկայացուցիչները ընտրեն համապատասխան ծրագիր ըստ իրենց նյութական հնարավորությունների և ըստ այնմ նախաձեռնեն՝ օգնության ձեռք մեկնելով հայրենի պետության և հայրենի ժողովրդին:

Հետո խոսք առավ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
(6 փետրվար 1989 թ.)

Վեհափառ եղբայր, սիրելի հոգևոր եղբայրներ, բանկագին քույրեր և եղբայրներ: Այսօր կհավատամ և կզգամ, որ այս հավաքույթը եզակի է իր տեսակի մեջ:

Եկած ենք Զեզ բոլորդ ողջունելու և Միացյալ Նահանգներու, Կանադայի, Արժանթինի, Բրազիլի, Մոնթեվիդեոյի մեր հայ եղբայրներուն և քույրերուն հայտնելու, թե Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը ամբողջապես և անվերապահորեն կանգնած է հայրենիքի վերաշինության սուրբ աշխատանքի կողքին Վեհափառ Հայրապետի հետ միասին: Եվ իբրև ստաջին արտահայտությունը այդ միասնության՝ մեր այցելությունը եղավ ի Ս. Էջմիածին, աղետե յոթ օր ետքը, ուր, կխորհիմ, ունեցավ իր ազդեցությունը նաև արտասահմանի և Հայաստանի մեր ժողովուրդի այս աղետին դիմաց արթնացումի և վերստին պատասխանատվության կանչումի տեսակետեն: Վեհափառ, նաև ես շատ ուրախ եմ այն իրողությամբ, որ այս առիթով շարիքի մեջ բարիք մը գտնելու իմաստությամբ հավաքված համահայկական այս ամբողջական, միասնական կեցվածքը՝ աշխարհին տրված ամենեն մեծ փաստն է մեր արժանիքին: Ոչ ոք դուրսեն մեզ պիտի նայի, թե ինչական ենք մենք, բայց ամեն ոք գիտնա, թե հայ ենք մենք, մեկ հայրենիք ունինք և հետևաբար այս գործին պիտի լծվինք: Անավասիկ, թե ինչ ոգիով մենք կմոտենանք այս հարցին: Առաջին օրը, երբ լսեցի աղետի մասին, կզանվեի

Կիպրոս, անմիջապես մեր բեմերուն հրահանգներ տալե ետքը, Վեհափառ Հայրապետին մեր սրտակցական ցավակցությունը հայտնելեն ետքը, մենք լծվեցանք գործի նույնիսկ Կիպրոսի մեջ հեռախոսներով ի Վատիկան, ի Ժնև և այլ տեղեր, որ աշխարհը փիչ մի շարժենք այս ուղղությամբ: Եվ իսկապես, բավարարված կզգանք, տեսնելով, որ այս միասնական գործունեությունը իր մեծ բարիքը ունեցավ, գեղեցիկ վկայաթուղթը եղավ մեր ժողովուրդին: Վեհափառ, երբ ստացանք ձեր հեռագիրը, որով կուզեիք հրավիրել մեզ, որ գայինք, ձեր կողքին ըլլայինք և միասնաբար հովանավորեինք Ստեփանավանի վերաշինության գործը, սիրով ընդառաջեցինք և նաև փափագեցանք, որ այս առիթով միասին ըլլալով, խորհրդակցինք նաև Սփյուռքի Ամերիկական աշխարհամասի մասին, ասիկա նույնքան կարևոր է, որ այլ Սփյուռքի մեր եղբայրները գիտնան, թե ինչ ձևով պիտի բերեն իրենց օժանդակությունը: Եվ այժմ մենք խորհրդակցության մեջ ենք անձամբ Վազգեն Վեհափառ Հայրապետին հետ՝ ըլլա Սփյուռքի մյուս շրջաններուն մեջ կատարելիք աշխատանքներուն, ըլլա հայության ծիրեն դուրս եկեղեցական, միջեկեղեցական և ընդհանուր միջազգային մարդասիրական կազմակերպություններու հետ հարաբերելու և անոնցմե օգուտ քաղելու արդար մեր սպասումին և ջանքին մեջ, որովհետև բոլորս ալ գիտենք, թե հայ համայնքներու ուսերի վրա այս ամբողջ բեռը չի դրվիր: Խորհրդային Միության սահմաններեն դուրս արտաքին աշխարհի մեջ այն վարկը, որ հայությունը շահած է, պետք է այսօր զայն վերածե բարիքի և օգուտի հայրենիքին համար: Եվ անավասիկ, թե ինչու եկած ենք և ինչ աշխատանքներ կտանինք Վեհափառ Հայրապետին հետ, և ինձի կընկերանան մեր Ազգային կեդրոնական վարչության, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության բոլոր բեմերու կեդրոնական մարմնի ատենապետը և փոխատենապետը, որոնք Լիբանանի մեջ պետական երեսփոխաններ են՝ երկար տարիներու ընկերային, քաղաքական, պետական պարտավորություններ ստանձնած, երկուքն ալ պետական նախարարներ եղած են, հանձինս մեր Խաչիկ Պապիկյանի և պրն. Սուրեն Խանամիրյանի, որպեսզի բերենք մեր և՛ հոգևորական, և՛ աշխարհական դասի մասնակցությունը այս նվիրական գործին: Ես չեմ ուզեր ավելի խոսիլ, Վեհափառ, մեկ մտածումով մը կուզեմ փակել խոսքս. ես կողջունեմ Ձեր կողմե ներկայացված այս սքանչելի պատկերի մեջ մեր հայրենի իշխանության ազատամիտ վերաբերումը հանդեպ Սփյուռքի հայության բերելիք նպաստի: Կողջունեմ: Եվ ասիկա քաջալերանք պիտի ըլլա բոլորիս: Անավասիկ, մեզի կրսեն Վեհափառ Հայրապետի ձայնով մեր հայրենի իշխանությունները, և վստահաբար անոնց մեջ են նաև խորհրդային վերին իշխանությունները, որ ազատ զգացեք, խորհրդակցեցեք և ոչ թե մեր կողմե միայն ձեզի առաջարկված և միայն մեր տեսակետը ունեցող գաղափարները յուրացուցեք, այլ նաև մեզի տվեք ձեր գաղափարները, ձեր տեսակետները: Եվ ատոր մեջ ես կհավատամ հետևյալ փիլիսոփայության, որ պիտի որդեգրվի այս վերաշինության գործի մեջ. ոչ թե փոխարինումը կործանվածին կամ կորածին, այլ ավելի զարգացումը, քան կար: Եթե այդ չըլլա փիլիսոփայությունը մեր ընելիքին, կկարծեմ, որ քարին տեղ քար դնելով, մենք մեծ գործ ըրած չենք: Եվ վստահ եմ, Վեհափառ, որ պիտի ուսումնասիրվին նաև պատկան իշխանությանց և մասնագետներու կողմե, թե ինչ սկզբունքներու վրա պիտի ըլլան վերաշինության աշխատանքները, որպեսզի ըլլա աղետյալ շրջանի հայությունը, ըլլա Հայաստանի հայությունը, ըլլա Խորհրդային Միության մյուս երկիրներու հայությունը, ըլլա արտասահմանի հայությունը, վստահությամբ նային վաղվան:

Հետևաբար, Վեհափառ, կողջունեմ այս հավաքույթը և կրեռեմ իմ ամբողջ մասնակցությունս Լանուն Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության:

Ամսի 7-ին տեղի ունեցավ խորհրդակցական ժողովի երկրորդ նիստը, որտեղ տարբեր կազմակերպություններ ներկայացրեցին իրենց կազմակերպած հանգանակությունների հետևանքով ստեղծված ֆոնդերը, որոնք հասանելի էին, մանավանդ որ բոլոր կազմակերպություններն էլ խոստացան շարունակել աշխատանքներն այդ ուղղությամբ:

Երկօրյա ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի փակման խոսքով, որտեղ Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց բոլորին՝ իրենց հայրենասիրական ջանքերի համար:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ
Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(7 փետրվար 1989 թ.)

Այս խորհրդակցական ժողովը, զոր հովանավորեցին Ամենայն Հայոց կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, արդեն իր ավարտին հասավ: Ես պիտի ավելցնեմ՝ բարեհաջող ավարտին: Հուզումով կողջունեմ այս հաջողությունը և պատմական կնկատեմ նույնիսկ: Եթե չեմ սխալիր, վերջին 50—60 տարիներու ընթացքին այդպիսի ամբողջական կերպով միասնական հայկական համագումար տեղի չէ ունեցած: Իմ վերադարձին, հավանաբար Երևանի հեռուստացույցեն ես ելույթ կունենամ, որպեսզի ներկայացնեմ այս հանձնաժողովին գործունեությունը: Եվ Հայաստանի ժողովուրդը, վստահ եղեք, պիտի ուրախանա և ոգևորվի ոչ միայն ձեր խոստացած նյութական օժանդակությամբ, այլ նաև այս միասնության փաստով: Ահա թե ինչու ես պարտք կզգամ շնորհակալություն հայտնել ձեզ բոլորիդ: Ձեզմե շատերը հեռավոր քաղաքներե և երկիրներե եկաք այստեղ մեր հրավերով, սրտցավությամբ և պատրաստակամությամբ օգնության ձեռք երկարելու մեր վիրավոր Մայր Հայրենիքին: Եվ ես շատ ուրախ եմ, որ առանց նույնիսկ նախօրոք խորհրդակցելու Գարեգին Բ Վեհափառի հետ, այս օրերուն միանման և միատեղ կմտածենք և միանման կզգանք: Եվ ես կուզեի ավելցնել, թե ամբողջապես կյուրացնեմ Գարեգին կաթողիկոսի քիչ առաջվա առաջադրանքը, որ այսօր թեև մեր խորհրդակցական ժողովը իր ավարտին հասավ, բայց բուն գործունեությունը, աշխատանքը այսօրվնե պիտի սկսի և պիտի շարունակվի երկար ժամանակ: Ես կօրհնեմ այս խորհրդակցական ժողովը և կօրհնեմ ձեր ապագա գործունեության ճանապարհը:

Պահ մը կուզեմ անդրադառնալ նաև գործնական մեկ քանի հարցերու: Ուրեմն, այն բոլոր կազմակերպությունները, որոնք ստանձնեցին շինարարական պարտականություններ, նկատի ունենք, որ մանրամասները, վերջնական ճշտումները և ձևակերպումը պիտի ստանան Երևանի մեջ, երբ ներկայացուցիչները գան և խորհրդակցին այնտեղի պատկան մասնագիտական հանգամանք ունեցող մարդոց և իշխանություններու հետ: Ինչ կվերաբերի ճարտարապետական արտաքին տեսքին, կուզեի հիմակվնե ձեր ուշադրության հանձնել, որ բոլորովին մոդեռնիստ ոգիով պիտի չշինվին Ստեփանավանի կամ ընդհանրապես ավերված քաղաքներու շինությունները:

Ներսը նորագույն ճարտարապետական սկզբունքներու կիրառումը հանձնարարելի է: Բայց արտաքին ճարտարապետական տեսքի մեջ Հայաստանի իշխանությունները սկզբունք մը որդեգրած են, որ ինչ-որ չափով ամեն հանրային շենք, երեք-չորս հարկանի շինություններ, իրենց արտաքին տեսքով համաձայն ըլլան հայ ճարտարապետական դասական ազգային ոճին հետ: Ասիկա, անշուշտ, բնավ չի նշանակեր, որ վերարտադրումը ըլլա, պատճենը ըլլա հին միջնադարյան մեր ճարտարապետական կոթողներուն կամ ոճին: Սակայն ինչ-որ գունավորում, դիմագծություն մը ունենան հայկականության, ազգային ճարտարապետական իմաստով, որպեսզի օտար ճամբորդ մը զգա, որ Հայաստանի մեջ կգտնվի, ինչ ոգիով որ կառուցված է Երևանը, մանավանդ իր կեդրոնական մասերով: Երևանը, անշուշտ, աշխարհի ամենագեղեցիկ քաղաքը չէ, բայց Երևանը ամենահայկական քաղաքն է ամբողջ աշխարհի վրա: Եվ ասիկա կպարտինք հանճարեղ Թամանյան ճարտարապետին, որ հիմքը դրավ այս ուղղության: Այդ ոգին պետք է շարունակվի, մանավանդ, որ այն շրջանները, ուր քանդված են մեր քաղաքները, ժողովուրդը, լենինականցիները մանավանդ, չափազանց զգայուն են և չափազանց պահանջկոտ, որ իրենց քաղաքը իր ավանդական հայկական դիմագծությունը, ոճը պահպանե: Կարելի է նույնիսկ ըսել, թե ոճը շինության հոգին է, և այդ հոգին հայկական պետք է ըլլա: Ինչպես Կոմիտաս վարդապետի երգերը հայկական են, ինչպես Արամ Խաչատուրյանի սիմֆոնիաները հայկական են և տակավին օրինակներ շատ կրնայի ավելցնել: Ահա այս հայկական ազգային ոճի պահպանությունը, իմ կարծիքով, վճռական նշանակություն ունի այս ավերված քաղաքներու վերաշինության ճամփուն վրա:

Շատ կարևոր սկզբունք մը քիչ առաջ մատնանիշ ըրավ մեր Գարեգին եղբայրը օտար բառ մը օգտագործելով, ես ալ նույն բառը պետք է օգտագործեմ՝ դեվելոփմընթ (զարգացում) բառը: Շատ կարևոր է, որ չորս քաղաքներու տարածքի վրա, Լենինական, Սպիտակ, Ստեփանավան և Կիրովական, բացի հիվանդանոց կամ կրթական հաստատություններ կամ նման շենքեր կառուցելե, կարևոր է նաև, շատ կարևոր, այդ շրջաններու տընտեսական կյանքի վերելքի զարգացման համար նաև ուշադրություն դարձնել գործարաններուն, ֆաբրիկաներուն, որովհետև այդտեղ նույնպես արևմտյան տեքնոլոջիի մեծ կարևորությունը պետք է ընդունիլ: Գուցե ոմանք նույնիսկ իրենց կարծիքը փոխեն, վերջիվերջո վերջնական քարացած որոշումներ չէ, որ տվինք այստեղ, այլ պետք է մտածենք այնպիսի գործեր կատարել, իրականացնել այդ շրջաններու մեջ, որոնք իրոք համապատասխան ըլլան մեր երկրի կարիքներուն, անոր հառաջադիմության պայմանները ամրապնդող: Եվ այդ տեսակետեն ֆաբրիկաներու, գործարաններու շինությունը նույնպես շատ կարևոր է, նորեն կկրկնեմ, արևմտյան տեքնոլոջիի հիման վրա: Եթե Գարեգին Վեհափառը համաձայն է, եկեք պարտականություն ստանձնենք հետապնդելու այս գաղափարը նաև հետ այսու:

Ուրեմն, ընդունեցեք կրկին իմ շնորհակալությունը, իմ սերը, իմ գնահատանքը, իմ քաջալերանքը և Աստուծո օրհնությունը Ս. Էջմիածնեն: Ցտեսություն:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԸՆԹՐԻՔ ԵՎ ԱՂՈԹՔ

Փետրվարի 7-ի երեկոյան Ս. Վարդան Մայր տաճարի սրահում կազմակերպված էր էկումենիկ ընթրիք բոլոր քույր Եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հավարտ ընթրիքի, Մայր տաճարում տեղի ունեցավ էկումենիկ աղոթք՝ երեկոյան ժամերգություն և հոգեհանգիստ մեծ աղետի զոհերի հոգիների փրկության համար: Էկումենիկ աղոթքին քույր Եկեղեցիների ղեկավարներին շնորհակալիքի խոսքով հանդես եկավ Գարեգին Բ կաթողիկոսը: Հանուն քույր Եկեղեցիների և ականատեսի վկայությամբ հանդես եկավ ԱՄՆ-ի նշանավոր հասարակական գործիչ և քարոզիչ Ջեյսի Ջեկսոնը:

ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ

Փետրվարի 8-ին Նյու Յորքի հայոց առաջնորդարանում գումարվեց ԱՄՆ-ի թեմական ժողովը, որին նախագահում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Թեմական առաջնորդները ներկայացրին թեմերում կատարվող աշխատանքները երկրաշարժի ենթարկված Մայր Հայրենիքի անմիջական օգնություն հասցնելու համար: Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց կատարված աշխատանքի համար, բայց և ոգի ու եռանդ մաղթեց համազգային պատասխանատվության զգացումով շարունակելու սկսած գործը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

Փետրվարի 8-ին երկու Վեհափառները մեկնեցին Վաշինգտոն, նախագահելու Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայ Եկեղեցու կողմից կազմակերպված պաշտոնական ճաշկերույթին:

Ճաշկերույթին հրավիրված էին քույր Եկեղեցիների պետերն ու Հայաստանին օժանդակության ձեռք մեկնած երկրների դիվանագետներ:

Ողջույնի և բարիգալստյան խոսքով հանդես եկավ ճաշկերույթի հանդիսավար պրն. Կարլ Բազարյանը.

«Բարի երեկո: Ես Կարլ Բազարյանն եմ: Ես պատիվն ու առանձնաշնորհումը ունեմ լինելու հանդիսավարը այս պատմական առիթին, երբ մեր հայ հոգեոր առաջնորդները և հայկական համայնքը ձեռք-ձեռքի են տալիս «Շնորհակալություն» ասելու համաշխարհային հասարակայնությանը՝ նրա շատ ասպետական և սիրտ ջերմացնող օգնության համար՝ մեր աղետյալ եղբայրներին ու քույրերին Խորհրդային Հայաստանում:

Մենք, հայերս, այս համայն մարդկային ողբերգության ժամանակ, երբ դեկտեմբերի 7-ին մոտ 25000 կյանքեր անհետացան կործանիչ երկրաշարժից և հարյուրհազարավոր ընտանիքներ անտուն դարձան, անդրադարձանք, որ մենք գթասիրտ ու սիրող համաշխարհային հասարակայնության մի մասն ենք:

Այստեղ ներկա են դիվանագետներ ավելի քան 54 պետություններից և Վատիկանից, որոնք բոլորն էլ պաշտոնական շտապ օգնություն են ուղարկել Հայաստան:

Նրանց անսակարկ և անգնահատելի արձագանքը այս ողբերգության կտրեց-անցավ էթնիկ, կրոնական, գաղութարական և ազգային սահմանները: Ե՛վ զարգացած, և՛ զարգացող երկրները գործեցին ձեռք-ձեռքի՝ առատորեն ապահովելու համար նյութական և դրամական օժանդակությունը:

«Շնորհակալության» այս երեկոն ընծայվում է նաև ամբողջ աշխարհին՝ անհատներին, կազմակերպություններին և ֆոնդերին՝ իրենց մասնակցության համար: Մենք դեռևս կարիքը կունենանք նրանց օգնության:

Այժմ ես պատիվն ունեմ կարդալու պաշտոնական օգնության մանրամասն ցուցակը:

Ալժիր
ԱՄՆ
Անգլիա
Ավստրալիա
Ավստրիա
Արաբական Միացյալ Էմիրություններ
Բանգլադեշ
Բելգիա
Բուլղարիա
ԳԴՀ
ԳՖՀ
Դանիա
Եգիպտոս
Իռլանդիա
Իսլանդիա
Իսպանիա
Իսրայել
Իտալիա
Լեհաստան
Լիբանան
Լյուքսեմբուրգ
ԽՍՀՄ
Կանադա
Կիպրոս
Կուբա
Հարավային Կորեա
Հարավսլավիա
Հնդկաստան
Հոլանդիա
Հոնգկոնգ
Հունաստան
Հունգարիա
Ճապոնիա
Մադագասկար
Մարոկկո
Մոնղոլիա
Նոր Զելանդիա
Նորվեգիա
Շվեդիա
Շվեյցարիա
Շրի Լանկա
Ուգանդա
Չեխոսլովակիա
Չիլի
Չինաստան
Պակիստան
Ռումինիա
Սաուդյան Արաբիա
Սինգապուր
Սիրիա
Վատիկան
Քենիա
Ֆինլանդիա
Ֆրանսիա

Անշուշտ այս ֆենոմենալ համաշխարհային օգնությունը դյուրացավ «Դլաստնոստի» պայմաններում, երբ ԽՍՀՄ և ԱՄՆ գործեցին միասին այս մարդասիրական ջանքերի մեջ: Դրա ապացույցն է այս շաբաթվա օդային տեղափոխումը ծանր վիրավորների, որոնց մեջ կան նաև երեխաներ՝ ԱՄՆ-ում բժշկական օգնություն ստանալու համար:

Մեր պատմության 20-րդ դարի փորձության պատճառով մենք հարկադրվեցինք դառնալ Սփյուռք: Ուստի, հնարավորություն ունենք «Շնորհակալություն» հայտնել բազմաթիվ լեզուներով (հայերեն, ռուսերեն, արաբերեն, իսպաներեն, ֆրանսերեն և գերմաներեն): Բայց այս երեկո մենք ասում ենք «Շնորհակալություն Ձեզ» մեկ սրտից՝ հայ ժողովրդի սրտից: Մեր

«Շնորհակալության» խորհրդանշական արարքը բավական չէ արտահայտելու մեր լիասիրտ երախտագիտությունը բոլորիդ, ովքեր օգնում եք մեղմացնելու մեր ժողովրդի տառապանքն ու վիշտը: Հավատացեք, որ Ձեր գործողությունները երբեք չեն մոռացվի. դրանք հավիտյանս կապրեն բոլոր հայերի սրտերում:

Մեր վերակառուցման աշխատանքները նոր են սկսում՝ վերականգնելու համար մարդկային և նյութական վնասները: Սակայն մենք անընկճելի ժողովուրդ ենք, և մենք կհարստանենք և կաճենք միասին:

Շնորհակալություն Ձեզ»:

Ապա խոսք առավ ԱՄՆ-ի սենատի փոքրամասնականների ղեկավար Ռոբերտ Դոուլը, որը խոր ցավակցություն հայտնեց հայ ժողովրդին այս սարսափելի աղետի առթիվ և հույս հայտնեց, որ հայ ժողովուրդը արժանապատվությամբ դուրս կգա այս ծանր վիճակից: Հարգելի պրն. սենատորը արտահայտեց ԱՄՆ-ի պետության և Ամերիկայի ժողովրդի պատրաստակամությունը՝ զորավիգ լինելու հայ ժողովրդին իր բոլոր ջանքերի մեջ:

Հետո ելույթ ունեցավ ԱՄՆ-ի ներկայացուցիչների տան մեծամասնական պրն. Տոնի Կոելհոն, որ խոր վիշտ արտահայտեց աղետի առթիվ և պատրաստակամություն՝ նյութապես և բարոյապես աջակցելու հայ ժողովրդին:

Հրավիրյալների անունից ելույթ ունեցավ նաև սենատոր Կարլ Լևինը և ի միջի այլոց ասաց. «Այնքան ժամանակ, որ Հայաստանում հայրեր և մայրեր կան առանց երեխաների, և երեխաներ՝ առանց հայրերի և մայրերի, մարդկության խիղճը չի կարող հանգիստ լինել: Այսօր հայերին հիշում են աշխարհի բոլոր անկյուններում և օգնության ձեռք են երկարում. սա մարդկության խղճի արթնացման արտահայտությունն է»:

Հետո հանուն դիվանագիտական ներկայացուցիչների ելույթ ունեցավ Կոնտ Ուիլհեմ Ուախտմայստերը՝ Շվեդիայի դեսպանը ու Վաշինգտոնում դիվանագիտական կորպուսի տեսուչը: Նա հանուն իր կառավարության և ներկա դիվանագիտական ներկայացուցիչների վշտակցեց հայ ժողովրդին այս ահավոր աղետի առթիվ և կրկնեց իրենց երկրների պատրաստակամությունը՝ հետ այսու ևս օգնելու աղետյալ Հայաստանին՝ շարունակելու իր գոյությունը, մշակույթն ու պատմությունը:

Ապա խոսք տրվեց Գարեգին Բ կաթողիկոսին, որը խոսեց երկրաշարժի մասին, տվեց ականատեսի վկայություններ իր այցելությունից և հատկապես ընդգծեց հայ ժողովրդի միասնական կամքը՝ համատեղ գործունեությամբ վեր հառնելու ավերակներից: Մատնանշեց Եկեղեցու կարևոր դերը այդ աշխատանքում: Ապա անդրադարձավ համաշխարհային օգնությանը և շնորհակալություն հայտնեց ներկաներին և նրանց երկրների կառավարություններին մարդասիրական հոգածության համար:

Հետո խոսք առավ Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսը.

. . . . . .

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

(8 փետրվար 1989 թ.)

Կմտածեմ այս պահուն ինչպես սկսել իմ խոսքը: Երևի գոհության աղոթք մը պետք է ըլլա առ Աստված, որ ինձ կշնորհե այս սքանչելի պահը: Այս հավաքույթը նվիրված է շնորհակալության գաղափարին, որով

կուզեի իմ շնորհակալությունը հայտնել նախ ձեր ներկայության համար, որ մեզ կշրջապատեք, բայց մանավանդ [illegible]ն շնորհակալություն, որ այստեղ կգտնվին, մեր հոգևոր եղբայրներու հետ միասին, Ամերիկայի Միացյալ Նահանգաց և Խորհրդային Միության պետությանց բարձր ներկայացուցիչներ, ինչպես նաև բարեկամ պետություններու դեսպաններ: Իմ բարի մաղթանքները և իմ օրհնությունը բոլոր մեծահարգ ներկաներուն: Թող Աստված բոլոր պետությունները և ժողովուրդները պահպանե միշտ խաղաղության և բարօրության մեջ: Մանավանդ մենք՝ հոգևորականներս, պարտականությունը ունինք տևապես աղոթելու բոլոր ազգերու, բոլոր պետություններու համերաշխության և ամբողջ աշխարհի վերջնական խաղաղության համար:

Հայաստանի հյուսիսային շրջաններու մեջ տեղի ունեցած սարսափելի երկրաշարժը աշխարհի երկրաշարժերեն ամենասաստիկներեն մեկը եղավ: Ինչպես գիտեք, ամբողջապես կամ մեծ չափով քանդված են չորս քաղաքներ և հիսունութ մեծ գյուղեր: Մեր ժողովուրդը կսգա ավելի քան քսան հազար մեռյալներ և գրեթե նույնքան վիրավորներ, որոնց տակավին մեծ մասը ծանր վիճակի մեջ են: Եվ, դժբախտաբար, զոհվածներու մեծ մասը, վաթսունհինգ տոկոսը երեխաներ են: Այս ողբերգական պատուն սակայն մեր ժողովուրդը միակ չմնաց: Գրեթե աշխարհի բոլոր պետությունները, Արևելյան և Արևմտյան Եվրոպայեն, Ամերիկայի ցամաքամասեն, արաբական երկրներեն և հեռավոր Արևելքեն, ամեն տեղեն եկան ցավակցական արտահայտություններ և օգնություններ: Եվ, բնականաբար, Խորհրդային Միության բոլոր հանրապետություններեն: Խորհրդային Միության կեդրոնական կառավարությունը բացառիկ միջոցառումներու ձեռնարկեց. շուրջ տասը միլիարդ ռուբլի քվեարկած է, նպատակ ունենալով երեք-չորս տարիներու ընթացքին վերակառուցել և՛ ավերված քաղաքները, և՛ գյուղերը: Նաև աշխատող ձեռքեր եկան Խորհրդային Միության տարբեր հանրապետություններե: Այսօր Հայաստանի ավերյալ շրջաններու մեջ կաշխատեն 65 000 բանվորական ուժեր իրենց գործիքներով՝ եկած Ուկրաինայեն, Ռուսաստանեն, Մոլդավիայեն, Վրաստանեն, Բալթյան երկրներեն և ուրիշ հանրապետություններեն: Եվ Միութենական այդ հանրապետություններեն եկող ուժերը մինչև ամառ պիտի հասնեն 180 000-ի, որպեսզի արագ թափով վերաշինության աշխատանքներ ծավալվին: Ես անձնապես այցելեցի երկու անգամ այդ շրջանները և աչքովս տեսա այդ հսկայական աշխատանքը, որ սկսած է կատարվիլ: Հարց կարող եք տալ ինձ, թե ես ինչո՞ւ եկա Ամերիկա: Ես եկած եմ ոչ թե ձեզմե օգնություն խնդրելու, այլ եկած եմ պատասխանելու համար ձեր օգնելու ցանկության, որովհետև արտասահմանի ամբողջ հայությունը հոգեպես ցնցվեցավ այս երկրաշարժի առիթով և անխտիր բոլոր հայերը պատրաստակամություն կհայտնեն ամեն մեկը ինչ-որ չափով օգտակար ըլլալու ավերված քաղաքներու վերաշինության գործին: Եվ ես իմ հոգևոր եղբոր՝ Գարեգին կաթողիկոսի հետ եկա այստեղ, որպեսզի մենք միասին մեր օրհնությունը բերենք այդ օգնության գործի սկզբնավորության: Եվ մեր նպատակի մեջ մենք հաջողեցանք, որովհետև արդեն երկուշաբթի և երեքշաբթի օրերը, ամբողջ Ամերիկայի մայրցամաքեն, Կանադայեն սկյսող մինչև Բուենոս Այրես, հայ համայնքներեն եկան ներկայացուցիչներ, որոնք ծանոթացան վերաշինության ծրագիրներուն և ամեն մեկ համայնք ու կազմակերպություն որոշեցին իրենց օգնության բաժինը բերել: Մենք սկզբունք մը որդեգրեցինք, որ հավաքված դրամները ոչ թե Հայաս-

ետաՀ փոխանցվին իբրև դրամ, այլ այդ դրամներով ամեն մեկ կազմակերպություն այս երկրին գնե այն պիտույքները, սարքավորումները, որոնց կարիքը կա վերաշինության համար: Անշուշտ, այս բոլորը պիտի կատարվին պլանավորված ձևով, կազմակերպված ձևով: Ես այստեղ չեմ կրնար մոռնալ օգնությունները նաև քույր Եկեղեցիներու կազմակերպություններեն՝ Ամերիկայեն, Արևմտյան Գերմանիայեն, Իտալիայեն, Ֆրանսայեն, Կաթոլիկ և Լյութերական Եկեղեցիներեն, Լեհաստանեն, Զվիցերիայեն և Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդեն: Հայաստանյայց Եկեղեցին երախտապարտ է բոլոր այն պետություններուն, բոլոր կազմակերպություններուն, բոլոր Եկեղեցիներուն, որոնք օգնության ձեռք կերկարեն մեր վիրավոր երկրին: Բայց կարևոր է ոչ միայն նյութական օժանդակությունը, այլ նաև այն մարդասիրական վերաբերմունքը, որ մեր ժողովուրդը զգաց եղբայր ժողովուրդներու կողմե, քույր Եկեղեցիներու կողմե: Բառի ամբողջական իմաստով մեր ժողովուրդը զգաց, որ իսկապես ամբողջ աշխարհը իր հետ է այս ծանր օրերուն: Հայ ժողովրդի վիշտը համաշխարհային միասնություն ստեղծեց: Եվ որպես խորհրդանիշ այս երևույթին, մեկ պարագա կուզեմ հիշել. պրեզիդենտ Բուշի որդիի և թոռան այցելությունը Ծննդյան օրերուն, որ բացառիկ նշանակություն ունեցավ մեր ժողովուրդի բարոյականը բարձրացնելու համար: Երևանի թելեվիզիոնեն ցույց տվին, թե ինչպես պրեզիդենտ Բուշի որդին հիվանդանոցի մեջ վիրավոր երեխա մը գրկեց և աչքերեն արցունք գլորեցավ: Այս բոլորը մեզ կմխիթարեն, և կզորացնեն, և կհուսադրեն: Մեր ժողովուրդը անցյալի մեջ ալ դժբախտություններ ունեցած է, դուք լավ գիտեք: 1915-ին մեր ժողովուրդը մոտ երկու միլիոն նահատակ տվավ: Կթվեր, թե հայ ազգը թանգարանի առարկա պիտի դառնա աշխարհի վրա: Բայց այդպես չեղավ: Երեք տարի հետո մեր ժողովուրդը իր ուժերը վերագտավ և ոչ միայն գոյատևեց, այլ նոր հայրենիք ստեղծեց 1918-ի Մայիսյան հաղթանակով: Հայ ժողովուրդը ապրած է ու պիտի ապրի տեսիլքովը Մեծ Սաղմոսերգուի՝ «Արտասուքով կսերմանե, բայց ցնծությամբ կհնձե»:

Այս երկրաշարժի հետևանքով հատկապես Ամերիկայեն բազմաթիվ թղթակիցներ, ռադիոյի և հեռուստատեսության ներկայացուցիչներ Հայաստան եկան: Այսպիսով հարաբերություն ստեղծվեցավ ուղղակի Հայաստանի և Ամերիկայի միջև: Դուք գիտեք, որ վերջին տարիներուն, բարեբախտաբար, Խորհրդային Միության դռները լայն բացված են դեպի Ամերիկա և փոխադարձաբար: Սքանչելի գործակցություն մը սկսած է Խորհրդային Միության և Միացյալ Նահանգներու միջև: Հիմա նոր դռներ բացվեցան Խորհրդային Միութենեն դեպի Ամերիկա, այս անգամ Հայաստանեն: Թող Տերը օրհնե այս բարեկամությունը և գործավարությունը ի խնդիր աշխարհի խաղաղության հետզհետե առավել ամրապնդման:

Մեր բարի մաղթանքները և օրհնությունը բոլորիդ: Ամեն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՒՇԻ ՀԵՏ

Փետրվարի 9-ի առավոտյան նշանակված էր ընդունելություն ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բուշի հետ: Երկու Վեհափառները Սպիտակ Տուն ժամանեցին Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի և Ռաբբի Արթուր Շնայերի ուղեկցությամբ:

Սարսափելի աղետի հետևանքներով մտահոգության սրտացավ մթնոլորտում Վազգեն Վեհափառը Տիար Բուշին ներկայացրեց աղետի հետևանքների իրական վիճակը, բացատրեց իրենց առաքելության նպատակը, գոհունակություն հայտնեց ԱՄՆ-ի պետության և ժողովրդի մարդասիրական օժանդակության համար և անձնապես Տիար Բուշի վշտակցության համար, որը իր որդուն և թոռանը ուղարկեց Հայաստան՝ բերելու նախագահի ցավակցությունները ու մխիթարելու հայ մանուկներին: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ Տիար Բուշի գլխավորած կառավարությունը կշարունակի իր մարդասիրական օգնությունը Մայր Հայաստանին:

Տիար Բուշը խոր վշտակցություն հայտնեց Հայաստանի կառավարությանը, Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին տարերքի այս դաժան հարվածի համար և պատրաստակամություն արտահայտեց կատարել առավելագույն հնարավորը՝ օգնելու հայ ժողովրդին՝ ոտքի կանգնելու այդ ավերակներից և իր արժանի լուման ներդնելու համաշխարհային մշակույթի զարգացման մեջ:

Ընդունելությունից հետո զույգ կաթողիկոսները հրավիրվեցին կապիտոլ, որտեղ կոնգրեսի բացման աղոթքի պատիվը շնորհվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Ապա հանդիպում տեղի ունեցավ կոնգրեսմենների հետ՝ աղետի և նրա հետևանքների վերացման ի խնդիր:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՄՆ-ՈՒՄ ԽՍՀՄ-Ի ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Փետրվարի 9-ին երկու Վեհափառներին ընդունեց ԱՄՆ-ում ԽՍՀՄ-ի դեսպան պրն. Յուրի Դուբինինը: Ներկա էին նաև բազմաթիվ դեսպաններ կամ նրանց ներկայացուցիչները: Պաշտոնական ճաշին ելույթ ունեցավ պրն. դեսպանը և վշտակցեց հայ ժողովրդին: Վեր հանեց Խորհրդային պետության հաստատակամ վճռականությունը եղբայրական մեծ ընտանիքով օգնելու աղետավոր հայ ժողովրդին՝ նրան դուրս բերելու ավերակների և տագնապի այս վիճակից, ամենակարճ ժամանակում վերականգնելու Հայաստանի հանրապետության կյանքի բնականոն ռիթմը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը խորին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար և ընդգծեց, որ ամենակենսականն ու ամենաուշագրավը պիտի լինի Խորհրդային պետության և ժողովուրդների օգնությունը, որովհետև ավերածություններն ու կորուստները այնքան մեծ են, որ անհնար է արտաքին օգնությամբ միայն վերականգնել: Աշխատանքների հիմնական ծանրությունը ընկնելու է եղբայր ժողովուրդների վրա, հայ ժողովուրդը երախտապարտ է այդ եղբայրական օգնության համար:

ԽՍՀՄ-ի և խորհրդային ժողովրդին ուղղված շնորհակալության խոսք արտասանեց նաև Գարեգին Բ կաթողիկոսը:

ԱՐՏԱՍՎԱԽԱՌՆ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ

ԱՄՆ-ում Խորհրդային դեսպանատանը ընդունելությունից հետո երկու Վեհափառները առաջնորդվեցին զինվորական օդանավակայան, ուր սպասվում էր ժամանումը այն օդանավի, որ Հայաստանից ծանր վիրավոր երե-

U.S. House of Representatives

CERTIFICATE

This certification of recognition and appreciation is presented to

HIS HOLINESS, VAZKEN I

who gave the opening prayer at a session of the U.S. House of Representatives, The Capitol, Washington, D.C., on THURSDAY, FEBRUARY 9, 1989.

Speaker.

Chaplain.

Attest: Clerk of the House.

խաներին պետք է բերեր Միացյալ Նահանգներ մասնագիտական բուժման համար:

Օդանավակայանի սպասասրահում երկու Հայրապետները հանդիպում ունեցան տիկին Բուշի հետ, որը նույնպես եկել էր դիմավորելու Հայաստանցի աղետյալ երեխաներին: Տեղի ունեցավ սրտագին ջերմ զրույց երեխաների վիճակի բարելավման մասին: Երկու Վեհափառները շնորհակալություն հայտնեցին տիկին Բուշին մայրական խանդաղատանքի համար, որ ցուցաբերում է հայ երեխաների նկատմամբ:

Հետո զույգ կաթողիկոսները մտան օդանավ, աղոթեցին Աստծուն՝ երեխաներին շուտափույթ ապաքինում պարգևելու համար, մխիթարեցին հիվանդներին և նրանց ուղեկցող հարազատներին՝ լավատես հույսով:

Ապա Վեհափառները մեկնեցին քաղաքացիական օդանավակայան և օդանավ առին դեպի Նյու Յորք:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

Փետրվարի 9-ին Նյու Յորքի ժամանումից անմիջապես հետո երկու Հայրապետները ընդունելության արժանացան Ռաբբի Արթուր Շնայերի և «Կոչ խղճմտանքի ֆոնդ»-ի կողմից:

Ընդունելությանը ներկա էին բազմաթիվ երկրների դեսպաններ ու դիվանագետներ, քույր Եկեղեցիների պետեր և Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ և ազգային գործիչներ ու մտավորականներ:

Երկրաշարժի հետևանքների վերացման ու համաշխարհային հասարակայնությանն մարդասիրական օժանդակության մասին ելույթ ունեցավ Ռաբբի Արթուր Շնայերը, շնորհակալության խոսքով հանդես եկան Վազգեն Ա Ամենայն Հայոց և Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսները: Տեղի ունեցավ նվերների փոխանակում:

Այս էկումենիկ ընդունելությանը իր ողջույնի խոսքն էր հղել Նյու Յորքի քաղաքապետ պրն. Էդուարդ Քոչը.

«ԿՈՉ ԽՂՃՄՏԱՆՔԻ ՖՈՆԴ»-ԻՆ

Սիրելի բարեկամներ,

Բոլոր կրոնների և դավանանքների նյույորքցիները միանում են ինձ, երբ ես հղում եմ իմ բարեմաղթությունները բոլոր ներկաներին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Վազգեն Ա-ի պատվին հավաքված:

Անցյալ դեկտեմբերի 7-ին Խորհրդային Հայաստանը ավերվեց պատմության ամենամեծ երկրաշարժերից մեկի հետևանքով: Ավերումի տեսարանները, որ մենք տեսանք, ալեկոծեցին մեր սրտերը ընդմիշտ: Թվում էր, թե մեր դարը ավարտվում էր այնպես, ինչպես սկսվեց՝ հայ ժողովրդի անչափելի տառապանքներով:

Այս անգամ, այնուամենայնիվ, աշխարհը արձագանքեց: Ամերիկացիները—հայկական ծագումով, և բոլոր տեսակի ժառանգություններով, ինչպես «Կոչ խղճմտանքի ֆոնդ»-ի անդամները իրենք, նվիրատվությամբ պատասխանեցին Հայոց Թեմի Երկրաշարժի Ֆոնդի կոչին: Մեր սրտերն ու մեր ձեռքերը հասան իրար ամբողջ աշխարհով մեկ:

Այս էկյումենիկ ընդունելությունը լավագույնս արտահայտում է այն համակրանքը, որ ամերիկացիները ունեն հայերի նկատմամբ, այն արժանապատվության և հաստատակամության նկատմամբ, որ նրանք ցուցաբերեցին այս սարսափելի աղետի պահին, և բացառիկ կրոնական առաջնորդի նկատմամբ, որ ներկայացնում է նրանց այստեղ այս երեկո: Ես բերում եմ իմ լավագույն մաղթանքները Նորին Սրբությանը, բոլորիդ, որ աջակցում եք նրան՝ Նորին Սրբության առաքելության լիակատար հաջողության համար:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ

Փետրվարի 10-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Նյու Նորքի հայոց առաջնորդարանում ընդունեց հայ կաթողիկե համայնքի ներկայացուցիչներ Ներսես եպս. Սեթյանին և Հովհաննես վրդ. Դերձակյանին: Ապա Նորին Սրբությունն ընդունեց հայ բողոքական համայնքի ներկայացուցիչներ վերապատվելիներ Մովսես Ճանպազյանին և Կարլ Վարդան Ավագյանին:

Վերոհիշյալ հայ համայնքների ներկայացուցիչները Նորին Սրբությանը ներկայացրին իրենց պատրաստակամությունը՝ օժանդակելու վերականգնման համընդհանուր ջանքերին: Վեհափառ Հայրապետը գնահատեց այդ պատրաստակամությունը՝ հանձնարարելով միավորել աշխատանքները ընդհանուր գործին, որպես հարազատ զավակները մայր ժողովրդի:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

Փետրվարի 10-ին, կեսօրից հետո, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունեց մասնագետների մի մեծ խումբ՝ բժիշկներ, ինժեներներ, ճարտարապետներ, նկարիչներ և այլն, և նրանց հետ քննարկեց հետագա աշխատանքների ծավալն ու կարգը: Իր՝ Հայաստան՝ աղետի վայրեր այցելության լուսապատկերները բացատրություններով ցուցադրեց ամերիկահայ բժիշկ Հովսեփյանը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Փետրվարի 11-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելեց Նյու Յորքի Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի հովանու ներքև գտնվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Ամենայն Հայոց Հայրապետին սիրո ողջույնով ընդունեցին Գարեգին Բ կաթողիկոսը, Տաթև արքեպս. Սարգսյանը, Մեսրոպ արքեպս. Աշճյանը, եկեղեցականների դասը, ազգային գործիչներն ու հավատացյալների բազմությունը:

Ամենայն Հայոց Վեհափառին բարիգալստյան խոսքով դիմեց Մեսրոպ արքեպս. Աշճյանը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄՆ-Ի ՊՐԵԶԻԴԵՆՏ ՋՈՐՋ ԲՈՒՇԻ ՀԵՏ
(Վաշինգտոն)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՐՏԱՍԱՆՈՒՄ Է ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՊԱՀԻՆ
(Էջմիածին քաղաքի մշակութային պալատ—21 մարտ 1989 թ.)

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ (ԱՐՑԱԽ) ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ
(28 մարտի, 1989 թ.)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ԱԾԾՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Սա պահուն, բառերը կը պակսին ինձի՝ արտահայտելու համար այն խոր եւ անսահման ուրախութիւնը որ կը պատէ զիս՝ երբ, Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ Ս. Խորանին առջեւ, կ՚ողջունեմ ներկայութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի:

Երկրաշարժէն տուժած մեր Հայրենիքի ցաւը ամոքեցաւ, տառապանքը մեղմացնելու, եւ աւերակուած շէներն ու քաղաքները վերաշինելու իրենց համատեղ ճիգին եւ յառաջադրանքին մէջ՝ ազգիս հայրապետները ութը օրեր շարունակ մեր բոլորին տուին ազգային միասնականութեան եւ Քրիստոնէական սիրոյ գերագոյն օրինակը՝ հրաւիրելով մեզ, միաժամանակ որ հաւատարիմ մնանք մեր պատմութեան ձայնին: Եւ այդ ձայնին արձագանքն է վստահաբար, Հայրենի բանաստեղծը երբ դիմառնաբար կ՚ըսէ՝

«Հիմա մեզ է վստահած մեր
Պատմութիւնը երգ ու սիրոյ՝
Ժողովրդի կեանքը անմեռ
Գալիք տանող ջահը հրոյ:
Եւ իրաւունք չունենք, չունենք
Մոռանալու ոչ մի վայրկեան
Որ լոկ նրա այսօրը չենք,
Այլեւ՝ անցեալն ու ապագան»:

Այո, մեր հայրապետներուն պատգամն է մեզի՝ հաւատարիմ մնալ մեր անցեալին, մեր պատմութեան, մեր արիւնին, Հայկի ընտրած Հայոց աշխարհին եւ չմոռնալ որ մենք մեր ժողովուրդի այսօրը չենք միայն, այլ ե՛ւ անցեալը, ե՛ւ ապագան:

Վեհափառ Տէր,

Թոյլ տուէք, հայու եւ Քրիստոնեայի այս հաւատարմութեամբ ողջունել Ձեր ներկայութիւնը այս սուրբ տաճարէն ներս, եւ յանուն Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան շրջանի եւ Գանատայի մեր հոգեւորականութեան, ազգային ժողովականութեան եւ համայն ժողովուրդին, ողջունել Ձեր մէջ՝ մեր բոլորի հասարակաց հայրը, մեր սրբութեանց խորհրդանշանը, Արարատի պատկերը:

Վեհափառ Տէր,

Այս եկեղեցին, ուր կանգնած էք այժմ, հայ կեանքի ալեկոծ ծովուն դիմաց կանգնած խաղաղ նաւահանգիստն է եղած 1915-էն սկսեալ, երբ, գաղթական հայեր՝ դժուարին պայմաններու ներքեւ եւ սեւ աշխատանքի մաքուր քրտինքով վաստկած սէնթերով գնեցին, Հայ եկեղեցի դարձուցին այս եկեղեցին, եւ մեծ Եղեռնի չարաշուք թուականէն ասդին՝ այս եկեղեցին առաջին տունը դարձաւ բոլոր անոնց՝ որոնք այս ափերը հասան 1915-էն յետոյ, Իզմիրի աղէտէն յետոյ, եւ ապա Ռումանիայէն, Պուլկարիայէն եւ Միջին Արեւելքի տարբեր երկիրներէն՝ երբ հայու ճակատագիրի բերումով անգամ մը եւս արմատախիլ եղան: Եւ ինչ անոյշ է յիշել՝ որ այս եկեղեցւոյ խորանին արուեստագէտն ու Տիրամօր եւ մանուկ Յիսուսի նկարիչը Արշակ Ֆիթվաճեանն է, ան՝ որ երջանիկ պատահութիւնը ունեցաւ վերա-

դառնալ Հայրենիք, եւ իր նպաստը բերել վերածաղկող նոր Հայաստանին:

Ահա այս ապրումներով բարի գալուստ կը մաղթենք Ձեզի, Վեհափառ Հայրապետներ, այս եկեղեցիէն ներս, եւ բարի ճանապարհ՝ Ձեզի Ամենայն Հայոց Հայրապետիդ, երբ կը մեկնիք Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ու կը խնդրեմ, որ երբ հասնիք մեր բոլորին միակ Հայրենիքը՝ Արարատին նայիք մեր բոլորի աչքերով, եւ մեր ժողովուրդին ըսէք՝ Որ սիրոյ եւ արեան կապերով միասնացած մէկ ժողովուրդ ենք, եւ մեր բոլորին սիրտը կը բաբախէ Հայութեան հաւատարմութեան նոյն եւ նման սիրով, զոր դուք Ձեր ազնուական եւ վեհափառ հոգիով մեզի կը թողուք իբրեւ պատգամ:

Եւ իբրեւ կնիք իմ յարգանքի այս խօսքին՝ կ'ուզեմ կրկնել Հայրենի բանաստեղծ՝ Համլէթ Կարճիկեանի Մարգարէաշունչ բառերը՝ անցեալ Յուլիսին, «Գրական թերթ»-ին մէջ, ուր կ'երգէ հայութիւնը միախառնող, զոյգ Հայքերը բովանդակ իր մէջ գրկող սիրոյ եւ եղբայրութեան, Լոյսի գահին եւ փառքի տաճարին տանող երգը՝

«Այս ինչ հրաշք սէր է եղել
Կիլիկիայից մինչեւ Արցախ,
Հին Գողթնից մինչ նոր Երեւան
Երգ է դարձել աստուածային
Ու չի մտել երբէք դարան
Բազմած անմահ լոյսի գահին»:

Պատասխան խոսքով հանդես եկաւ Նորին Սրբություն Վազգեն Ա կաթողիկոսը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Նյու Յորք, 11 փետրվար)

«Յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Սիրեցյալ եղբայր մեր Գարեգին Բ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, սիրելի հոգևոր եղբայրներ և հարազատ հավատացյալներ: Ես կուգամ Հայաստանեն և նաև ձեզի կբերեմ ողջույնը Արարատի և ողջույնը հայաստանցի ձեր եղբայրներու և քույրերու ու Աստուծո օրհնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն: Իմ առաջին զգացումը, որ կունենամ այս պահուն, այն է, որ ինքզինքս կզգամ իմ տունիս մեջ, այնպես, ինչպես Գարեգին Վեհափառը ինքզինքը զգաց իր տունին մեջ Ս. Էջմիածին: Եվ միշտ հետայսու մենք այս զգացումը պիտի ապրինք ամեն անգամ, երբ գտնվինք մեր աղոթքի տուներու կամարներու տակ, ուր ալ ըլլան անոնք աշխարհի վրա:

Իմ բուն առաքելությունը, իմ և Գարեգին եղբոր առաքելությունն էր հովանավորել ամերիկահայության օգնության գործը վիրավոր Հայաստանին: Գործ, որ կկարծեմ իրականացավ հաջողությամբ, որուն մասին անշուշտ դուք տեղյակ եք: Այդ սկզբնավորությունն մըն էր: Կմնա, որ մեր երթալեն հետո ամեն մեկ եկեղեցական կազմակերպություն կամ ոչ եկեղեցական կազմակերպություն իր պարտականության բաժինը կատարե սրտցավությամբ և հայրենասիրական ջերմությամբ, ինչ-որ չափով օգտակար ըլլալու մեր ավերված քաղաքներուն և գյուղերուն և մեր տառապյալ ժողո-

վուրդին: Ես վստահ եմ, որ այս դժվար օրերը մենք կկարողանանք շուտով վերափոխել և հասնիլ այն կետին, այն հանգրվանին, որ մեր աչքերով իսկ տեսնենք վերակառուցումը քանդված քաղաքներու և գյուղերու, և նոր կյանքի լուսաբացը այդ շրջաններուն: Ես չեմ կասկածիր: Նախ, որովհետև մեր հայրենիքը միանակ չէ, ամբողջ Խորհրդային տարածքի վրա բոլոր հանրապետությունները լայն չափերով կմասնակցին կառուցողական-նյութական միջոցներով՝ և՛ մեքենականությամբ, և՛ բազուկներով: Ինչպես անցյալ օրերուն առիթով մը հիշեցի, այսօր այդ ավերյալ, աղետյալ շրջաններու մեջ հայ բանվորներու կողքին կաշխատին ավելի քան 60 000 Խորհրդային Միության տարբեր ազգություններու զավակներ, որոնց մեջ բացառիկ աշխատանքի եռանդով և նվիրվածությամբ կգործեն վրացիները, ուկրաինացիները, ռուսները, մոլդավացիները և բալկանյան երկիրներու բանվորական ուժերը: Դուք երևի արդեն տեղյակ եղաք մինչև հիմա մեր արտահայտություններեն, թե ինչպիսի մեծ չափերով նյութական և այլ օգնություններ կհասնին այնտեղ նաև արտասահմանի հայության կողմե և արտասահմանյան քույր եկեղեցական կազմակերպություններու և հասարակական, բարեսիրական, մարդասիրական կազմակերպություններու կողմե: Այս բոլորը մեզի վստահություն կներշնչեն, որ մեր դժվարությունները պիտի հաղթահարվին և երեք, չորս կամ ամենաշատը հինգ տարիներ հետո մենք պիտի կարողանանք ողջունել վերածնունդը աղետյալ շրջաններու: Անշուշտ, մինչև այդ, կացությունը կմնա ծանր: Այս օրերուն դժվար է հայ ըլլալ, ապրիլ և տեսնել մեր աղետյալ ժողովրդի զրկանքները, վիշտը, սուգը: Բայց նաև կմխիթարվինք, այո՛, այն իրողությամբ, որ գրեթե ամբողջ աշխարհը մեզի վշտակից է և պատրաստ իր օգնության ձեռքը երկարելու:

Առաջին անգամ կհանդիպիմ ձեզի այս աղոթքի տան կամարներու տակ և կզգամ, որ դուք ևս հարազատ զավակներն եք մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո: Վերջին երեսուն և ավելի տարիներու ընթացքին շատ իրադարձություններ տեղի ունեցան Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի հարաբերությանց ճանապարհի վրա: Այս բոլորը այլևս անցյալին կպատկանին: Բայց, այնուամենայնիվ, մեկ բան կուզեմ վերհիշել: 1956 թ., երբ ես եկա Անթիլիաս, կաթողիկոսական ընտրության առիթով: Գիտեք ինչպիսի կացություն ստեղծվեցավ այնտեղ. փոթորկված էր, ալեկոծված էր հայ եկեղեցական կյանքը այն աստիճան, թույլ տվեք խոստովանիլ, որ ես շվարեցա և նույնիսկ որոշ չափով հուսահատեցա և չկարողացա հասկնալ, թե ինչու այդքան ծայրահեղ հակամարտություններ կը-դրսևորվին հայ կյանքի մեջ եկեղեցական մակարդակի վրա: Երբ Ռոմանիա էի, այնտեղ ալ կողմեր կային և պայքարներ: Ազգային իշխանությունը մերթ ընդ մերթ կփոխվեր՝ նայած ընտրություններու արդյունքին: Բայց եկեղեցական կյանքը բոլորովին չէր ազդվեր բոլոր վերիվայրումներեն: Հետևաբար, փորձառությունը չունեի: Եվ թույլ տվեք ավելցնեմ, թե մինչև հիմա ալ չեմ հասկցած, թե ինչու այդքան փոթորկալի մթնոլորտ պիտի ստեղծվեր: Լավ կհիշեմ, վերջին օրերն էին, արդեն կացությունը այնպես էր, որ պետք է մեկնեի: Մեկնումեն օր մը առաջ էր կարծեմ, ես փափագ հայտնեցի երիտասարդ միաբաններուն և ուսանողներուն խոսիլ Դպրեվանքի կամարներու տակ: 30—40 միաբան և ուսանողներ կային, եպիսկոպոսներ ներկա չէին: Այդ երիտասարդներուն ուղղելով իմ խոսքը, ըսի. «Դուրսի ալեկոծումներեն և փոթորիկներեն դուք բնավ մի ազդվիք և ձեր հոգիի մեջ ամուր պահեցեք այն, ինչ որ մեր Եկեղեցին ձեզի ավանդած է և ուսու-

ցանած. ասոնք անցավոր երևույթներ են, դուք մնացեք հավատարիմ մեր հիմնական հավատալիքներուն», և ավելցուցի. «Հակառակ այս ստեղծված կացության և իմ հոգեկան ծանր վիճակին, կրնամ ըսել, մեր Եկեղեցվո ապագան է, որ ինչքան զորանա Կիլիկյան Աթոռը, այնքան Էջմիածինը զորավոր պիտի դառնա, և ինչքան զորանա Էջմիածինը, այնքան ինքզինք զորավոր պիտի զգա Կիլիկյան Աթոռը»: Այս խոսքերը ես արտասանեցի այդ պայմաններու մեջ 1956-ի փետրվարին, օրը չեմ հիշեր:

Հիմա, այսօր բոլորս, առանց բացառության, կհավատանք այդ ճշմարտության և իմ այստեղ ներկայությունը, և իմ ուղևորությունը Նյու Յորք, կկարծեմ, հոգեբանական նոր մթնոլորտ ստեղծեց, որպեսզի տակավ նոր ճանապարհ մը բացվի գործակցության ու միության, ոչ աճապարանոք, բայց հետևողականությամբ, բանակցություններով: Ինչ կվերաբերի Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի գործակցության Աթոռներու մակարդակի վրա, այդ իրականացած է լիովին: Գարեգին Վեհափառը Հայաստանեն իր վերադարձին Բեյրութ, իր խոսած քարոզին մեջ պատկերավոր ձևով հայտարարած է, որ «Հետ այսու ոսկե կամուրջ մը նետվեցավ Էջմիածնեն դեպի Անթիլիաս»: Ճշմարիտ է այդ, և այդ կամուրջը հետզհետե ավելի պիտի ամրապնդվի և ավելի բանուկ պիտի դառնա, և մենք տակավին շատ ծրագիրներ ունինք միասնաբար իրագործելու հոգուտ մեր Եկեղեցվո զորացման, հոգուտ մեր Եկեղեցվո ճառագայթումին քրիստոնյա աշխարհին մեջ և հոգուտ մեր ժողովրդի նաև ազգային շահերու հետապնդման:

Հարազատներ մեր, ես պիտի վերադառնամ Հայաստան իրապես մխիթարված սրտով հանգանակության գործի հաջող ելքի ու նաև այս մթնոլորտին համար, որ ստեղծվեցավ ամեն տեղ, Ս. Վարդան տաճարեն սկսյալ մինչև այստեղ, այսօր՝ մեր երկուքին այցելության առիթով: Ձեռքս խիղճիս վրա դրած, կվկայեմ, որ Հայաստանի ժողովուրդը ևս այս կսպասեր: Իսկապես ավետիս պիտի ըլլա նաև մեր Հայաստանի ժողովուրդի համար: Ամբողջ մեր ժողովուրդը, պետական մարմիններն ալ մեջը ըլլալով, իրենց դեմքը հույսով և հարգանքով դարձուցած են դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին և դեպի Հայաստանյայց Եկեղեցին: Մանավանդ այս դժվարին օրերուն տուժածները Եկեղեցիեն կսպասեն հոգեկան մխիթարություն, հույս, և՛ տոկալու ուժ, և՛ բուժվելու հրաշք: Խորհրդային Միության մեջ ծավալվող վերակառուցման ճանապարհի վրա Եկեղեցի-պետություն հարաբերությունները ևս հետզհետե կբարեփոխվին և քաջալերիչ կդառնան: Անշուշտ, Ղարաբաղյան փոթորկումն ալ որոշ չափով օգնեց, որովհետև հայ ժողովուրդը անդրադարձավ, որ Եկեղեցիով առավել կպայծառանա հայ ազգի ազգային գիտակցությունը: Աս սղ շատ կարևոր հանգամանք է: Ուրիշ խոսքով, հակառակ ծանր կացություններու, որոնց մեջեն անցավ մեր Եկեղեցին այնտեղ, մանավանդ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմ, երբ Եկեղեցին և Մայր Աթոռը հասած էին հուսահատության անդունդի եզրին, վերջին տասնամյակներուն կացությունը արմատապես սկսավ փոխվիլ: Քայլ առ քայլ մեր Եկեղեցին վերանորոգվեցավ, զարգացավ, և եկեղեցաշինական գործը իր ազատ և ընդարձակ ընթացքը ունեցավ: Իսկ այս օրերուն՝ առավել ևս: Արդեն Հայաստանի մեջ երկու նոր վանքեր և եկեղեցիներ բացվեցան, բայց որոշ վերանորոգության ենթակա են, որպեսզի գործող դառնան, և նաև, ինչ որ մեզի համար շատ կարևոր է, Ղարաբաղի մեջ, Արցախի մեջ արդեն երկու եկեղեցիներու բացման արտոնությունը ունինք, մեկը հյուսիսային շրջանին, մեկը՝ հարավային: 1980—82 տարի-

ներում Ղարաբաղի մեջ ոչ մեկ հայկական գործող եկեղեցի կամ վանք չէր մնացած: Վերջին 15 տարիներու ընթացքին քանի անգամ ես դիմումներ կատարած էի Բաքվի պետական իշխանություններուն, որ գոնե մեկ եկեղեցի՝ Գանձասարի վանքը հանձնվի մեզի, բայց ոչ մեկ պատասխան չընտացա: Հիմա սակայն, ահավասիկ, ես կարող եմ ձեզի ավետել, որ Գանձասարի վանքն ալ իր դռները պիտի բանա, և ես վստահ եմ, որ գուցե ոչ շատ ժամանակ անց: Գանձասարի վանքը կառուցված է 1288 թվականին, որ մեր պատմական հայկական ճարտարապետական ոճի գլուխգործոցներեն մեկն է, ոչ միայն ինքը կատարելապես հայկական ճարտարապետության նմուշ է, այլ նաև, ըստ գիտնականներու, համադրությունն է, սինթեզն է միջնադարյան ամբողջ հայ ճարտարապետական ոճի: Անշուշտ, եղած է նաև մեծ ուխտատեղի և հոգևոր կեդրոնը ամբողջ Ղարաբաղի, իբրև առաջնորդանիստ Աթոռ: Եվ Գանձասարը մեր սրտին կխոսի նաև ազգային տեսակետով, որովհետև հայ ազատագրական շարժման առաջին կայծերը այնտեղեն բոցկլտացին և այնտեղեն ճամփա ելան Մինաս վարդապետ և Իսրայել Օրի: Ահավասիկ, թե ինչու մենք կպնդենք ամեն գնով, որ Գանձասարի վանքը դառնա մեր եկեղեցվո կեդրոնը նաև հիմա այնտեղ, հիմա, որ ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցան հայերու համար Ղարաբաղի մեջ նոր կարգադրություններով: Վստահ եմ, որ այդ վանքը մենք շուտով կկարողանանք վերանորոգել: Կանգուն է, հսկա, ամուր կառուցված շենք մըն է: Արդեն մեկ ամիս առաջ մոտավորապես, մենք ճարտարապետներ ուղարկեցինք այնտեղ, որպեսզի չափագրություններ ընեն և նորոգության նախագիծը պատրաստեն: Այդ աշխատանքը կկատարվի հիմա: Պետք է ըսեմ, որ արդեն Ղարաբաղի ժողովուրդը գիտակցությունը ունի Գանձասարի վանքի կարևորության՝ հոգևոր, մշակութային և ազգային տեսակետեն: Անցյալ տարի Ղարաբաղի մեջ, առաջին անգամ ըլլալով, Ապրիլ 24-ի նահատակաց տոնը հիշատակվեցավ Գանձասարի վանքի շուրջը:

Ահավասիկ այս նոր պայմաններու մեջ մեր եկեղեցական կյանքը Հայաստանի մեջ պիտի կարողանանք հետզհետե ծավալել, ընդարձակել և հասցնել մեր Սուրբ Եկեղեցին այն բարձունքներուն, որուն արժանի է: Կիլիկյան Աթոռը ևս, վստահ եմ, պիտի մեզի նեցուկ մնա, որպեսզի զորացնենք հայ քրիստոնեության այս պատմական հաստատությունը, որ կկոչվի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի:

Սիրելի ժողովուրդ, կզգամ, որ դուք զիս լավ կհասկնաք: Ես ալ ձեզ լավ կհասկնամ: Թող Աստված օրհնե մեր գործը, մեր ժողովուրդը և ողորմությամբ մնա մեզի օգնական և պահապան և զորավիգ, որպեսզի կարողանանք մեր հոգևոր և ազգային առաքելությունը շարունակել և՛ ի Հայաստան, և՛ ի Սփյուռս աշխարհի: Կուզեի վերջացնել իմ խոսքը տեսիլքովը Ս. Շնորհալիի՝ «Խաղաղութեան ձայն հնչեցաւ, Եկեղեցիս մի անձն եղև, թըշնամութիւնն հեռացաւ, սէր յընդհանուրս սփռեցաւ»: Կուզեի հիշել նաև նահատակ մեծ բանաստեղծի նշանավոր խոսքը, անոր տեսիլքը. «Մենք՝ զավակներս օգոստափառ, պիտի կերտենք նոր արշալույս»:

Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ, ամէն:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Փետրվարի 11-ին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, Եպիսկոպոսական ջերմ մթնոլորտից անմիջապես հետո, ներկաները ուղեկցեցին Ամենայն Հայոց Հայրապետին դեպի օդանավակայան: Շատ հուզական էր Սրբոց Նահատակաց Ազգային վարժարանի և Հովնանյան վարժարանի աշակերտների ողջերթի հանդեսը. երգեր, արտասանություններ և բարի ճանապարհի մաղթանքներ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը արդարորեն վաստակած հոգևոր պետի գոհունակ սրտով հրաժեշտ առավ Գարեգին Բ կաթողիկոսից, հոգևորականաց դասից, ազգային հասարակական գործիչներից, ուսուցիչներից ու աշակերտներից և բարձրացավ ինքնաթիռ:

Ինքնաթիռը ուղղություն վերցրեց դեպի Մոսկվա:

Կիրակի, փետրվարի 12-ի առավոտյան, Նորին Սրբությունը Մոսկվայի օդանավակայանից անմիջապես դիմեց Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցի: Հավաքված էր հոծ բազմություն: Նորին Սրբությունը հայրապետական խոսքով դիմեց ժողովրդին, հաղորդեց նրանց իր անմիջական տպավորությունները և ոգևորեց առաքելության նպատակների կենսագործման հուսադրող պայմաններով:

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՐԵՎԱՆ

Փետրվարի 14-ի երեկոյան Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա Վեհափառը ժամանեց Երևան: «Զվարթնոց» օդանավակայանից Ամենայն Հայոց Հայրապետը առաջնորդվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

*
* *

Ավարտվեց Ամենայն Հայոց Հայրապետի հովվապետական մխիթարական այցելությունը հեռավոր ափերում ապրող հայ ժողովրդի զավակներին, որոնք արդեն երկու ամիս է, ապրում էին իրենց ժողովրդի հասած տագնապն ու տառապանքը դեկտեմբերի 7-ի երկրաշարժի առիթով: Վեհափառ Հայրապետը նրանց տարավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունն ու Իր մխիթարանքը, պատգամեց չհուսալքվել տարերքի առաջ և իբրև մեկ ժողովուրդ և մեկ Եկեղեցի՝ դիմագրավել պատմության բոլոր արհավիրքներին: Ժողովուրդը համախմբվեց Վեհափառի շուրջը, կիսեց նրա վիշտը և վճռականություն հայտնեց՝ ոգի ի բռին ջանալ, ջանալ համատեղ ու միաբան՝ վերաշինելու համար կորուստները, վերականգնելու համար կործանումները: Ժողովուրդը մխիթարվեց ցուցաբերված միասնական ոգուց և միաբերան ասաց.

«Վարձդ կատար, Վեհափառ»:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 2-ին, հինգշաբթի.—Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Վահան աբղ. Դավթյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Սեպուհ աբղ. Չուլջյանը:

* * *

Փետրվարի 5-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

«Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Ո՞ տայր զգլուխ իմ ջուր, եւ զաչս իմ աղբեւրս արտասուաց, եւ լայի զժողովուրդս զայս զտիւ և զգիշեր եւ զվիրաւորեալս դստեր ժողովրդեան իմոյ» (Երեմիա Թ 1) բնաբանով:

* * *

Փետրվարի 12-ին, կիրակի.—Բ կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վարդան քհն. Մկրտչյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Սերովբե աբղ. Իսախանյանը՝ «Մի՛ յաղթիր ի չարէ, այլ յաղթեա բարեաւն չարին» (Հռոմ. ԺԲ 21) բնաբանով:

* * *

Փետրվարի 14-ին, երեքշաբթի.—Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

* * *

Փետրվարի 19-ին, կիրակի.—Գ կիրակի Քառասնորդական Պահոց (Անառակին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սե-

ղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը:

«Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 14):

*
* *

Փետրվարի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 26-ին, կիրակի.—Դ կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան աբղ. Հովհաննիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Արուարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ» (Ղուկ. ԺՁ 9) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 5-ին, կիրակի.—Ե կիրակի Քառասնորդական Պահոց (Դատաւորին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վահան աբղ. Դավթյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը՝ «Ասաց եւ առակ մի նոցա առ այն թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս եւ մի՛ ձանձրանալ» (Ղուկ. ԺԸ 1) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 11-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ուվագ քհն. Բաղրամյանը:

*
* *

Մարտի 12-ին, կիրակի.—Զ կիրակի Քառասնորդական Պահոց (Դալստեան):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել աբղ. Աջապահյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Սեպուհ աբղ. Զուլջյանը՝ «Ասա մեզ, ե՞րբ լինիցի այդ, եւ կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն եւ վախճանի աշխարհիս» (Մատթ. ԻԴ 3) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 19-ին, կիրակի.—Ծաղկազարդ: Պահք:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Օրհնեալ, եկեալ յանուն Տեառն, օրհնութիւն որ գալոցդ ես» (շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 28-ին, հինգշաբթի,—Աւագ հինգշաբթի: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Երեկոյան ժամը 17.30-ին Մայր տաճարում կատարվեց «Ոտնալուայ»-ի կարգը՝



Ղարաբաղի Շահումյանի շրջանում Տիգրան Հ Բասխուրոյի ընդունելությունը, հեղինակը աջից երկրորդն է

Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսադրությամբ:

Հանդիսավոր արարողությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 19.30-ին «ի գիշերի հսկումն» կատարվեց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

«Փառք ի բարձունս»-ից հետո քարոզ խոսեց Տ. Արել աբեղան՝ «Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ» (Ղուկ. ԻԳ 46) բնաբանով (տես էջ 69):

* * *

Մարտի 24-ին, ուրբաթ.—Աւագ ուրբաթ: Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, ժամը 12-ին, Մայր տաճարում կատարվեց «Կարգ խաչելութեան» արարողությունը:

Երեկոյան ժամը 18.30-ին, հանդիսադրությամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, կատարվեց «Կարգ թաղման» արարողությունը:

* * *

Մարտի 25-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ: Ճրագալոյց Զատկի:

Այսօր, ժամը 18-ին, Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերաշնորհ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին եւ զոգի ոչ կարեն սպանանել» (Մատթ. Ժ 28) բնաբանով (տես էջ 67):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 26-ին, կիրակի.—ԶԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Վեհափառ Հայրապետը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբըն իւրով մեզ զկեանս պարգևեաց» (շարական) բնաբանով:

* * *

Մարտի 27-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Օրջոնիկիձեի հոգևոր հովիվ Տ. Սահակ քհն. Սահակյանը:



ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԵՄՅԱՆ

ՔԱՐՈԶ
ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՋԱՏԿԻ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՕՐԸ
(25 մարտ 1989 թ.)

«Մի՛ երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին եւ զոգի ոչ կարեն սպանանել» (Մատթ. Ժ 28):

Իր աշակերտներուն ուղղած խոսքին մեջ հաճախ մեր մեծ Վարդապետը Հիսուս Քրիստոս հակադրած է իրարու մարմին և հոգի՝ զանազանելով մարդուն մեջ ինչ որ հող է և տիղմ, ինչ որ նյութ է և ժամանակավոր, ինչ որ երկրային է և անցավոր՝ հակադրելու համար զայն մարդուն մեջ ապրող հոգեկան կառույցին, որ շունչ է և միտք, զգացում է և գիտակցություն, ալացք է և երազ, աննյութական է և հավիտենական: Ան խրախուսած է իր աշակերտները, դաժնվելէ առաջ ևանոնցմէ՝ հեռացնելու համար անոնց սրտեն մահվան վախը և ըսած. «Մի՛ վախնաք մարմինին մահեն, մի՛ վախնաք անոնցմե, որոնք կրնան կործանել ձեր մարմինը, բայց չեն կրնար սպաննել ձեր հոգին»:

Այս երեկո կսկսի Քրիստոսի Ս. Հարության մեծ տոնը: Մենք տեսանք այսօր «զլոյս երեկոյի», զվարթ լույսը Աստուծո փառքին, որ երևցավ Հիսուսի գերեզմանին այցելության գացող յուղաբեր կիներուն: Հարության լույսն է ան, Քրիստոսի Ս. Գերեզմանեն ճառագայթող:

Այսօրվան նման շաբաթ գիշեր մը յուղաբեր կիները այցի եկան գերեզմանին, զոր վերջակետը կնկատեին Հիսուսի կյանքին: Գտան զայն բացված և լսեցին ձայն մը, որ կըսեր. «Ինչո՞ւ կփնտռեք կենդանին մեռելներուն մեջ. այստեղ չէ՛, այլ հարություն առավ...»:

Միրելի հավատացյալներ, քսաներորդ այս դարուն սկիզբեն ի վեր Քրիստոսի չարչարանքները, խաչելության և հարության այս պատկերը շատ ընտանի եղավ մեզի՝ հայերուս համար: Ազգովին ապրեցանք զայն մեր մարմինին վրա: 1915-ին Մեծ եղեռնը խոցոտեց մեր մարմինը, Գողգոթայի երկար ճամբաներեն տարավ մեր ժողովուրդը դեպի մահ և ոչնչացում, մեր հայրերը խմեցին դառնության բաժակը ցմրուր և ճանչցան խաչի մահեն ավելի ահավոր մահեր:

Սակայն չտկարացավ մեր հոգին. մեր ժողովուրդը ամուր կառչեցավ իր հողին, իջավ պատերազմի դաշտ և Սարդարապատի հերոսամարտով փրկեց մնացորդացը մեր ժողովուրդին և հողերուն: Ծնավ Հայաստանը: Նայեցանք տուռապանքեն բարձրացող հայ հայրենիքին և ըսինք բանաստեղծին հետ.

«Հարության շունչն է ահա
Զարդակոտոր ազգդ իմ...»:

Մենք ուրախացանք, երբ տեսանք հայ գյուղացին՝ իր արտը մշակող, և հայ աշխատավորը՝ իր քաղաքն ու գյուղը կառուցանող: Հայրենիքին գոյությունը իբրև պետություն իմաստ տվավ հայ կյանքին. հավատացինք հայ հոգիի հավիտենականության: Խաչին խորհուրդը ապրեցանք ազգովին, որովհետև, նման Հիսուսի, մեր մահով հաղթեցինք մահվան: Մեր աչքին՝ խաչը փայլեցավ ոչ իբրև մահվան նշան, այլ ճանապարհ հարության:

Եկավ Հայրենական պատերազմը և անգամ մը ևս մահվան ստվերը մոտեցավ մեր

սահմաններում: Սակայն այս անգամ վոխված էր հայ ժողովուրդին պատմության ընթացքը: Այս անգամ մեր ձեռքերը դրած էինք ամուր և անպարտելի ձեռքերու մեջ: Մեր մարտիկները պատերազմի դաշտ իջան «Սասունցի Դավիթ» հրապարակներով: Անոնց ինքնավստահ և հաղթական հառաջխաղացին դիմաց կործանեցան մահվան ուժերը: Երկար դարեր ետք, հաղթանակի երգեր լսվեցան Հայաստանեն: Միութենական ժողովուրդներու եղբայրությունը ապահովեց մեր ժողովուրդին կյանքը, մեր հայրենիքին ազատագրումը, մեր սահմաններուն ապահովությունը, որպեսզի շարունակե պլպլալ հայու հոգին արցունքով վառող հայ կանթեղին մեջ:

Այլևս խաղաղ էր մեր երկիրը: Մեծ էր մեր ուրախությունը: Օրեօր կլեցվեինք խանդավառությամբ, երբ լուր կուգար Հայաստանեն, որ շենքեր կբարձրանան ամեն կողմ, նոր ակոսներ կեոկարին դաշտերուն մեջ, կմեծնան քաղաքներ, նոր գյուղեր կծաղկին, նոր ծառ մը կարմատանա, գիտության նոր կաճառ մը կկառուցվի, նոր դպրոց մը կբացվի, սերունդներ կմեծնան և մեր հայրերուն հողը կերգե կյանքին հաղթանակը:

Եվ ահա տարբեր արհավիրք և մահվան ձայն հասավ Հայաստանեն: Եկավ գույժը. հայոց երկինքը մթագնած էր դարձյալ. երկիրը շարժած էր, մահ և ավեր ծածկած էին մեր աշխարհը: «Այս ճակատագիրն ինչ սև է, Աստված» ըսինք բանաստեղծին հետ և մեր հայացքը ուղղած երկինք, բողոքի աղաղակ մը պոռթկաց մեր կոկորդեն: Մենք կրկնեցինք սաղմոսերգուին խոսքը. «Անձն իմ յոյժ խռովեցաւ և Դու, Տէր, մինչև ե՞րբ...»:

Ամբողջ արտասահմանը ցնցվեցավ. ուր որ հայ մը կար, մատնվեցավ սուգի, որովհետև ձեր ցավը, ո՛վ ժողովուրդ վիրավոր Հայաստանի, մե՛ր ալ ցավն է. ավերակներուն տակ մահացած ձեր զավակը մե՛ր ալ զավակն է, ձեր կորսված եղբայրն ու քույրը մե՛ր ալ եղբայրն է և քույրը, ձեր սիրտին վերքը մե՛րն ալ է: Զգացինք մենք զմեզ իբրև հուղարկավորներ, որոնք կքալեն իրենց սիրելիին դագաղին ետևեն և լացինք:

Նորեն բարձրացավ խաչին նշանը մեր աչքին և ան օգնության հասավ մեզի: Տեսանք անոր զորությունը, անոր հրաշքը. ամեն հայու սրտին մեջ արթնցավ մեր ազգին միության, մեր ժողովուրդին մեկության գիտակցությունը: Վիրավոր մեր հայրենիքին ավերակներուն մեջեն հարություն առավ և կյանքի եկավ մեկ հայրենիքի զավակներ ըլլալու և մեկ Եկեղեցիին մյուռոնով դրոշմված ըլլալու լուսավոր ճշմարտությունը: Տառապանքի խաչը կերպարանափոխվեցավ հարության լույսին մեջ: Մենք ևս մեր մահով հաղթեցինք մահվան: Նոր իմաստ ստացան Առաքյալին խոսքերը, որ ագավոր իր բարեկամներուն կըսեր. «Մի՛ լաք հեթանոսներուն նման, որ չունին հույս»:

Սիրելի ժողովուրդ հայոց, դուն, որ կհավատաս Քրիստոսի հարության, ամրապնդվի՛ր հույսով և գիտցիր, թե «Տերը մեզի հետ է»: Ցավը ծանր է և հեղձուցիչ, եթե պարպվինք հույսեն, որ մեր ներսն է: Մի՛ լաք անոնց նման, որոնք կորսնցուցած են իրենց հավատքը: Ինչպես միասին իջանք ցավին մեջ, այնպես ալ միասին պիտի ըլլանք մենք, արտասահմանի և Հայաստանի հայություն, մեր վերականգնումին մեջ: Միասին պիտի մաքրենք ավերակները և միասին պիտի վերակառուցանենք մեր երկիրը: Գիտցեք ապավինիլ ձեր ցավը Աստուծո, որպեսզի չմահանա մեր հոգին: Խառնեցեք ձեր տառապանքը խաչեցյալ Հիսուսի կողահոս արյունին և ընծայեցեք զայն Աստուծո իբրև զոհ և պատարագ: Թող մեր մարմինին կրած վերքը չսպաննե մեր հոգին, որպեսզի մեր խաչը պտղաբեր ըլլա:

Ս. Հարության տոնի Ճրագալույցին Հիսուսի Ս. Գերեզմանեն ողջույն մեր մեծ Հաթուպետին, սքանչելի Քահանայապետին, Ամենայն Հայոց վշտակիր Կաթողիկոսին, ողջույն և օրհնություն զայն շրջապատող Մայր Աթոռի միաբանակից մեր եղբայրներուն, ողջույն Հայաստանի արի մեր ժողովուրդին: Ամբողջ պահեցեք ձեր հոգին, ամուր թող մնա մեր հոգիին կառույցը. չերևին ճեղքեր և բաժանումներ անոր պարիսպներուն վրա, կասկածներ և ավելորդ հարցականներ թող չտկարացնեն մեր հույսը, որ առողջ մնա մեր հոգին: Մեր Հովվապետին ձայնը թող հնչե դարձյալ Մայր տաճարի սուրբ կամարներուն տակ. մտիկ ըրեք հոգևոր ձեր առաջնորդներու ձայնին, որովհետև ճշմարտության և իմաստության անոնց խոսքը պիտի տանի ձեզ մահեն կյանք, խավարեն՝ լույսին, խաչի ճանապարհեն՝ հարության հաղթանակին: Հույսով ապրող մեր սիրտեն կընշնորհավորենք ձեր Ս. Զատիկը.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց. ձեզ և մեզ մեծ աւետիս»:

Տ. ԱԲԵԼ ԱԲԵՂԱ

ՔԱՐՈԶ

(Ավագ հինգշաբթի, 23 մարտի 1989 թ.,
Ս. Էջմիածնի Մայր տաճար)

«Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ» (Ղուկ. ԻԳ 46):

«Հայր, քո ձեռքերի մեջ եմ ավանդում իմ հոգին»:

Քարոզիս բնաբանը Հիսուսի վերջին խոսքերն են, մահվանից առաջ մարդկային մի վերջին խոսք, աստվածային մի ճշմարտություն, որ Հիսուս ասաց խաչի վրա, տառապանքի, հոգևարքի և մահվան մեջ:

Ներկա արարողությունը ձոնված է Հիսուսի չարչարանաց, խաչի և մահվան խորհրդին: Արարողությունը քայլ առ քայլ առաջնորդում է մեզ շուրջ երկու հազար տարի առաջ տեղի ունեցած պատմական մի դեպք վերհիշելու, այդ դեպքը հիմա մեր մեջ այժմեականացնելու, խորհրդածելու և ըմբռնելու նրա խորհուրդը, ստանալու համար Քրիստոսի երկհազարամյա աստվածային պատգամը, որ նա խաչի, տառապանքի և մահվան խորհրդով ավանդեց մեզ:

Հիսուսի առաքելության, նրա քարոզչության առաջին խոսքը խաչը չէր և ոչ էլ նրա վերջին խոսքը մահն էր: Նրա առաջին խոսքը ուրախությունն էր, իսկ վերջին պատգամը կյանքն էր: Հիսուսի առաքելությունը խաչով չի սկսում, այլ մի ավետիսով: Ավետիսը ուրախ լուրն է, հուսահատության մատնված մարդուն իր հուսահատ վիճակից դուրս գալու մի նոր հնարավորություն, մի ճանապարհ ցույց տալն է, այսինքն՝ մեռնողին ապրելու մի նոր սկիզբ տալու հնարավորությունը: Քրիստոսի բերած ավետիսը, նրա քարոզած ուրախ լուրը Աստուծո արքայության գալուստն էր՝ Աստուծո անմիջական ներկայությունը մարդկանց մեջ: Սակայն Աստված իր ներկայությունը մարդկանց չի պարտադրում, ընդունելություն գտնելու համար բռնություն չի բանեցնում, այլ ներս հրավիրելու, կամ դուրս գալու ամբողջ հնարավորությունը մարդկանց ազատության և կամքին է թողնում: Նման այն հյուրին, որ գալով մեր տունը, մեզ իր ներկայությամբ ուրախացնելու համար մեր տան դուռն է թակում. մեր դուռը բանալու և նրան ներս հրավիրելու կամ դուռը նրա երեսին փակ պահելու հնարավորությունը մեր ձեռքում է: Հիսուսի ավետարանած Աստված եկավ իր ներկայությամբ ուրախացնելու, փրկելու մարդկանց. նա թակեց ժամանակի մարդկանց քարացած սրտերի դռները և ոմանց կողմից ընդունելություն չգտավ: Ոչ միայն Աստված ընդունելություն չգտավ, այլ հենց այս ուրախ լուրը հայտարարողը՝ Հիսուս իր քարոզչական գործունեության ընթացքում սկսեց հետզհետե վտանգվել: Մարդիկ, իրենց քարացած ավանդույթների, ժամանակի ընկերային-հասարակական երկսթյա դրվածքների, քաղաքական կեղծ համոզմունքների և ըմբռնումների մեջ բանտարկված, չհասկացան Հիսուսի ավետարանած ավետիսը ու սկսեցին խեղաթյուրել նրա վարդապետության իմաստը:

Նախ փորձեցին Հիսուսին ժամանակի ընկերային-հասարակական օրենքներին հնազանդեցնել ու ենթարկել, ապա նրան փորձեցին մի կերպ լռեցնել, իսկ երբ իրենց ցանկալի արդյունքը չունեցան, սկսեցին Հիսուսին որպես ժողովրդին և քաղաքական օրենքներին՝ հռովմեական պետության թշնամի ներկայացնել: Սինագոգից նրան դուրս վտարեցին, նրան ստահոդ աստվածահայհոյության մեջ մեղադրեցին և ի վերջո որոշեցին նրան խաչի սպանությամբ չեզոքացնել:

Հիավոր էր ոճիրը, քանի որ նույնքան վճռական էր իր՝ Հիսուսի որոշումը՝ հավատարիմ մնալ ճշմարտության, հավատարիմ մնալ հայրական տնօրինության և հավատարիմ մնալ Աստուծո արքայության՝ մարդկանց մեջ լինելու անհրաժեշտության: Այս հավատարմության գինը Հիսուսի տառապանքը, նրա խաչելությունն ու մահն էր: Ինչքան մոտենում էր Նրա տառապանքի և մահվան ժամը, ինչքան սրվում էր նրա դեմ սպառնալիքը, այնքան բնական և մարդկայնորեն սոսկում էր նա մահվան տառապանքից, նրա անէացնող իրականությունից: Այո, վախենում էր Հիսուս, և մահվան անմիջապես փորձառությունը այնքան հաղթահարող, այնքան ընկճող էր, որ նա Գեթսեմանիի մութ գիշերվա մեջ իր ամբողջ մարմնով արյուն էր քրտնում ու աղերսում էր իր Հոր. «Հայր իմ, եթէ հնար է, անցո զբաժակս զայս ինէն»: «Հայր իմ, աղերսում եմ Քեզ, եթե հնարավոր է, հեռացրու ինձնից այս բաժակը»: Ինչքա՜ն մարդկային է այս աղերսը, ինչպիսի՜ սքանչելի՜ մի ապացույց Աստվածորդու՝ մարդու որդի լինելու մասին: Եվ ինչ ենք տեսնում. Հիսուս Գեթսեմանիի պարտեզում իր սարսափների և տարակույսի գագաթնակետին՝ որոշում է հավատարիմ մընալ իր խոսքին. մի խոսք, որ Աստուծո ճշմարտությունն է բացահայտում, նրա արքայության գալուստը, նրա ներկայությունը մեր մեջ: Ուստի նա իր աղերսին «այս խաչը ինձնից հեռացրու» խնդրանքին ավելացնում է. «Հայր իմ, ոչ թե իմ, այլ թող քո կամքը լինի, թող աստվածային սիրո իրականությունը բացահայտվի և մարդկանց փրկությունը հաստատվի»:

Թվում է, թե Քրիստոսի մահով նրա առաքելությունը ձախողության է դատապարտվում: Ո՛չ: Իր մահը իր ավետարանած ճշմարտության հաստատումն է, նրա Գերագույն արտահայտությունը: Հիավասիկ մեկը, Որդին Աստուծո, որ աստվածային սիրո փթթումի, նրա ծլարձակումի համար իր անձն է զոհում:

Հիսուսի մահը ոչ այնքան մեղքերի թողության համար է և ոչ էլ Ադամով կատարված մի սխալի սրբագրումը կամ ուղղումն է, այլ նրա մահը առաջին հերթին մի ազատագրում է, ազատագրում մահվանից դեպի կյանքի թագավորություն, հավիտենական կյանք: Այդ ազատությունը ապառաժի նման կուռ ներքին բարոյական մի համոզմունք է, թե մարդ ինչքան էլ վախենա մահվան իրականությունից, այնուամենայնիվ, Քրիստոսի օրինակով պետք է հավատա մեր մեջ Աստուծո արքայության երջանկացնող սկզբունքին, մահվան մեջ և մահից էլ այն կողմ: Քրիստոսի խաչելությունն ու մահը տառապանքը արդարացնող մի իրավիճակ չէ, այլ մի բողոք է տառապանքի և մահվան դեմ: Այստեղ մահը բացասական մի երևույթ է, որ մարդուն չի ազատագրում, նրան դեպի Աստված չի առաջնորդում, մինչդեռ Քրիստոս իր տառապանքով և մահվամբ ոչնչացնում է մահվան բացասականությունը, այն վերածում է դրական և բնական մի երևույթի՝ Աստուծո հետ միանալու:

Մահվան փորձառությունը մեզանից յուրաքանչյուրի մեջ նոր հորիզոններ է ընտեղծում, հնարավորություն է տալիս մարդուն հավիտենական կյանքը գնահատելու, ճանաչելու կյանքի և մահվան խորհուրդը և ի վերջո տալու այն ինքնագիտակցությունը, թե նյութը ամեն բան չէ աշխարհիս վրա, այլ նյութից վեր գոյություն ունի հոգեկան մի արժեք, որի համար կարելի է նույնիսկ տառապանքով մեռնել՝ ապրելու համար:

Այս է պատգամում մեզ խաչեցյալն Հիսուս: Նրա մահը ճշմարտությամբ լեցուն մի կյանք էր, բարոյական ներքին մի ազատագրում էր, որ իր հարության ուժականությամբ սասանում էր ժամանակի ընկերային-հասարակական նեղ դրվածքներն ու կրոնական մոլեռանդ ըմբռնումները և պայթեցնում մարդուս մարմինն ու հոգին կաշկանդող, նրա ներքին ազատությունը բռնաբարող պետական քաղաքական պողպատյա օրենքները: Քրիստոնեությունը ստրուկների կրոն չէր, ինչպիսին ուզեց այն տեսնել Հռոմեական կայսրությունը, Քրիստոսի աստվածաբանությունը ազատության, ազատագրող մի աստվածաբանություն էր: Այս է քրիստոնեության բուն բովանդակությունը, նրա ներքին բարոյական արժեքը, և ոչ թե բռնությանը կույր հնազանդության վարդապետությունը, որ ըրոնզբոսիկ կերպով վերագրվում է քրիստոնեության: Այնպես, ինչպես մարդիկ խաչի դատապարտությամբ ուզեցին Քրիստոսին մարդ և Աստված լինելու աստվածային ուժականությունից զրկել, նույնպես

և հետագա դարերում մարդիկ փորձեցին նրա ազատագրության աստվածաբանությունը խեղաթյուրել: Քրիստոսի խաչելության տառապանքի և մահվան խորհուրդը հարությամբ ապացուցված ազատագրության մի աստվածաբանություն է, որի ճշմարիտ լինելը զգացել ենք դարերի անմիջական փորձով, իրերահաջորդ արհավիրքներից հետո ապրում ենք այսօր և հարատեելու ենք ապագայում:

Կանգնած Քրիստոսի չարչարանաց, խաչելության և մահվան հիշատակի խորհրդի առաջ, ներշնչվելով նրա ճշմարտության իրատեսությունից, խոսքերս ուղղում եմ ձեզ, սիրելի հավատացյալ մայրեր, քույրեր և եղբայրներ, բայց հատկապես երիտասարդություն հայոց:

Ուխտի գալով Էջմիածին, մեր պապերի ավանդությանց այս հնագույն շտեմարանը՝ Հայոց Միածնաէջ այս տունը, առիթը ունեցա խոսելու ձեզանից շատերի հետ թե այստեղ, թե Երևանում և մեր կործանված քաղաքներում: Տառապում եմ ձեզ հետ, ճենճերող սիրտս ձեզ հետ միասին մնալուն մի սփոփանք, իրական մի մխիթարանք է փնտրում: Գալիս—կանգնում եմ Քրիստոսի խաչի առջև և զգում եմ, որ Քրիստոս խաչի վրա տառապում է ինձ հետ և իմ մեջ հույսի, կյանքի մի նոր ճանապարհ է բացում: Հավատքի երաշխի՞ք եք ուզում. գերագույն երաշխիքը, իրական ապացույցը ձեր պատմությունն է, հարուցյալ երկիրը, այն, որ տառապանքից ու կործանումից մահացու մի հուսահատության չեք մատնվում, գիտությամբ թե անգիտությամբ, այնուամենայնիվ հավատում եք կյանքի շարունակության, կյանքի հավիտենականության սկզբունքին:

Յուրաքանչյուր հայ մոր ու աղջնակի հետ իր Որդու խաչի առջև տառապեց Աստվածամայրը: Հայ հայրերի և որդիների հետ փլատակների տակ և փլատակների վրա հուսահատորեն իրենց հարազատներին փնտրող մարդկանց հետ խաչի վրա Հիսուսն է, որ իր տառապանքով, մահվամբ ու հարությամբ իր սիրելիներին կասի՝ «Դալիթա, Գումի», դուստր իմ, որդյակ իմ սիրելի, վեր կաց, կանգնիր, դու ապրելու իրավունք ունես:

Հուսահատությունը կարելի չէ ներդաշնակել հայ իրականության հետ: Հայը համակ հույս և լույս է, նրա ամեն մեկ ծիլի մեջ հավիտենականություն կա խտացած: Մենք չենք ծնվում մեռնելու համար, իսկ եթե մեռնում ենք, նահատակվում ենք ապրելու համար:

Շնորհք Տյառն մերոյ Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսյանսդ, ամեն:



Ի ԿԵՂԵՑԵԱՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵՆԹԱՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՆԻՍՏ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Ե. Հ. Խորհուրդի կազմակերպութեամբ և Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Նորին Ամենապատուութիւն Շնուտա Գ. Պապ և Պատրիարքի հրաւէրով, Կիրակի 27 Փետրուարին, Գահիրէ ժամանեցին բազմաթիւ Աստուածաբաններ, մինչև Շաբաթ 4 Մարտ 1989 տեղի ունենալիք հաւաքին մասնակցելու, որուն օրակարգի հարցերն էին Հոգեւոր վերանորոգութիւն եւ արդի աշխարհի մէջ համայնքային հոգեւոր արթնութիւն, այժմէական խնդիրները:

Եգիպտահայ թեմէն հաւաքին դիտողի հանգամանքով ներկայ ըլլալու համար նշանակուեցաւ Արժ. Տ. Սարգիս Քհն. Մելքոնեան:

Ժողովականները նիստի գումարուեցան, Եգիպտոսի Արևմտեան անապատին մէջ Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Անպա Պիշոյ վանքին մէջ:

Չորեքշաբթի 1 Մարտի երեկոյեան ժամը 8.30-ին, Ն. Սրբութիւն Շնուտա Գ. Պատրիարք ի պատիւ ժողովական հիւր-Աստուածաբաններու, Գահիրէի Ապպասիէի Անպա Ռուէյս Աթոռանիստ վանքին մէջ ընթրիքի հրաւիրած էր համայնքներու պետեր, կարևոր անձնաւորութիւններ, պետական նախարարներ: Սոյն ընթրիքին ներկայ եղաւ Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Սրբ. Արքեպս. Չինչինեան: Ընթրիքէն ետք առիթ ստեղծուեցաւ ծանօթանալու հիւր հոգևորականներուն:

Կիրակի 5 Մարտին, ժողովականները բաժնուելով զանազան խումբերու, Գահիրէի մէջ զանազան վանքեր, եկեղեցիներ, հնագիտական վայրեր այցելեցին: Նախապես եղած կարգադրութեան համաձայն խումբ մը այցելեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ մեր եկեղեցին, առաւօտեան ժամը 11.30-ին, ուր հիւրերը ընդունեցան Արժ. Տ. Պարգև Քհն. Նալպանտեան և Արժ. Տ. Սարգիս Քհն. Մելքոնեան: Ողջոյնի և բարի գալստեան խօսք արտասանեց Գերշ. Առաջնորդ, Տ. Զաւէն Սրբ. Արքեպս. Չինչինեան և միատեղ աղօթք մատուցուեցաւ Անգլիերէն լեզուով և մեր շարականներով:

Եկեղեցւոյ արարողութենէն ետք, Ազգային Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ Տիկնանց Խնամակալութեան կողմէ պատրաստուած հիւրասիրութիւն: Հիւրերուն բաժնուեցաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ երգուած Ս. Պատարագի ձայներիզներ:

Ազգային Առաջնորդարանին առջև լուսանկարուելէ ետք, հիւրերը հրաժեշտ առին:

ԹՂԹԱԿԻՑ



ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՋՈՐԱՎԱՐԱՑ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԵՎ ՎԱՉԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՖԻԱՅԻ ՄԵՋ

Պուլկարահայ թեմական խորհրդի նախաձեռնությամբ փետրվարի 2-ին հանդիսավոր իրադրության մեջ ոգեկոչվեց Վարդանանց տոնը՝ արժանի հարգանք մատուցանելով տասնհինգ դարեր առաջ հանուն հայ ժողովրդի հավատքի ու գոյատևման մարտիրոսացած հերոսների հիշատակին: Նույն օրը նշվեց նաև Վազգեն Վեհափառ Հայրապետի ու թեմիս առաջնորդ Տիրայր սրբազանի անվանակոչությունը:

Առավոտյան Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցում տեղի ունեցավ հանդիսավոր ս. պատարագ ու հայրապետական մաղթանք: Օրվա պատարագիչն էր Վառնայի հայոց հոգևոր հովիվ Սիոն աբեղա Ադամյանը: Պատարագիչ հայր սուրբը պատարագի վերջավորության խոսեց հավուր պատշաճի քարոզ՝ վեր հանելով Վարդանանց պատերազմի պատմական նշանակությունը և դրվատեց Վեհափառ Հայրապետի հայրենանվեր ու եկեղեցաշեն, ազգօգուտ գործունեությունը, կատարեց բարեմաղթություններ ու հրավիրեց ներկա խուռներամ հավատացյալներին աղոթել ազգիս ընդհանրական Հայրապետի քաջառողջության ու թեմիս հոգևոր առաջնորդի եկեղեցանվեր աշխատանքների հաջողության համար: Օրվա հանդիսավոր արարողությանց նախագահում էր Տիրայր արքեպս. Մարտիկյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի ունեցավ հանդիսավոր ճաշկերույթ «Պուլկարիա» հյուրանոցի ճաշասրահում, որին ներկա եղան Պուլկարիո արտաքին գործերու մինիստրի տեղակալ և Պուլկար Ուղղափառ Եկեղեցվո ու կրոնական այլ պաշտամունքների կոմիտեի նախագահ Լյուպոմիր Փոփով, Պուլկարիո մեջ ԽՍՀՄ լիազոր ու արտակարգ դեսպան Վիկտոր Շարափովը, հյուպատոսի ու իր տեղակալի հետ, պուլկարահայ «Երևան» մշակութային միության կենտրոնական վարչության նախագահ Տիրան Բսրիքյանը, Պուլկար քույր Եկեղեցու Ս. Սինոդի գլխավոր քարտուղար Քիրիլ եպիսկոպոսը, առաջնորդ Տիրայր արքեպս. Մարտիկյանը, թեմական խորհրդի ամբողջ կազմը և այլ պաշտոնական անձինք:

Պուլկարահայ թեմական խորհրդի նախագահ պրն. Կարո Տեր-Մեսրոպյանը իր ողջույնի խոսքին մեջ վեր հանելով Վարդանանց տոնի կարևոր նշանակությունը, բնութագրեց այդ ճակատամարտի պատմական արժեքը հայ ժողովրդի պատմության համար, ամփոփ կերպով սեղանակիցներին ներկայացրեց Վազգեն Վեհափառի կենսագրականը՝ շեշտելով Նորին Սրբության երկարամյա խաղաղարար, եկեղեցաշեն ու հայրենասիրական գործունեությունը:

Ելույթ ունենալով Լ. Փոփով, իր խոսքի մեջ ընդգծեց Հայ և Պուլկար Եկեղեցիների և ժողովուրդների դարավոր եղբայրական կապերը և միևնույն ճակատագրերը: Նա ներկաներին պատմեց իր տպավորությունները՝ անցյալ տարի դեպի Հայաստան կատարած այցելության ժամանակ Վազգեն Վեհափառի հետ հանդիպումից:

Խոսք առնելով, Խորհրդային Միության դեսպան Վ. Շարափովը կանգ առավ հայ

ժողովրդի ներկա վիճակին՝ ընդգծելով, որ ինքը մասնավոր հարգանք է տածել ի սկզբանե հայ ժողովրդի նկատմամբ, այդ հարգանքը ավելի ընդգծվեց այս օրերին՝ տեսնելով հայ ժողովրդի վճռական դիմակայումը աղետաբեր երկրաշարժին:

Հանուն Պուլկար քույր Եկեղեցու խոսք ասաց Քիրիլ եպիսկոպոսը, որը ներկայացրեց Մաքսիմ Պատրիարքի ջերմ զգացումները օրվա մեծ տոնի առթիվ ու ցանկացավ ազգընտիր Վազգեն Վեհափառ Հայրապետին անհատնում կորով ու եռանդ և աստվածաշնչական խաղաղ ծերություն ի պայծառություն Հայ Եկեղեցու:

Վերջավորության արտահայտվեց թեմական առաջնորդը, որը եղած սրտաբուխ խոսքերի համար խորին շնորհակալություն հայտնեց, հիշեց հայ ժողովրդի երախտագիտությունը պուլկար ժողովրդի հանդեպ, որ Մեծ եղեռնի դժնդակ տարիներին եղբայրաբար ընդունեց հայ տարագիրներին: Այժմ էլ՝ բնության կույր տարերքի մոլեգնումի ծանր ողբերգությունից հետո Պուլկարիան անկեղծ գթասրտությամբ իր օգնության ձեռքը մեկնեց տառապյալ հային: Սրբազանը բարեմաղթեց, որ հայ և պուլկար ժողովուրդների բարեկամությունը աճի ու ամրապնդվի:

ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ ՊԵՆԼԻՅԱՆ



ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Անավոր երկրաշարժից չորս ամիսներ հետո, երբ արդեն հյուսիսային Հայաստանի աշխատավորությունը լծվել է երկրաշարժի վերքերը բուժելու դժվարին և առաքինի գործին, առավել անհրաժեշտություն է զգացվում բարեկամական խոսքի, անկեղծորեն արտահայտված զգացումի: Ահա այս նպատակով, ինչպես նաև արհավիրքի ենթարկված վայրերին անմիջականորեն ծանոթանալու համար ապրիլի 9-ին Հունաստանի հայոց հայրապետական պատվիրակ և Դամասկոսի թեմի առաջնորդ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը եղավ Լենինական և Սպիտակ քաղաքներում: Այս ուսիթով սրբազան հորը ուղեկցում էր Տ. Միքայել աբղ. Աջապահյանը:

Լենինականի Ս. Աստվածածին վիրավոր եկեղեցու մոտ Ոսկան սրբազանին դիմավորեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը: Ապա ս. պատարագ մատուցեց Տ. Ոսկան եպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ, Տ. Նարեկ սրբազանի բարիգալստյան խոսքից հետո, «Լեր իմ աստուած ապաւէն և ի տեղի ամուր կեցուցանել զիս» (Սաղմ. Լ 3) բնաբանով ոգեշունչ քարոզ խոսեց պատարագիչ սրբազան հայրը: Իր քարոզում Տ. Ոսկան սրբազանը, մխիթարանքի և քաջալերանքի խոսքերից հետո, մասնավորապես անդրադարձավ հայրենիք-սփյուռք հարաբերությանը և շեշտեց, որ հայ ժողովրդի այս երկու հատվածները փոխկապակցված են և սնվում են միևնույն ոգեկան աղբյուրներից: Սրբազանը մաղթեց, որ հայրենաբնակ ժողովուրդը իր ապրելու վճռականությամբ, ամեն տեսակի արհավիրքներին դիմակայելու իր անկոտրում կամքով լույսի փարոս դառնա սփյուռքահայության համար օտար ափերին:

Պատարագից հետո Տ. Ոսկան եպիսկոպոսը այցելեց Լենինականի Ս. Ամենափրկիչ խոնարհված եկեղեցի, շրջեց քաղաքում, զրուցեց տեղի ժողովրդի հետ և փոխանցեց սփյուռքահայության ջերմ ողջույնները: Ապա սրբազանը մեկնեց Սպիտակ, որտեղ նույնպես հանդիպում ունեցավ աղետյալ բնակչության հետ:

Երեկոյան սրբազանը վերադարձավ Մայր Աթոռ և, Վեհափառ Հայրապետի օրհնությունն ստանալով, մեկնեց Դամասկոս, իր պաշտոնատեղին՝ իր հոտին փոխանցելու Վեհափառի գնահատանքն ու հայրենաբնակ ժողովրդի երախտագիտությունը:

ՄԻՔԱՅԵԼ ԱԲԵՂԱ ԱՋԱՊԱՀՅԱՆ



475-ԱՄՅԱԿ ՀԱՃԿԱՏԱՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Կան քրիստոնյա ժողովուրդներ, որոնք Ս. Աստվածածնին նվիրված երկեր են հյուսել. նրանց շարքին պատկանում է նաև հայ ժողովուրդը: Իսկ որովհետև հայի շինարար հանճարը շաղախվեց աղոթքով, խոսքը քարացավ, աղոթքը դարձավ տաճար և տաճարի լուսաշող խորանին բարձրացավ Աստվածամոր սրբազան պատկերը:

Հավատքի այս տեսիլքով սրբագործվեցին մեր կյանքի, մշակույթի և պատմության կոթողները, որոնք դարերի խորքից արձագանքեցին մինչև այսօր:

Այս նույն տեսիլքով լուսավորված՝ 475 տարիներ առաջ հայ ժողովրդի հավատավոր զավակներ Տոնավագյան եղբայրները կերտեցին և կյանքի կոչեցին իրենց ուխտը՝ անմահացնելով և նվիրելով այդ Հաճկատար Ս. Աստվածածնին: Եվ թեկուզ հայրենիքից հեռու, Ռումինիո ասպնջական հողի վրա, նրանք տեղի հայ համայնքին և ողջ հայ ժողովրդին պարգևեցին մի ճշմարիտ հայրենի սրբազան տուն, որտեղ հայու աղոթքը, խունկը և աղաչանքը անկաշկանդ և անդադրում բարձրանալու էր առ Աստված:

Այսօր, 475 տարիներ հետո, առավել պայծառ և լուսավոր, մեր տաճարը ընդունում է իր պանդուխտ ուխտավոր զավակներին, որպես հարազատ մայրը մեր ժողովրդի:

Ս. թ. օգոստոսի 14-ին, կիրակի, մեծ շուքով տոնախմբվեց վանքի հիմնադրության 475-ամյակը: Ներկա էին Ռումինահայ և Բուլղարահայ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, թեմական և տեղական խորհրդի անդամներ, Բուխարեստի Մայր տաճարի «Կոմիտաս» երգչախումբը և բազմահարյուր հայ ուխտավորներ և օտար հավատացյալներ տարբեր շրջաններից:

Առաջնորդ սրբազան հորը բարի գալուստի ջերմ խոսքերով դիմավորեց Սուչավայի և Մոլդավիո հոգևոր հովիվ Արամայիս վարդապետ Շլուկյանը: «Հրաշալիառ» շարականի հուզիչ մեղեդիով, հոգևորականաց դասը և հավատացյալ ժողովուրդը խաչվառներով, բուրվառով և խունկով բարձրացան բլուրն ի վեր՝ ի տաճար:

Ս. պատարագի ընթացքին, որը շնորհիվ բարձրախոսներու, ամբողջ շրջակայքի ողջ տարածքում, Արամայիս վարդապետ Շլուկյանը ընթերցեց Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի հետևյալ շնորհավորական գիրը այս առթիվ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԹԵՄԻՍ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ

Մեծ ուրախությամբ կողջունենք Ռումանիո Հայոց Եկեղեցիին տոնախմբությունը՝ Սուչավայի Ս. Աստվածածին Հաճկատար վանքին հիմնադրության 475-ամյակին առթիվ:

Այս տոնը՝ տոնն է նաև ամբողջ Հայ Առաքելական Եկեղեցիին ու Հայաստանի և արտասահմանի մեր ամբողջ հավատացյալ ժողովուրդին համար:

Մեզ բոլորիս համար պատմական պահմը է, երբ հոգեկան հպարտությամբ կվերակոչենք ռումեն ասպնջական հողին վրա գրեթե կես հազարամյակի մը անցյալը, ի հոգեկան սփոփանք բոլոր հայերուն:

Այս տոնախմբությունը նույն ատեն ռումեն երկիրներու կրոնական թույլտվության և ռումեն ժողովուրդին մշտնջենական բարեկամության պատմական մեկ վկայու-

թյունն է, քանզի ժամանակի ընթացքին հայերը իրենց նախնյաց ավանդույթները պահած են և միշտ ռումեն հողին հավատարիմ զավակներ և ռումեն պարկեշտ քաղաքացիներ եղած են:

Հավարտ ս. պատարագի Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը օրհնեց մատաղը և խաղողը:

Տեղի ունեցավ ավանդական սիրո ճաշ, որին մասնակցեցին բոլոր ներկաները: Ա-

Սուչավայի Ս. Խաչ եկեղեցին

Հանուն Հայոց Եկեղեցիին, խորին երախտագիտությամբ ջերմ և անկեղծ բարի մաղթանքներ կբերենք ռումեն հավատացյալ ժողովուրդին և մեր օրհնությունը մեր օրերու վարապետ Ռումանիո Սոցիալիստական Հանրապետության, որ ընտեղծագործական սքանչելի ջանասիրությամբ կընթանա ռումեն ազգին ոսկե երազին կերտման ուղիով:

Ս. Էջմիածնեն ջերմ զգացումներով օրհնություններ կհղենք եկեղեցվո ծառայողներուն, թեմական խորհուրդի անդամներուն, թաղական խորհուրդի անդամներուն և Ռումանիո բոլոր հայ հավատացյալներուն, որոնք, Տիրայր Արքեպիսկոպոսին իմաստուն և ժրաջան ղեկավարությամբ, Հայոց Եկեղեցին առաջ կտանին ծառայության պայծառ ճամբուն վրա, վայելելով պատշաճ հեղինակություն:

Աստված օգնական:

ՎԱՂԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ապա հայրենաշունչ քարոզ խոսեց առաջնորդ սրբազանը:

Հավարտ ս. պատարագի Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը օրհնեց մատաղը և խաղողը:

Տեղի ունեցավ ավանդական սիրո ճաշ, որին մասնակցեցին բոլոր ներկաները: Առաջնորդ սրբազան հայրը գոհունակությամբ գնահատեց այն բոլոր աշխատանքները, որոնք իրականացվել են Արամայիս վարդապետ Շլուկյանի ջանքերով և մանավանդ այն գեղեցիկ ընծան, որը կյանքի կոչվեց այս տարի՝ հիմնովին վերանորոգելով պատմական վանատունը, որտեղ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը անցկացրել է իր քահանայական ձեռնադրության 40 օրերը:

Երկուշաբթի, օգոստոս 15-ին, օր մեռելոց, Սուչավայի Զամքաս վանքի Ս. Օգսենդ եկեղեցում կատարվեց հոգեհանգստյան պաշտոն Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի նախագահությամբ: Արարողության ավարտին առաջնորդ սրբազանը հուզիչ խոսքով մխիթարեց բոլոր ուխտավորներին, ուժ և ամուր հավատք մաղթելով՝ ավարտելու համար Սուչավա քաղաքի Ս. Խաչ եկեղեցու հիմնական վերանորոգության աշխատանքները:

Այսպիսով ըստ նախնյաց ավանդությանց և հավատի պսակվեցին մեր սրբազան ուխտագնացության օրերը ի Սուչավա՝ ի Հաճկատար Ս. Աստվածածին:

ԹՂԹԱԿԻՑ



ԽԱԺԱԿ ՎՐԴ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԿԱՐԳ ԻՒՂԱԲԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հետեւեալ կարճ ուսումնասիրութիւնը փորձ մըն է բացատրելու ծագումը եւ կազմաւորումը Հայ Եկեղեցւոյ Իւղաբերից կարգին:

Ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ ներկայ ծիսական կարգի, Կիրակի Առաւօտեան ժամերգութիւնը, Գիշերային ժամ-էն դուրս, երկու տարբեր պաշտամունքներէ կը բաղկանայ.

1) Առաւօտեան ժամ[1]

2) Կարգ Իւղաբերից[2]

Կիրակի Առաւօտեան ժամերգութիւն	Սովորական օրերու Առաւ. ժամ.
I. Տէրունական աղօթք	+
II. Հրաւիրան Սաղմոս 89 : 14—17	+
III. Օրհնութիւնք.	+
1. Դան 3 : 26—45	+
2. Դան 3 : 52—88	+
Մաղթանք	+
Շարական (Հարց)	+
Քարոզ	+
Մաղթանք	+
3. Ղկ. 1 : 46—55 (Երգ Աստուածամօր)	+
Շարական (Մեծացուսցէ)	+
Քարոզ	+
Աղօթք	+
IV. Կարգ Իւղաբերից	—
1. Երեք սաղմոսք	—
ա) 112 : 1—3 եւ փառաբանութիւն	—
բ) 43 : 26,24	—

[1] Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ արարեալ սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ եւ երանելի հայրապետացն մերոց Գիւտոյ եւ Յովհաննու Մանդակունւոյ եւ սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ (Երուսաղէմ 1955), էջ 217—316:

[2] Նոյն, էջ 244—261:

գ) 145 : 10,1 —
2. Իղաբերից Աւետարան —
երգ՝ զկնի Իղաբերից Աւետարանի —
3. Քարոզ եւ Աղօթք —
V. Սաղմոս 50 +
Շարական (Ողորմեա) +
Քարոզ +
Մաղթանք +
VI. Սաղմոսք 148—150 +
Շարական (Տէր յերկնից) +
VII. Օրհնութիւն առաւօտու (Փառք ի բարձունս) +
Մաղթանք +
Առաւօտու երգ +
Քարոզ +
Աղօթք +
VIII. Երեքսրբեան (Սուրբ Աստուած) +
Մաղթանք +
Քարոզ +
Մաղթանք +
Սաղմոս 112 +
Աւետարան բժշկութեան —
Շարական +
Քարոզ +
Աղօթք +

Ըստ վերեւ տրուած ուրուագծին՝ յստակ կերպով կարելի է տեսնել թէ ներկայ Իղաբերից կարգը Կիրակի առաւօտեան ժամերգութեան մէջ ինքնին առանձին միոյթ մը կը կազմէ: Սակայն նախապէս, Առաւօտեան ժամը եւ Իղաբերից կարգը կը կատարուէին անջատաբար, ինչպէս Արեւելեան Եկեղեցիներու ծիսագիտութեան յայտնի մասնագէտ Փրոֆ. Եուան Մաթէոսը լաւագոյն կերպով կ'ապացուցանէ[3]: Ըստ յարգելի բանասէրին բացատրութեան, Հայաստանեայց եկեղեցւոյ Իղաբերից կարգը կը համապատասխանէ Համայնքային Եկեղեցիներու Կիրակնօրեայ «Յարութեան-հրսկման արարողութեան» (Cathedral Vigil of the Resurrection): Այս արարողութեան նկարագրութեան կը հանդիպինք Եթերիայի, **Ուխտագնացութիւն ի Սուրբ Տեղիս** եւ **Առաքելական Սահմանադրութեանց** (Constitutiones Apostolorum) մէջ:

Կիրակնօրեայ «Յարութեան-հսկման» արարողութեան կապակցութեամբ Եթերիայի եւ **Առաքելական Սահմանադրութեանց** զոյգ վկայութիւնները կը յստակացնեն Հայաստանեայց Եկեղեցւոյ Իղաբերից կարգի ծագման առանդութիւնը:

[3] J. Mateos, „La vigile cathédrale chez Egérie". Orientalia Christiana Periodica 27 (1961), pp. 281—312; idem., „Quelques problèmes de l'orthros byzantin", Proche-Orient Chrétien 11, (1961), pp. 17—35, 201—220, esp. pp: 203—205; idem., „The Origins of the Divine Office", Worship 41 (1967), pp. 477—485; տես նաև G. Winkler; „Zur Geschichte des armenischen Gottes dienstes im Hinblick auf den in mehreren Wellen erfolgten griechischen Einfluss", Oriens Christianus 58 (1974), pp. 167—168: eadem., „Das Offizium am Enden des 4. Jahrhunderts und das heutige chaldaische Offizium, ihre strukturellen Zusammenhange", Ostkirchliche Studien 19 (1970) pp. 291—292.

Եթերիան՝ հաւանաբար Սպանացի մայրապետ, Չորրորդ դարու վերջաւորութեան (շուրջ 381—384 թուականներուն) կը ճամբորդէ Եգիպտոս, Նուրբ Երկիր, Եդեսիա, Փոքր Ասիա եւ Կ. Պոլիս: Ան իր ուղեւորութիւններ-ը գրի կ'առնէ[4]: Եթերիա, իր ուղեգրութեան առաջին մասին մէջ Սուրբ Գրական տարբեր տեղերու եւ երեւոյթներու մասին կը պատմէ[5]: Ապա, յաջորդ մասին մէջ, ան այս անգամ ծիսական նիւթերու շուրջ կը գրէ, մանաւանդ Երուսաղէմի մէջ կատարուած արարողութիւններու մասին շատ կարեւոր բացատրութիւններ կու տայ[6]: Այս բացատրութեանց մէջ կը հանդիպինք հետեւեալ հատուածին որ Երուսաղէմի Սուրբ Յարութեան Տաճարին մէջ Կիրակիներու «Յարութեան-հսկման» արարողութեան հետ սերտ առնչութիւն ունի:

«Եօթներորդ օրը՝ Տէրունական օրը...

Անմիջապէս առաջին հաւախօսին, եւ այդ ժամուն եպիսկոպոսը կու գայ եւ կ'երթայ դէպի քարայրը՝ Յարութեան Տաճարին մէջ:

Դուռները ամբողջ կը բացուին, եւ բոլոր ժողովուրդը Յարութեան Տաճարը կը մտնէ, որ արդէն կանթեղներով լուսաւորուած է:

Երբ բոլորը ներսն են, քահանաներէն մին սաղմոս մը կը սկսի եւ միւսները կը պատասխանեն, եւ որուն կը հետեւի աղօթք մը:

Ապա սարկաւագներէն մին սաղմոս մը կը սկսի, եւ ուրիշ աղօթք մը:

Յետոյ եկեղեցականներէն մին երրորդ սաղմոս մը կ'ըսէ, երրորդ աղօթք մը եւ հաւաքական յիշատակութիւն կ'ըլլայ:

Այս երեք սաղմոսներէն եւ աղօթքներէն ետք անոնք, Յարութեան Տաճարին քարայրին մէջ բուրվառներ կը բերեն, այնպէս որ ամբողջ Տաճարը խունկի բոյրով կը լեցուի:

Ապա եպիսկոպոսը, գաւիթին մէջ կեցած կ'առնէ Աւետարանը եւ դէպի դուռը կ'երթայ, ուրկէ կը կարդայ Տիրոջ Յարութեան նկարագրութիւնը:

Ընթերցման սկիզբը ժողովուրդը կու լայ եւ կ'ողբայ այն բոլոր տառապանքի համար, որ մեր Տէրը կրեց»[7]:

Այս նկարագրութեան համաձայն, ամէն կիրակի առաւօտ կանուխ, Յարութեան յիշատակութեան արարողութիւն մը կար ճիշդ այն վայրը ուր՝ Յարութեան դէպքը պատահեցաւ, այսինքն Երուսաղէմի Սուրբ Յարութեան Տաճարին մէջ: Այս հսկումը, որ հաւախօսին կը սկսէր, հետեւեալ հիմնական տարրերէ կը բաղկանար.

1. Երեք սաղմոսներ:
2. Ամէն մէկ սաղմոսին աղօթք մը կը հետեւէր եւ ամենավերջը հաւաքական յիշատակութիւն կ'ըլլար:
3. Խնկարկութիւն:
4. Աւետարանի ընթերցում:

Կիրակնօրեայ հսկման այս արարողութեան ժամը կը համապատաս-

---

[4] Եթերիայի ուղեգրութեան լաւագոյն Անգլերէն թարգմանութիւնը արժէքաւոր փաստաթուղթ ծանօթագրութիւններով հրատարակած է J. Wilkinson, Egeria's Travels to the Holy Land, Newly Translated with Supporting Documents and Notes, (Jerusalem, England 1981, revised edition).

[5] Նոյն, էջ 91—123:

[6] Նոյն, էջ 123—147:

[7] Նոյն, էջ 124—125:

խսնէ այն պահին, երբ երեք իւղաբեր կիներ Քրիստոսի գերեզմանը այցելեցին.

«Բայց միաշաբաթուն
Վաղ քուչ ընդ սուաւօտն եկին ի գերեզմանն
Բերին զխունկսն զոր պատրաստեցին»[8]:

Ճիշդ այս պատճառով Փրոֆ. Մաթէոսը Կիրակնօրեայ «Յարութեան-հսկման» արարողութեան խնկարկութիւնը կը նոյնացնէ այն դէպքին հետ, երբ իւղաբեր երեք կիներ Քրիստոսի գերեզմանը այցելեցին: Անոր մարմինը օծելու համար, ըստ հրէից սովորութեան «բերին զխունկսն զոր պատրաստեցին»[9]: Փրոֆ. Մաթէոսին այս բացատրութիւնը համոզիչ կը դառնայ, երբ նկատի կ'ունենք Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ «Յարութեան-հսկման» այս արարողութեան վերնագիրը, որ է «Կարգ Իւղաբերից»:

Իւղաբեր կիներն էին, որոնք առաջինը հրեշտակէն ստացան Քրիստոսի Յարութեան աւետիսը. «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ, այլ յարեաւ...»[10]: Նմանապէս երեք սաղմոսներու արտասանութիւնը, նախքան Աւետարանի ընթերցումը, կը խորհրդանշեն գերեզմանի մէջ Քրիստոսի երեք օրերը[11]:

Այս արարողութեան բարձրակէտը Աւետարանի ընթերցումն է: Եթերիայի ուղեգրութիւնը ցոյց կու տայ, թէ Աւետարանի ընթերցումը միմիայն Յարութեան դէպքը չի պատմեր, այլ նաեւ կը խօսի Քրիստոսի չարչարանքին մասին, քանի, ըստ Եթերիային «Ընթերցման սկիզբը ամբոխը կու լայ այն բոլոր նեղութեանց համար, որ կրեց մեր Տէրը»[12]: Այս բացատրութիւնը ընդունելի կրնայ ըլլալ եթէ նկատի ունենանք Հայ Եկեղեցւոյ աւանդութիւնը, ուր Իւղաբերից կարգի չորս Աւետարաններուն երեքը (Մատթէոս, Ղուկաս եւ Յովհաննէս) Քրիստոսի թէ թաղման եւ թէ Յարութեան դէպքերը կը պատմեն[13]:

Մեր երկրորդ վկայութիւն կը ստացուի **Առաքելական Սահմանադրութիւններէն**, որ եկեղեցական օրէնքներու հաւաքածոյ մըն է, խմբագրուած Անտիոքի շրջանին մէջ Չորրորդ դարու վերջերը[14]: **Առաք. Սահմ.**-ը Կիրակնօրեայ «Յարութեան-հսկման» արարողութիւնը հետեւեալ ձեւով կը բացատրէ.

---

[8] Ղկ. 24 : 1, տես նաեւ Մթ. 28 : 1 եւ Յով. 20 : 1:

[9] Mateos, „La Vigile", pp. 290—292; տես նաեւ Winkler, „Zur Geschichte.", p. 168-

[10] Ղկ. 24 : 6:

[11] Mateos, „La Vigile", p. 301; Winkler, „Das Offizium.", p. 291; տես նաեւ R. Zerfass, Die Schriftlesung im Kathedraloffizium Jerusalems (Liturgiwissenschaftliche Quellen u. Forschungen 48, Münster 1968), p. 46. P. F. Bradshaw ժամերգութեան ծագման եւ կազմաւորման կապակցութեամբ իր հրատարակութեան մէջ [Daily Prayer in the Early Church: A study of the Origin and Early Develepment of the Divine Office, (Alcuin Club Collections 63. London, 1981), p. 87] կասկած կը յայտնէ Կիրակնօրեայ «Յարութեան-հսկման» արարողութեան ընթացքին երեք սաղմոսներու ընթերցման եւ խնկարկութեան մասին Փրոֆ. Մաթէոսին մեկնաբանութեան կապակցութեամբ: Սակայն Bradshaw-ին փորձը հիմնուած է անհաստատ վկայութեանց վրայ, ինչպէս G. Winkler Bradshaw-ին գրքին համար գրած իր գրախոսականին մէջ կը մատնանշէ, տես G Winkler „New Study of Early Development of the Divine Office". Worship 5o (1 82). po. 33—34.

[12] Mateos, „La vigile", p. 290.

[13] Ժամագիրք, էջ 248—256:

[14] Առաքելական Սահմանադրութեանց լաւագոյն հրատարակութիւնը կատարած է F. X. Funk, Didascalia et Constitutiones Apostolorum (2nd edition, Paderborn 1905).

«Եւ Տիրոջ Յարութեան օրը, որ է Տէրունական օր, միատեղ եղէք
առաւել ժրաջանութեամբ, փառաւորելու համար զԱստուած
իմանալու Յարութեան փրկարար խօսքը
որուն համար յոտնկայս երիցս կ'աղօթենք ի յիշատակ Անոր համար
որ երեք օրէն յարութիւն առաւ»[15]:

Առաքելական Սահմանադրութեան վերոյիշեալ հատուածին եւ Եթերիսի ուղեգրութեան մէջ գտնուած Կիրակնօրեայ Յարութեան արարողութեան բացատրութեանց մէջ նկատելի մօտիկ նմանութիւններ կը տեսնուին: Առաքելական Սահմանադրութեան յիշեալ հատուածին առաջին տողը Տիրոջ օրուան մասին (–Կիրակի) կ'ակնարկէ, երբ այս արարողութիւնը կը կատարուի: Ուրեմն կը համապատասխանէ Եթերիայի բացատրութեան: Եթերիայի նման Առաքելական Սահմանադրութեան մէջ տրուած այս հսկման արարողութեան էական մասը Յարութեան Աւետարանի ընթերցումն է: Եթերիայի երեք սաղմոսներուն եւ անոնց յաջորդող երեք աղօթքներուն փոխան միայն երեք աղօթքներ կան: Կրնանք ենթադրել թէ Առաքելական Սահմանադրութեան երեք աղօթքները կը համապատասխանեն Եթերիայի երեք սաղմոսներուն եւ անոնց հետեւող երեք աղօթքներուն[16]:

Մինչեւ հոս տեսանք թէ Չորրորդ դարու երկու աղբիւրները (Եթերիայի ուղեգրութիւնը եւ Առաքելական Սահմանադրութիւն) Կիրակիներու «Յարութեան-հսկման» արարողութեան մը մասին կը խօսին: Այս արարողութիւնը կը բաղկանայ սաղմոսներէ, աղօթքներէ, խնկարկութենէ եւ Աւետարանի ընթերցումէ: Հսկման այս արարողութեան կորիզը Քրիստոսի Յարութիւնն է, որ կը յիշատակուի Կիրակի հաւախօսին բոլոր հաւատացեալներու մասնակցութեամբ:

Եթերիայի ուղեգրութեան եւ Առաքելական Սահմանադրութեան յիշեալ հատուածներու քննութիւնը ցոյց կու տայ, թէ բացատրուած արարողութիւնը Համայնքային եկեղեցւոյ հսկում է (Cathedral vigil): Այս արարողութիւնը Համայնքային (Cathedral office) կը կոչուի, քանի որ նախապէս կը կատարուէր ամբողջ համայնքի մասնակցութեամբ ծխական եկեղեցւոյ մէջ, հակառակ Վանական պաշտամունքին (Monastic office), որ կանխապէս վանքերու մէջ տեղի կ'ունենար միայն վանականներու մասնակցութեամբ:

Համայնքային եկեղեցիներու ժամակարգութիւնները հանդիսաւոր արարողական նկարագիր ունէին: Այս արարողութեանց սաղմոսները օրուան ժամերուն համեմատ, մասնաւոր զատուած սաղմոսներ էին, որոնք կ'երգուէին: Համայնքային եկեղեցիներու պաշտամանց կը մասնակցէին հաւատացեալներ, սարկաւագներ, քահանաներ եւ եպիսկոպոսը, այսինքն՝ ամբողջ տեղական համայնքը[17]:

Վանական եկեղեցիներու արարողութիւններու հիմնական տարրը՝

---

[15] Նոյն, էջ 173:

[16] Mateos, „La vigile", pp. 299–301.

[17] Համայնքային եկեղեցիներու արարողութեանց կապակցութեամբ տես Mateos, „The Origins", pp. 482—484; idem., „The Morning and Evening Offices", Worship 42 (1968), pp. 40—41; idem., „Quelques problèmes", p. 204; G. Winkler, „Über die Kathedralvesper in den verschieden Riten des Ostens und Westens", Archiv für Liturgiewissenschaft 16 (1974), p. 36; eadem., „Zur Geschichte", pp. 167—168; R. Taft, The Liturgy of the Hours in East and West: The Origins of the Divine Office and Its Meaning for Today (Collegeville 1986), pp. 57—73.

խումբ մը սաղմոսներու արտասանութիւնը եւ անոնց վրայ կատարուած խորհրդածությունն էր: Հետեւաբար վանական պաշտամունքները մտածողական կամ խորհրդածական էին եւ սաղմոսները սկիզբէն սկսելով թուային կարգով կ'արտասանուէին[18]:

Այս յօդուածին մէջ ուսումնասիրութեան ենթակայ Կիրակնօրեայ «Յարութեան-հսկման» արարողութիւնը, համայնքային եկեղեցական արարողութիւն մըն է:

«Յարութեան-հսկման» այս արարողութիւնը, որ ծագում առաւ Երուսաղեմի մէջ, տարածուեցաւ դէպի Արեւելք ու Արեւմուտք: Արեւելեան եկեղեցիներէն միայն Հայ եւ Բիւզանդական եկեղեցիները այս արարողութեան սկզբնական նկարագիրը պահեցին[19]:

Հայկական աւանդութեան մէջ Կիրակնօրեայ «Յարութեան-հսկման, այս արարողութեան ակնարկութեան առաջին անգամ ըլլալով կը հանդիպինք Յովհաննէս Օձնեցիին Կանոններուն եւ «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գրութեան մէջ[20]: Հայաստանեայց Եկեղեցւոյ 8-րդ դարու ամէնանշանաւոր կաթողիկոսներէն Օձնեցիի վկայութեան համաձայն, Հայ Եկեղեցւոյ Իւղաբերից կարգը, որ Կիրակի առաւօտներ կը կատարուի, կը բաղկանայ.

1. Երեք սաղմոսներէ— 43 : 26, 53 : 4, 145 : 10
2. Յարութեան Աւետարանի ընթերցումէ.

Նոյնպիսի ակնարկութեան նաեւ կը հանդիպինք Ստեփանոս Սիւնեցիի (շուրջ 680—735) «Ժամակարգութեան մեկնութեան» մէջ[21]: Օձնեցիի վկայութեան առաւել, Սիւնեցին կը յիշէ նաեւ Քարոզ մը, որ Աւետարանի ընթերցման կը յաջորդէ:

Տասներորդ դարէն Խոսրով Անձեւացիի «Ժամակարգութեան մեկնութիւնը» եւս Իւղաբերից կարգի նոյն տարրերուն մասին կը խօսի[22], որոնք արդէն Օձնեցիին եւ Սիւնեցիին գրութեանց մէջ ներկայ էին: Աւետարանի յաջորդող քարոզէն ետք Անձեւացին կը յիշէ նաեւ Մաղթանք մը[23]:

Ուրեմն, համաձայն երեք հին հայկական աղբիւրներու (Օձնեցի, Սիւնեցի, Անձեւացի) կրնանք հետեւեալ տախտակը ներկայացնել.

Յովհաննէս Օձնեցի	Ստեփանոս Սիւնեցի	Խոսրով Անձեւացի
1. Երեք սաղմոսք	1. Երեք սաղմոսք	1. Երեք սաղմոսք
2. Խնկարկութիւն	2. Խնկարկութիւն	2. Խնկարկութիւն
3. Աւետ. ընթերցում	3. Աւետ. ընթերցում	3. Աւետ. ընթերցում
	4. Քարոզ	4. Քարոզ
		5. Մաղթանք

[18] Վանական եկեղեցիներու արարողութեանց մասին տես J. Mateos, „L'office monastique à la fin du IVe siècle: Antioche, Palestine, Cappadoce", Oriens Christianus 47 (1963), pp. 68—69, 87; idem., „The Origins", pp. 481—482; idem., „The Morning and the Evening" p. 40; Taft, The Liturgy of the Hours, pp. 31—56.

[19] Mateos, „La vigile", pp. 302—307.

[20] Յովհաննու Իմաստասիրի Օձնեցւոյ Մատենագրութիւնք (Վենետիկ 1833), էջ 90, 103, տես նաեւ Վ. Հացունի, Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին (Վենետիկ 1965), էջ 370—371:

[21] Տես Ս. Ամատունիի հրատարակութիւնը, «Ժամակարգութեան մեկնութիւն Ստեփանոսի Իմաստասիրի Սիւնեաց Եպիսկոպոսի», Արարատ Մայիս—Յունիս (1915), էջ 488, տես նաեւ Հացունի, Պատմութիւն հայոց Աղօթ., էջ 370—371:

[22] Խոսրով Անձեւացի, Գիրք որ կոչի մեկնութիւն աղօթից (Կ. Պոլիս 1730), էջ 141—147):

[23] Նոյն, էջ 147:

Իւղաբերից կարգի կապակցութեամբ վերեւ ներկայացուած երեք հայկական աղբիւրներու վկայութիւնները կը համապատասխանեն Եթերիայի եւ Առաքելական Սահմանադրութեան մէջ գտնուող Կիրակնօրեայ «Յարութեան-հսկման» արարողութեան բացատրութեանց, ուր կան երեք սաղմոսներ, խնկարկութիւն եւ Աւետարանի ընթերցում:

Իւղաբերից կարգի մասին հայկական հին աղբիւրները քննելէ ետք, այժմ տեսնենք Հայ Եկեղեցւոյ մէջ նոյն արարողութեան ներկայի սովորութիւնը:

Կ. Պոլսոյ Հոգելոյս Պատրիարք, Ամէն. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան[24], եւ ուրիշներ կարծեցին թէ Իւղաբերից կարգը կը սկսի «Կիրակ նաւուր Քարոզով» («Վասն սուրբ տեղւոյս շինութեան...») եւ անոր հետեւող աղօթքով («Դու ես թագաւոր յաւիտեանս յաւիտենից»)[25]: Սակայն, ըստ Հայ Եկեղեցւոյ ներկայ սովորութեան Իւղաբերից կարգը պէտք է սկսի «Երգ Իւղաբերից Աւետարանի» («Եղիցի անուն Տեառն Օրհնեալ—Սղ. 112 : 1—3) երգեցողութեամբ[26]: Կիրակնաւուր Քարոզը կը պատկանի Կիրակնօրեայ Առաւօտեան ժամ-ին: Այս քարոզը Իւղաբերից կարգի մաս չի կազմեր:

Երկրորդ սաղմոսի («Արի Տէր օգնեա մեզ—Սղ. 43 : 27») երգեցողութեան սկիզբը քահանան սարկաւագին եւ երկու մոմակիրներու հետ ներս աւանդատուն կ'երթայ, ուր կը սպասէ մինչեւ Սղ. 43 : 24-ի («Արի եւ մի մերժեր...») երգեցողութեան վերջանալուն: Երրորդ սաղմոսի («Թագաւորեսցէ Տէր յաւիտեան—Սղ. 145 : 10,1») երգեցողութեան սկիզբին, աւանդատան դուռը կը բացուի եւ քահանան շուրջառով զգեստաւորուած եւ Իւղաբերից Աւետարանը ձեռքին, թափօրով դուրս կ'ելլէ: Թափօրին առջեւէն սարկաւագը կը քալէ բուրվառով: Անոր կը հետեւին երկու մոմակիրները եւ քահանան: Թափօրը դէպի խորան կը յառաջանայ, ուրկէ քահանան կը սկսի կարդալ Իւղաբերից Աւետարանը: Իւղաբերից կարգի համար չորս Աւետարանի ընթերցումներ նշանակուած են, առնուած չորս Աւետարաններէ: Սակայն ամէն Կիրակի, Իւղաբերից կարգի համար միայն մէկ Աւետարան կը կարդացուի ըստ օրուան ձայնին[27]: Ինչպէս նախապէս յիշեցինք, չորս Աւետարաններէն երեքը (Մատթէոս, Ղուկաս և Յովհաննէս) Քրիստոսի թէ թաղման և թէ յարութեան դէպքերը կը պատմեն: Աւետարանի ընթերցման կը հետեւի «Երգ զկնի Իւղաբերից Աւետարանի»[28], որմէ ետք սարկաւագը կ'ըսէ (Զուարճացեալքս» քարոզը, եւ ապա քահանան կ'արտասանէ «Ամենակեցոյց ճշմարիտ...» աղօթքը[29]: Աղօթքէն ետք քահանան նոյն թափօրով (սարկաւագ եւ երկու մոմակիրներ) կ'երթայ դէպի աւանդատուն:

Ուրեմն, ըստ տրուած բացատրութեան Հայ Եկեղեցւոյ ներկայ Իւղաբերից կարգը կը բաղկանայ հետեւեալ տարրերէ.

---

[24] Մ. Օրմանեան, Միսագիտութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ (Երուսաղէմ 1977), էջ 41:

[25] Ժամագիրք, էջ 242—248:

[26] Նոյն, էջ 244:

[27] Իւղաբերից կարգի Աւետարանի ընթերցումը ութը ձայներու հիման վրայ բաժնուած է, հետեւեալ կարգով.

Բկ—Դկ=Մատթէոս 28 : 1—20.

Բձ—Դձ=Մարկոս 15 : 42—16 : 18.

Ակ—Գկ=Ղուկաս 28 : 50—24 : 12.

Աձ—Գձ=Յովհաննէս 19 : 88—20 : 18.

Տես նաեւ Ժամագիրք, էջ 245—256.

1. Երեք սաղմոսներ.
   ա. Սղ. 112 : 1—3 «Եղիցի անուն տեառն..» (եւ փառաբանութիւն)
   բ. Սղ. 43 : 27,24 «Արի Տէր օգնեա..»
   գ. Սղ. 145 : 10,1 «Թագաւորեսցէ..»
2. Աւետարանի ընթերցում.
   (եւ «Երգ՝ զկնի Իւղաբերից Աւետարանի»).
3. Քարոզ եւ Աղօթք.

Յիշեալ տարրերուն եւ Եթերիայի ու Առաքելական Սահմանադրութեան մէջ յիշուածներուն միջեւ Բաւական մօտիկ առնչութիւն կը տեսնուի: Հետեւաբար կրնանք եզրակացնել թէ Հայ Եկեղեցւոյ ներկայ Իւղաբերից կարգը կը կատարուի նոյն ձեւով, ինչպէս տեղի կ'ունենար Չորրորդ դարուն Երուսաղէմի մէջ:

Դարերու ընթացքին Հայ Եկեղեցւոյ շնորհալի հայրերը Իւղաբերից կարգին մէջ հետեւեալ տարրերը աւելցուցին.

1. «Երգ՝ զկնի Իւղաբերից Աւետարանի».
2. Քարոզ եւ Աղօթք.

Առաջինը Իւղաբերից կարգին մէջ ներկայացուեցաւ շուրջ 10-րդ դարուն, քանի 7-րդ եւ 8-րդ դարերու աղբիւրներուն մէջ դեռ գոյութիւն չունի: Իսկ Քարոզը եւ Աղօթքը հաւանաբար 7—8-րդ դարերուն Իւղաբերիցի մաս կազմեցին:

Այս կարճ ուսումնասիրութիւնը փորձ մըն է Իւղաբերից կարգին պատմականը ներկայացնել եւ այս գեղեցիկ արարողութեան իմաստի բացատրութիւնը տալ: Եկեղեցական պաշտամունքի պատմականը շատ կարեւոր է: Եկեղեցւոյ պատմութեան եւ աւանդութեանց ուսումնասիրութիւնը մեզ կ'առաջնորդեն ոչ միայն լաւ ըմբռնելու եկեղեցական պաշտամունքները, այլ նաեւ մեզի կարելիութիւնը կու տան Քրիստոնէական նախկին ծիսական աւանդութիւնները դարձնելու գործնական օղակը մեր ներկայի աւանդութեան: Աւանդութիւնը միայն անցեալ չէ, այլ նաեւ եկեղեցւոյ ներկայի բաղադրիչը:

---

[28] Ժամագիրք, էջ 257—259.
[29] Նոյն, էջ 260—261.



Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

«ՇԱՐԺԻ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ»
(Թիֆլիս, 1902)

ՀԱՏՎԱԾ

Թ. 602—603. «ի նոյն ամի սուրբ Կարապետն, յինքնակնեան տեղիսն էր, փլաւ. զի շարժ խստագոյն եղև»: Տ. Յովհ. Մամիկ. Գ. Բ.

Թ. 735 յուլիսի 21, Հրոտից 15. «խաւար անտեսանելի կալաւ զՄոզանն սահման, և զաւուրս քառասուն շարժեցաւ վայրն, և խորասոյզ եղեալ ընկղմեցաւ կենդանւոյն հոգիք իբրև տասն հազար: Վասն այնորիկ Վայոց Ձոր անուանեցաւ»: Տ. Մովս. Կալանկ. Գ. ԺԶ.

«Յանկարծակի եհաս ի վերուստ պատուհաս Տեառն և կալաւ խաւար շօշափելի զգաւառն ամենայն զաւուրս քառասուն, և շարժումն և դղրդումն սաստիկ. զի եռայր երկիրն ահեղ դողացմամբ յանդնդոց և բարձրանայր մինչև ի վեր և անդէն իբր զալիս ծովու փլուզանէր. լերինք տապալէին, վէմք ի հիմանց քաքտէին, տունք և ապարանք գեղեցիկք լինէին գերեզմանք բնակչաց, սոլբիւրք խցէիք, գետք կորնչէին և ամենայն տեղի երերէր տատանմամբ, և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին ի ներքուստ յանդնդոց և ի վերուստ յօդոց «վա՛յ ձոր, վա՛յ ձոր». և կենդանւոյն ընկղմեցան ոգիք իբրև տասն հազար, զորս գիտէին ի թիւ արկին, և զանծանօթիցն ոչ ոք գիտէր զհամարն. յաղագս որոյ կոչեցաւ անուն գաւառին Վայոյ Ձոր»: Տ. Ստեփ. Օրպէլ. Գլ. ԻԹ.

(Թ. 726 «Վայոց Ձորոյ ընկղմումն». թ. 737 «Շարժ ահագին: Երկու նոր աստղ երևեցան՝ մին յարևելք և մի յարևմուտք: Երկու ամիս օդդ փոշի տեղեաց թիզ մի: Եղեն ցոլմունք աստեղաց և շարժ սաստիկ»: Տ. Մխթ. Այրիվանեցի).

Թ. 800—802 «Յայս ժամանակս եղև շարժ սաստիկ. և լերիք Կողոտու (Կողատու), որ կան աստի և անտի, հպեցան առ միմեանս, զոր տեսին մարդիկ, և փլաւ լեառն մի և անկաւ յԵփրատ, և արգելեաց զնա օր մի, և գնայր գետն ի վեր, և բազում լերինք խզեցան, և յոլով աղբերք բացան ջրոյ, և կպրոյ, և նաւթոյ, և բազում խցան յաղբերաց»: Տ. Սամ. Անեցի: (Նոյնը տե՛ս Մխ. Այր. 791 թուին):

Թ. 854. «Շարժ յաղուհացսն, որ ի Դուին, մեռան ի միում գիշերի երկոտասան հազարք»: Տ. Մխ. Այր.

Թ. 858. «Յամս Զաքարիայի Հայոց կաթուղիկոսի յետ Է. ամի գերութեանն Հայոց» (տ. Թովմ. Արծր. գ. 22) «յահագին իմն շարժմանց եղելոց ի Դուին քաղաքի բազում սասանութիւնս և փլուզմունս տանց և պարսպաց և ապարանից լինէր, և առհասարակ քանդումն և դղրդումն առնոյր քաղաքն, այլ և մահ յոլովից մարդկան ի վերայ հասանէր և այնպէս ահագին իմն լինէր վտանգ տագնապին, մինչև ոչ ոք մնալ ընդ յարկաւ, այլ ի հրապարակս և ի փողոցս ելեալ հաչեալ հառաչէին: Իսկ ցրտաշունչ սառնամանիքն ձմերայնոյն առաւել բերէր զլքուցումն հեծութեան, զի հոլովք մսեալք և ծայրատեալք լինէին: Իսկ սուրբ հայրապետն Զաքարիաս ուժգին աղօթիւք և պաղատանօք մշտնջենաւոր

և աղերսալի աղօթս առ բարեգութն Աստուած մատուցանէր և երկնային ազդեցութեամբ ի բաց բառնայր զաստուածասաստ բարկութիւնն, անվնաս զեկեղեցին Քրիստոսի պահեալ ի բազմաբեր ցասմանէ վտանգին»: Տ. Յովհ. կաթ. ԻԷ:

Թ. 863. «Ի քառասնորդս պահոց ի փոքրիկ շաբաթուն եղև շարժումն սահագին և զբազումս կոտորեաց և զգեղեցիկ շինուածս տապալեաց, և տևեաց մինչև ի ժամանակս երից ամսոց»: տ. Ստ. Ասող. Բ. Բ. (նոյնը տե՛ս և Սամ. Անեցի 865 թուին):

Թ. 869. «Ի յերեքհարիւր յութևտասն թուականին Հայոց եղև անհնարին և հիացուցանող շարժն Դունայ, որ զամ մի ողջոյն դողացեալ խորասուզեաց յանդունդս անձինս իբրև երկոտասան բիւր մարդկան»: Տ. Մովս. Կաղ. Գ. 21.

Թուին 893. «Զայսու ժամանակաւ («յերրորդ ամի թագաւորութեանն Սմբատայ ի վերայ Հայոց») սահագին իմն յեղակարծում ժամու սաստիկ շարժմանց եղելոց ի գիշերի ի Դուին քաղաքի բազում սասանումն և սարսափումն և դղրդումն և կործանումն զբնակչօք քաղաքին զեղեալ, հիմն ի վեր տապալէր. վասն զի առհասարակ ի վայր փլուզեալ զպատուար պարսպացն, և զապարանս գլխաւորացն, և զտունս ռամկացն իբրև զերիզուտ վայրս առապարաց յական թօթափել տեսանիւր: Այլև զաստուածաշէն եկեղեցիս կաթուղիկոսարանին և զայլ ևս հաստահեղոյս վկայարանս դղրդեալ քանդեալ աւերեալ ի վայր հոսէին, որ գրեթէ իբրև զփապարս վիմուտս դերբկաց սարսափելի տեսողացն երևիւր: Այլև հեղձամղձուկ յարկածածկ հողաթաւալ հողահեղձոյց սատակումն դիակոյտ բազմութեանն, որ կարծրագոյն քարեղէն և անկարեկիր միտս էր ստացեալ, յորդորէր զնա ի բազում ողբս և յարտոսրաթոր կականմունս։ Թողում ասել զազգակիցս և զկարեկիցս և զլծակից հարազատութիւն մարդկան, որոց կականումն և ողբումն և աշխարհումն գուժից ճչոյ և կանչոյ և կառանչոյ, և աղիողորմ ձայնք երգեցիկ գուսանաց (կուսանաց) և սևազգեաց կանանց և արանց վշտահար հեծութեամբ զգացելոց մինչև յերկինս բարձրացեալ հասանէր: Իսկ զբազմութիւն դիականց ոչ բաւեալ տալ գերեզմանացն, զբազումն ի վիհս և խորափիտս և ի դարաւիլակս ընկեցեալ լինէին»: Տ. Յովհ. կթ. ԼԲ, (տպ. Երուսաղ.): «Այս շարժումն սաստկագոյն որ եղև յամս Զաքարիայի Հայոց կաթուղիկոսի յետ Է. ամի գերութեան Հայոց»: Տ. Թովմ. Արծ. Գ. 22.

Թ. 995. «Շարժեցաւ երկիր, բայց սաստկագոյնս աշխարհն Չորրորդ Հայոց, Հաշտեանք, Խորձեան, Ծոփք, Բալու և Պաղնատուն: Եւ բոլորովին փլան շինուածք ամենայն ի հիմանէ դղրդեալք... հերձան լերինք և պատառեցան վէմք, բացան աղբիւրք յանջրդին տեղիս և ցամաքեցան ելք սովորական ջուրց, դաշտք ծուծանէին և լերինք որպէս առ միմեանս խոնարհէին. ծխոյ նմանութեամբ՝ փոշոյն ծառացելոյ զօղսն լնոյր: Եւ ամենայն շինուածք քաղաքաց, գիւղից և ագարակաց տապալեալ, զբնակիչսն ի ներքոյ առնէին, մեռեալս և կիսամեռս զնոսա առնելով, և մնացելոցն կենդանեաց ճիչք լալեաց և վայք ողբոց ի վեր բարձրանային: Եւ բերդն Բալու հանդերձ շինուածովքն և քարն ևս փլուզանիւր. խարխալեալ Ճապաղջուր, բերդին Դկլաթայ, Աթթախայ և Ամթայ և ամենայն քարուկիր գեղեցկաշէն եկեղեցեաց և ապարանից: Այս լինէր յամսեանն Քաղոց ի վերջնումն աւուր. և զայս ձև օրինակի կացեալ ամիսս Է. մինչև ցՆաւասարդ»: Տ. Ստ. Ասող. Գ. ԼԶ.

Թ. 1003—1004. «Եղև շարժ սաստիկ ընդ ամենայն երկիր. երերևալ դողաց ամենայն արարած. յահէ և բարբառոյ բարկութենէն ոչ ժամանէին խոստովանութեան և հաղորդութեան. մարդ և անասուն պակասեցան յերկրէ, և մնացեալ չորքոտանիք անմարդ մնացեալ շրջէին ի վերայ երկրի»: Տ. Մատթ. Ուռհ. ԼԷ. (նոյնը տ. Սամ. Ան. 1007 թ. և Սմբ. Սպար. 1008 թ.)

Թ. 1011. «Շարժ սաստիկ յԱռաջաւորին: Ընկղմեցաւ Երզնկա ողջոյն, և մնաց միայն տունն Կիրակոսի ողորմածին: Բազում եկեղեցիք և բերդք տապալեցան»: Տ. Մխ. Այր.

Թ. 1045. «Եղև շարժ սահաւոր և սոսկալի, և դողացաւ հասարակ ամենայն տիեզերք... Բազում եկեղեցիք խախտեալ փլաւ ի հիմանց ի յԵկեղեաց գաւառին, և քաղաքն, որ Երզնկան կոչի, փլաւ առհասարակ և պատառեցաւ երկիրն, և արք և կանայք ընկղմեցան ի խորս անդնդոց, և զաւուրս բազումս գայր ձայն աղաղակի նոցա ի խորոց անդնդոց: Եւ էր յամառնային ժամանակին, և աւուր աւուր շարժէր կրկին (sic) յամին յայնմիկ... Եւ յամառնային ժամանակին խաւար և մութն լինէ ի վերայ երկրի, մինչև արեգակն և լուսինն ի կերպս արեան երևէին. և յորժամ ելանէր ի կամարն, յիստակ էր»: Տ. Մատթ. Ուռհ. ԿԷ. (նոյնը տ. և Սմբ. Սպար. 1045 թ.):

Թ. 1104. «Ի հինգ հարիւր յիսուն և երեք թուին ի Մարերի երկոտասանն դողաց երկիր հանդերձ աղիողորմ ձայնիւ, որ գայր ի լերանց և ի դարափուլ վիմաց. և օրն էր կիրակէ և ձայնն վառ... Եւ փլան յոլով քաղաքք, և մեռան քառասուն հազար ան-

ձինք, զոր թուել կարացին»: Տ. Վարդան պատմ. ԿԷ. տ. և 1114 թ.:

Թ. 1114. «Յամսեանն Մարերի յերկոտասան աւուրն յաւուր կիւրակէին տօնի Խաչ Գիւտին եղև մեծասաստ արհաւիրք ի վերայ տիեզերաց... մինչ դեռ էաք յափըշտակեալ ի խոր քնոյ, եղև յանկարծակի ճայթումն և թնդումն ահաւոր, և գոռայր առհասարակ ամենայն արարածք, և եղև դղրդումն սաստկապէս և ահագին թընդմամբ շարժեցաւ երկիր... և լերինք, և պատառեցան ապառաժ վէմք, և հերձան բըլուրք... Եւ լսելի լինէր ձայնն զկնի շարժմանն իբրև զմի ժամ գիշերին, և յահէ բարբառոյ բարկութեանն ամենայն ոք յուսահատեցաւ ի կենացս և ասացին, եթէ եհաս օր կատարածի և դատաստանի մերում, զի զայն աւուր զպատկերն ունէր. օրն էր կիւրակէ, և ձայնն ի վառի ձայնն էր, և լուսինն փուլ էր, զամենայն պատճառ զվերջին աւուրն ունէր. և ահա՛ կային ահաբեկեալ իբրև զմեռեալս յուսահատեալք: Եւ յայսմ գիշերին կործանեցան բազումք քաղաքաց և գաւառաց և ամենայն որ կործանեցան, էին գաւառք ֆռանկաց և այլ գաւառաց կամ այլազգեաց ոչ եղև վնաս և ոչինչ: Եւ յայսմ գիշերի կործանեցաւ Սամուսատ քաղաք և Հասան Մսուր, Քեսուն, և Ռապան, և Մարաշ քաղաք ահաւոր, և կործանեցան ոգիք իբրև քառասունհազար, զի էր բազմամբոխ քաղաք, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: Եւ այսպէս ի Սիս քաղաք կործանեցաւ անթիւ բազմութիւն արանց և կանանց, և այլ բազում գեղք և վանորայք, և անհամար արք և կանայք հազարս հազարաց և բիւրս բիւրոց կործանեցան: Եւ եղև ի Սեաւ լեառն անուանի, յանապատն որ կոչի Բարսեղեանց, էին ժողովեալ յեկեղեցօրհնէք սրբասնեալ կրօնաւորք և վարդապետք Հայոց, և կային ի պաշտօն Աստուծոյ անկաւ եկեղեցին ի վերայ նոցա, և երեսուն կրօնաւորք և երկու վարդապետք կատարեցան ի ներքոյ նորա, որ կան մինչև ցայսօր: Նոյնպէս եղև մերձ ի Մարաշ ի մեծ անապատին, որ ասի Յեսուանց, անկաւ և կործանեցաւ վանքն, և ամենայն դասք կրօնաւորացն: Եւ յորժամ դադարեաց շարժն, սկսաւ ձիւն գալ, և զամենայն աշխարհ ի ներքոյ կոտորեաց»: Տ. Մատթ. Ուռհ. ՄԺԷ.

Թ. 1138—1139. «Ի հինգհարիւր ութսուն և ութ թուին եղև շարժ սաստիկ և կործանեցաւ քաղաքն Գանձակ, և տապալեցաւ շինուածքն որ ի նմա ի վերայ բնակչաց իւրոց... փլաւ և լեառն Ալհարակ ի շարժմանէն և արգել զձորակն որ անցանէր ընդ մէջ նորա, և եղև ծովակ, որ է մինչև ցայսօր, և լինին ի նմա ձկունք ազնիւք»: Տ. Կիրակոս Գանձակեցի, 67:

Նոյն. «Ընդ աւուրսն այնոսիկ եղև յանկարծակի մէգ և մառախուղ, և լցաւ առհասարակ լեառն և դաշտ, և եղև շարժ ահագին, և կործանեցաւ մայրաքաղաքն Գանձակ. և շնորհօք Աստուծոյ, ապրեալ եղն նորընծայ կաթուղիկոսն (Աղուանից), բայց մեռաւ շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր (Թոքակերի որդի), հանդերձ այլ բազմութեամբ արանց և կանանց և մանկտուոյ, որոց ոչ գոյ թիւ, զորս սպանին շինուածքն անկեալ ի վերայ... փլաւ և լեառն Ալհարակ և կապեաց զձորակ, որ անցանէր ընդ մէջ նորա, և եղև ծով որ է մինչև ցայսօր ժամանակի»: Տ. Կիր. Գանձ. 101.

Թ. 1138—1139 «Ի ՇՁԸ, թվին ի ԺԷ. Արեգ ամսու շարժմամբ կործանեցաւ Գանձակ քաղաք և սուրբ վարդապետքն Գրիգոր և Սարգիս ընկղմեցան, և եկեղեցին Հաղբատայ փլուզանի»: Տ. Սամ. Անեցի: (Նոյնը տ. Մխ. Այր. 1141 թ.):

Թ. 1157. «ի հոկտեմբերի ամսոյ ԻԶ. սկսաւ շարժ լինել յամենայն երկիր. և բազում քաղաքք տանկաց ի սահմանս Արաբիոյ, որ է Հալապ, կործանեցան ի հիմանց. և զազգս քրիստոնէից պահեաց Տէր մինչև ցայժմ. և անդադար լինէր շարժն մինչև ի փոխել թուականիս, որ ոչ կայր համար կամ թիւ շարժմանն զամիսս չորեքտասան»: Տ. Գրիգոր երէց, ՄԿԷ.

Թ. 1165—1166. «Եղև շարժ յԵրզնկայն»: Տ. Սամ. Ան. և Վարդ. Պատմ. (նոյնը Մխիթ. Այր. 1161 թուին):

Թ. 1236. «Շարժ եղև յԵրզնկան. եկեղեցի մի փլաւ»: Տ. Ան. պտմ.

Թ. 1251. «Շարժմամբ կործանեցաւ Երզնկայն»: տ. Մխ. Այր.

Թ. 1261. «Ի Կիլիկիայ շարժ եղե»: «Շարժն եկն ի Վրացտուն և բազում վնաս արար»: Տ. Մխ. Այր.

Թ. 1268. «Շարժ եղև յԵրզնկայն յաւուր կիւրակէի, 15 հազար մարդիկ մեռան»: Տ. Ան. պտմ.

Թ. 1281 «Շարժ եղև յԵրզնկան, Աստուած պահեաց, որ ոչ փլաւ»: Տ. Ան. պտմ.

Թ. 1285. «Շարժն երեկ ի Տփխիս»: Տ. Սամ. Ան. Շարայար.

Թ. 1287. «Մայիս ամսոյն շարժ եղև յԵրզնկան, բազում մարդիկք մեռան, որ ըզթիւն միայն Աստուած գիտէ»: Տ. Ան. պտմ.

Թ. 1289. «Շարժմամբ կործանեցաւ Երզնկան»: Տ. Սամ. Ան. Շար. (նոյնը տ. Ան. պտմ. 1290 թուին):

Թ. 1308. «Շարժն տարաւ զվանքն ս. Առաքելոյն Թադէոսի, զեկեղեցին և զվանքն կործանեաց և ՀԵ. հոգի սպան»: Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1319—1320. եղև ահագին շարժ յարևելս, և զԹադէոս առաքելոյն վանքն ե զեկեղեցին կործանեաց, և զտունսն փլոյց, և Հե ոգի եսպան. զոր վերստին շինեաց եկեղեցին և զվանքն տէր Զաքարէ: Այլ և ի Գեղարքունի ընկղմեաց զրազում գեօղս հանդերձ արամբք, և յայլ ևս տեղիս»: Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1363. «Շարժն զՄշու երկիրն տարաւ և զվանորայք խախտեաց»: Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1439. «Հուր անկաւ ի Մըմրուտ սարն և շատ տարի այրեց զայն սարերն»*) Տ. Նոտ. Հյց. 118 և 127.

Թ. 1458 «Շարժ եղև յԵրզնկան. ԼԲ. հազար մարդ մեռաւ. և ոչ այսչափ միայն, այլ ԺԶ անգամ շարժ եղեր յԵրզնկան քան զայս այլ սաստիկ»: Տ. Նոտ. Հյց. 187. տ. և Առ. պատմ.

Թ. 1482. «Շարժ եղև յԵրզնկան. ԼՌ. հոգիք մնացին ի ներքոյ գետնոյն»: Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1543. «Ապրիլի 4 օրն չորեքշաբթի ի լուսանալ աւուրն Ա. ժամն սաստիկ շարժ ելաւ. Ողորմեա՛ փոխին ասելու չափ եղաւ, որ երերաց, և շատ աւեր արաւ: Տ. Անդր. Թոխ.

Թ. 1584. «Շարժեցաւ Եզնկան յունիսի ԺԷ. Գ. ժամուն ս. Լուսաւորչի երկուշաբթի. փլաւ քաղաքն և մեռան ԺԵՌ, արք և կանայք. ԵՌ մարդիկ մնացին ի ներքոյ երկրի, զորս յերկրէ կիսամահ, ոմանք մեռան և կէս խեղեցան»: Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1641. «Շարժ եղև ի Թավրէզ ե յիւր շրջակայսն, և փլաւ Շամլազանն և Ուստաշէկերտ ամարաթին»: Տ. Սամ. Ան. Շար. տ. նոյն և Առ. պտմ. ԼԵ.

Թ. 1646. «Ապրիլ 2 Աւագ Ուրբաթու գիշեր սաստիկ շարժ եղև ի քաղաքն Վան, և բազում մարդիկ մեռան, և շատ աւերութիւն եղև»: Տ. Յիշատ. Ման. 341.

Նոյն. «Մեծ շարժ եղև ի Թավրէզ: Եւ ի սոյն ամին ի շարժմանէ մեծ մասն բերդին Վանայ փլաւ»: Տ. Անդր. Թոխ.

Թ. 1648. «Շարժ սաստիկ եղև ի Վան և ի շրջակայսն իւր, և եկեղեցիք և մզկիթք բազումք վղան, և կէս պարսպի քաղաքին»: Տ. Սամ. Ան. Շար. տ. նոյն և Առ. պատմ. ԼԷ.

Թ. 1668. «Յօգոստոսի 7 օրն ուրբաթ Դ. ժամուն խիստ մեծ և ահագին շարժ եղև, որ ոչ տեսեալ էր և լուեալ բնաւ, զի բազում քաղաք և գիւղք կործանեցան, տունք և ապարանք»: Տ. Անդր. Թոխ.

Թ. 1679. «Շարժ յԵրևան»: Տ. Զաք. սարկ. 104.

Թ. 1692. «Ապրիլի 13 յառաւօտէ արեգակն նուաղեցաւ և մէգ պատեաց զերկիր այնքան, զի մարդիկք մերձ գոլով զմիմեանս ոչ տեսանէին ի ցերեկի. և մինչև յերեկոյ կարմիր փոշի տեղեաց ի յերկիր. և եղև մարդամահ անդրանկաց, և սաստի՛կ շարժ»: Տ. Յիշատ. Ման. 348.

Թ. 1701. «Մարտի 7-ի մեծ պահոց առաջին ուրբաթն սաստիկ շարժ եղեւ ի քաղաքս Վան, և ի գիշեր ևս շարժ եղև, և ի կիրակէն երկու և երեք անգամ շարժ եղև, և ի չորեքշաբաթ առաւօտուն ևս սաստիկ շարժ եղև որ ամենայն քաղաք ահաբեկ եղեալ սասանեցաւ, և հայ և տաճիկ ամենեքեան թողեալ զտունս իւրեանց ի քաղաքէն ի դուրս կազմեցին վրանս և մնացին տամբք և տղայիւք ոմանք յայգիս, ոմանք ի դաշտս և ի գերեզմանատունս աւուրս բազումս. և սակաւ ոմանք, որ ի քաղաքս մնացեալք էին, գնացեալ ի ժամատունն ննջէին տամբք իւրեանց, և ի միւս շաբաթու օրն դարձեալ ահագին շարժ եղև, յորմէ բազում տունք խախտեցան ի մէջ քաղաքին ե ոչ վղան, և ոչ մարդոյ ինչ վընաս եղև. սակայն ի գեղն Բերդ սակաւ ինչ տուն փլան: Եւ այսպէս եկաց քաղաքս յերերմանի իբրև զնաւ ի ջուրս մինչև ի յօրն գարնանամտին (sic), և ապա հանդարտեցաւ Նախախնամութեամբն Աստուծոյ. Եւ հասեալ ի նոյեմբերի 30 կրկին ևս սաստիկ շարժեցաւ և վնաս ինչ ոչ եղև»: Տ. Յիշատ. Ման. 352.

Թ. 1704. «Յունվարի 13 մեծ շարժ եղև ի քաղաքս Վան: Յունվարի 27 մեծ շարժ եղև ի քաղաքն Բաղէշ, և բազում տունք փլան, և շատ մարդիկ ի ներքոյ տանց մնացին»: Տ. Յիշատ. Ման. 358.

Թ. 1707. «Յուլիսի 5 շարժ եղև սաստիկ»: Տ. Յիշատ. Ման. 365.

Թ. 1715. «Մարտի 8 յառաւօտէ շարժ եղև ի քաղաքս Վան, յորմէ ի յայգիքն սուրբ Յակոբայ վեր տուն մի փլաւ, վեց հոգի տակն մնացին, չորսն մեռան և երկուքն ապրեցան. նաև Բարթուղիմէոս Առաքելոյ գմբէթն թուաւ. և Խոշարայ բերդի բոդանն խախտեցաւ, Ղարասարայ բերդի յիշադին վերայ քաշկն փլաւ և զյիշադն աւերեաց, որ և բազում մարդիկ ի ներքև մնացին, այլ և Սաթմանից քաշկն փլաւ և զբազումս

*) Յայսմ ամի (պղ=1441) մեծ նշան եղև. քանզի լեռն Մամրուտ կոչեցեալ, որի մէջ Խլաթ և Բաղէշէ, յանկարծակի գոռաց իբրև զսաստիկ որոտումն ամպոյ... սարն պատառեցաւ լայն իբր զքաղաք մի և այլ փոքր փոքր, և ի պատառուածէն ի վեր հուր ցոլացեալ ելանէր մառախլապատ ծխով և ժահահոտութեամբ, որ և տղայքն ի հոտոյն հիւանդանային, և քարինք եռային յահագին բոցոյն, և մեծամեծ վէմս ընդ երկինս ձգէին ձայնիւ որոտմամբ և այլն. տ. Ինճիճ. Հնախաս. Ա. 106;

սպան. և այլ բազում գիւղք տապալեցան, և յոլովք մնացին ի ներքև, և բազում վնաս եղև Մահմտանայ երկրին:

Ի յԱրճէշ քաղաքի ի մեծ հինգշաբաթի գիշերն առաւօտեան ժամուն շարժ եղև, որ եկեղեցւոյ գմբեթն անկաւ և 37 մարդ ի ներքև մնացին: Բայց խնամօքն Աստուծոյ մինն մեռաւ և այլ ամենեքեան ապրեցան, այլ շատքն սաղկատել են»: Տ. Ցիշատ. Ման. 368.

Թ. 1791. «Դեկտեմբերի 27 մեծ և անագին շարժ եղև ի քաղաքն Թաւրէզ, որ բոլոր քաղաք տապալեցաւ, և անթիւ մարդիկ մեռան, և ի ներքոյ հողին մնացին, որ ականատեսքն ասացին թէ անագին քաղաք իբրև բնական բլուր մի եղև, որ ամենևին քաղաքի նշմարանք ոչ երևէին. նաև շրջակայ դասաբայք՝ Խոյ, Որմի, Գունայի, Սալմաստ. և ի քաղաքս մեր Վան ևս շարժեցաւ, և ողորմութեամբ Աստուծոյ ոչինչ վնաս եղև»: Տ. Ցիշատ. Ման. 398.

Այս հատուածները քաղել են հետևեալ աղբիւրներից.

Յովհան Մամիկոնեան. Պատմ. Տարօնոյ, Վենետ. 1882.

Մովսէս Կաղանկատուացի, Պատմ. Աղուանից, Մոսկով 1860.

Ստեփաննոս Օրպէլեան, Պատմ. տանն Սիսական, Մոսկով 1861.

Թովմա Արծրունի, Պատմ. տանն Արծրունեաց, Ս. Պետ. 1887.

Յովհաննէս կաթուղիկոսի պատմութիւն, Երուսաղէմ 1867.

Մատթէոս Ուռհայեցի, Պատմութիւն, Երուսաղէմ 1869.

Ստեփաննոս Ասողիկ, Պատմութիւն, Ս. Պետ. 1885.

Վարդան վարդ. Հաւաքմունք պատմ. Վենետ. 1862.

Կիրակոս Գանձակեցի, Համառ. Պատմ. Վենետ. 1865.

Սամուէլ Անեցի, Հաւաքմունք և այլն, Վաղարշ. 1898.

Նստարք Հայոց, Ղեոնդ վ. Փիրղ. Կ. Պոլիս:

Մանանայ, Գ. վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս 1876.

Զաքարիա սարկաւագի պատմագր, Վաղարշ. 1870.

Մխիթար Այրիվանեցի, պատմ. Հայոց, Մոսկ. 1860 և այլն.



ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարության կողմից ձեռնարկված զանգվածային տեղահանությունների և կոտորածների, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի մի շարք նահանջների հետևանքով, ողջ մնացած արևմտահայերից շատերը, մազապուրծ փախչելով, ապրեցին ինչպես աշխարհի տարբեր երկրներում, այնպես էլ ռուսական կայսրության բազմաթիվ շրջաններում՝ այդ թվում նաև Կովկասում:

Տալով մարդկային և նյութական մեծ կորուստներ, արևմտահայությունը կանգնեց ֆիզիկական իսպառ ոչնչացման վտանգի առջև, որն էլ իր հերթին լուրջ դրժվարություններ ստեղծեց հայ ժողովրդի այդ հատվածի հոգևոր-մշակութային արժեքների փրկության ուղղությամբ: «...Մեր համար թանկ են ոչ միայն մեր փախստականների կյանքը, այլև նրանց հոգևոր ստեղծագործությունները, որ վերահաս կորստյան և ոչնչացման վտանգին ենթարկված..., որ անգնահատելի արժեք ունեն գիտական և ազգային-կուլտուրական տեսակետներով»,—իր նամակներից մեկում նշում էր Գարեգին վարդապետ Հովսեփյանը: «Մեր պարտքն է,—շարունակում էր նա,—և՛ այս անփոխարինելի կորստյան մասին մտածել, և՛ գործադրել բոլոր հնարավոր միջոցները՝ փրկելու կորստից այս թանկարժեք նյութերը»[1]:

Պատերազմի տարիներին Էջմիածնի կաթողիկոսարանը ձեռնամուխ եղավ փրկելու արևմտահայերի բազմադարյան և հարուստ մշակույթի նմուշները:

Արևմտահայ գաղթականների շրջանում հնագիտական-ազգագրական տարբեր բնույթի ուսումնասիրություններ կատարելու նպատակով, 1915 թ. դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ Գևորգյան ճեմարանի խառը՝ մանկավարժական ժողովից ընտրված Ազգագրական Հանձնաժողովի առաջին նիստը, որին մասնակցում էին հանձնաժողովի անդամներ՝ Գարեգին վարդապետ Հովսեփյանը, Լևոն Գյանջեցյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, Գրիգոր Ղափանցյանը, Արշակ Տեր-Հովսեփյանը և Աշոտ Հովհաննիսյանը: Խորհրդակցական ձայնով հանձնաժողովի աշխատանքներին ներկա էին՝ Երվանդ Լալայանը, Վարդգես Սուրենյանցը և Հազարապետյանը[2]:

---

[1] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թղթապանակ № 238, գ. 301 գ(դ):

[2] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թղթապանակ № 238, գ. 261², թ. 112:

Նստաշրջանից անմիջապես հետո, Ազգագրական Հանձնաժողովը հանգեց այն եզրակացությանը, որ հոգևոր-մշակութային փրկարար համապատասխան աշխատանքները հարկավոր է առաջ տանել երեք ուղղություններով, այն է՝ 1) **Մարդաբանական.** ա) գավառների ընտրությամբ կատարել համապատասխան լուսանկարներ, բ) կատարել գանգի և մարմնի այլ մասերի մարդաբանական չափումներ, գ) գիպսից կամ մոմից պատրաստել կաղապարներ: 2) **Գնել կամ հավաքել գաղթականների մոտ գտնվող ազգագրական կամ հնագիտական արժեք ներկայացնող իրերը,** այն է՝ ա) գավառական տարազների, կանանց ու տղամարդկանց զարդերի, տնային կարասիների, արվեստի այլևայլ արտադրությունների, գործիքների պատրաստի լուսանկարներ և յուղանկարներ, բ) գավառների համեմատ, բոլոր հասակներին ու սեռերին համապատասխան շքեղություն և առօրյա գործածության զգեստներ, մազերի, գլխի, կրծքի, թևերի, ոտքերի զարդեր, գ) կարասիներ, ժողովրդական արվեստագործության նյութեր, արտադրական կամ երաժշտական գործիքներ, զենքեր և այլն, դ) հնություններ, ձեռագրեր, դրամներ, տնային կամ եկեղեցական գործածության համար պատրաստված հին անոթներ և այլն: 3) **Ուսումնասիրել ժողովրդի լեզուն, բանահյուսությունը և կենցաղը,** այն է՝ ա) նյութեր հավաքել բարբառների ուսումնասիրության համար, բ) գրի առնել հեքիաթներ, վեպեր, զրույցներ, սիրո, կենցաղային և ծխական երգեր, տեղի կամ դեպքի հետ կապված ավանդություններ, հանելուկներ, առածներ և ասույթներ, գ) հոգ տանել ժողովրդական երաժշտությանն, ուշադրություն դարձնել ժողովրդական վեպի երգելու եղանակների, սիրերգի, ծիսերգի, պարերգի, ողբերի և պանդխտական ու աշխատանքային երգերի երաժշտությանն վրա, դ) նկարագրել սովորույթները, ընտանեկան բարքերը (ծնունդ, հարսանիք և մահ), հալատն ու հալատալիքը, նախապաշարմունքները և այլն, ե) ուսումնասիրման նյութ դարձնել ժողովրդական իրավունքն ու տնտեսությունը, նկարագրել ժողովրդական արհեստագործության (տնայնագործական արդյունաբերության) եղանակները[3]:

Առաջնորդվելով նստաշրջանի վերոհիշյալ որոշումներով, Ազգագրական Հանձնաժողովը ձեռնամուխ եղավ արևմտահայ գաղթականների մոտ պահպանված հնագիտական և ազգագրական արժեքների փրկության գործին: Ուսումնասիրությունների և ժողովածուներ կազմելու համար հանձնաժողովը որոշեց շրջանառության մեջ դնել իր տրամադրության տակ եղած դրամական միջոցները՝ հատկացնելով իրենց գործունեությանը ձեռնամուխ եղած ազգագրական երեք գլխավոր բաժիններից յուրաքանչյուրին երեք հազարական ռուբլի[4]: Գործին ավելի մեծ մասսայականություն հաղորդելու, ինչպես նաև ավելի բանիմաց ուժեր ներգրավելու նպատակով, հանձնաժողովը ցանկալի համարեց աշխատակցության և աջակցության հրավիրել հայ գիտության և արվեստի երախտավորներ՝ Աշխարհբեկ Լոռու Քալանթարին, Հովսեփ Օրբելուն, Հրաչյա Աճառյանին և Սպիրիդոն Մելիքյանին:

Այս բոլորից հետո, հանձնաժողովը քննարկեց ծրագրված աշխատանքը իր անդամների միջև բաժանելու հարցը: Գարեգին վարդապետ Հովսեփյանին և Սենեքերիմ Տեր-Հակոբյանին հանձնարարվեց Էջմիածնի գաղթականների շրջանում զգեստների, իրերի ու հնությունների հավաքման և նկարների պատրաստման գործը: Լեզվի և բարբառների ուսումնասիրությունը հանձնարարվեց՝ Լ. Գյանջեցյանին և Գր. Ղափանցյանին, երաժշտության ուսումնասիրությունը՝ Ա. Տեր-Հովսեփյանին, տարազի գունավոր նկարների պատրաստումը՝ Գարեգին վարդապետ Հովսեփյանին, Վ. Սուրենյանցին, Ս. Տեր-Հակոբյանին և Երվանդ Լալայանին, ժողովրդական տնտեսության ուսումնասիրումը՝ Ա. Հովհաննիսյանին, բանահյուսությունը՝ Ե. Լալայանին, Լ. Գյանջեցյանին և Գր. Ղափանցյանին[5]: Մասնակիցների անվանական հեղինակավոր ցանկը վկայում է այն մասին, որ հայրենանվեր այդ գործի օգնությանը իրենց պատրաստակամությունն էին հայտնել ժամանակի հայ մտավորականության համարյա թե բոլոր նշանավոր դեմքերը՝ ինչպես գիտության, այնպես էլ արվեստի բնագավառում:

Ընդհանրապես առաջին հետաքրքրությունն պատերազմի տարիներին ակներև էր հայ մտավորականության տագնապը՝ հայ բազմադարյան մշակույթի տարբեր ոլորտների գեղարվեստական նմուշների վերաց-

[3] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թղթապանակ № 238, գ. 261², թ. 112—113:

[4] Նույն տեղում, թ. 118, նաև գ. 801: ա) Նաև Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ, ֆ. 14. Հ. Առաքելյան, գ. 1936:

[5] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թղթապանակ № 238, գ. 261², թ. 113;

ման սպառնալիքի կապակցությամբ: Այդ առումով հատկանշական էին երկրի տարբեր անկյուններից Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդի անունով ստացված նամակները, որոնց հեղինակները՝ հայ մտավորականության ներկայացուցիչները, իրենց տագնապն էին հայտնում մշակույթի նմուշների հավանական կորստյան վերաբերյալ և միաժամանակ իրենց աչալուրջ վերաբերմունքն արտահայտում օգնության գործում: Այսպես, Թիֆլիսի Հայոց Երաժշտական Ընկերության Վարչությունը իր 1916 թ. ապրիլի 30-ի № 8 գրության մեջ՝ ուղղված Հայոց Կաթողիկոսին, նշում էր, որ «...վարչությունս քաջ գիտակցելով ոսպեի ոչջությունը, անկարող է լռության մատնել հայ գեղարվեստի ամենանվիրական ճյուղի՝ երաժշտության վերացումը: Անհրաժեշտ է գեթ նրա բեկորները գրի առնել և վերականգնել ապագայի հայ քաղաքակրթության համար: Ընկերությունը ունենալով երգ հավաքելու և գրի առնելու բոլոր տեխնիկական հարմարությունները, որդիական խորը ակնածությամբ իր հույսը ապավինում է Ձեզ որևէ նյութական աջակցություն ցույց տալ այդ խնդրի իրականացման համար»[6]: Նկատի առնելով Հայ ազգային ժողովրդական երգերի և երաժշտական բեկորների իսպառ կորստի մատնվելու սպառնալիքը, Հայոց Ամենայն կաթողիկոս Գևորգ 5-րդը Թիֆլիսի Հայոց Երաժշտական Վարչության տրամադրության տակ դրեց 1000 ռ.[7]:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ արևմտահայերին բաժին հասած աղետը կարող էր ոչնչացնել հայ ժողովրդի մտավոր և հոգևոր դարավոր ստեղծագործությունները, Հայոց Ազգագրական Ընկերության Խորհուրդը կազմեց փախստական մտավորականներից բաղկացած մի արշավախումբ, որը չորս ամիս շարունակ շրջելով Անդրկովկասի գաղթականական շրջաններում բավականաչափ նյութ հավաքեց (17000 թերթ) հայ բանահյուսության, ազգագրության, բարբառագիտության, ինչպես նաև արևմտահայ կոտորածների և գաղթի պատմության վերաբերյալ՝ ընդ որում համապատասխան վարձատրություն տալով պատմողներին: Հայոց Ազգագրական Ընկերության հայանպաստ գործունեությանը նյութական օժանդակություն էին ցույց տալիս երկրի տարբեր շրջանները: 1916 թ. դեկտեմբերի 22-ին Պետական դումայի անդամ Միքայել Պապաջանյանը՝ Պետրոգրադից ուղարկած իր հեռագրում տեղեկացնում էր, որ Պետական Խորհրդի նախկին անդամ Պավել Օսիպովիչ Ղուկասյանը Ազգագրական Հանձնաժողովի ազգապահպան գործին մեծ թափ հաղորդելու նպատակով, որպես նվիրատվություն, վերջինիս տրամադրության տակ էր դրել 1000 ռ. դրամ[8]: Բացի դրանից, նույն Պ. Օ. Ղուկասյանը, դեռևս 1915 թ. դեկտեմբերի 24-ին 10000 ռ. էր առանձնացրել Գարեգին վարդապետ Հովսեփյանի տրամադրության ներքո, Էջմիածնում ազգագրական թանգարան բացելու համար[9]: Հաշվի առնելով կատարվող աշխատանքների հրատապությունը, 1917 թ. հունվարի 17-ին կայացած Ազգագրական Հանձնաժողովի հերթական նիստը որոշեց Ազգագրական ժողովածուի ստեղծման համար աշխատակցության հրավիրել հայ մշակույթի այլ գործիչներին ևս, այդ թվում, Թ. Թորամանյանին, Ե. Տեր-Մինասյանին, Բ. Իշխանյանին, Կ. Կոստանյանին, Ս. Տիգրանյանին, Հ. Մանանդյանին, Լ. Մսերյանին, Խ. Սամվելյանին, պրոֆ. Նիկոլսկուն, Ա. Զոպանյանին, Գ. Տեր-Մկրտչյանին և ուրիշներին[10]:

* * *

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում նաև գաղթականների կրոնական պահանջմունքների բավարարմանը:

1915 թ. նոյեմբերի 4-ի տվյալներով, Էջմիածնի կաթողիկոսարանի նախաձեռնությամբ կովկասյան ամբողջ երկրամասում կրոնական գործունեություն էին ծավալել 95 հայ առաքելական գաղթական քահանաներ, որոնք բավարարում էին նույն երկրամասի հայ գաղթականների բոլոր կրոնական պահանջմունքները[11]: Եթե յուրաքանչյուր կաթոլիկ հոգևորականի բաժին էր ընկնում 10000 գաղթական՝ 150 ռ. ամսական աշխատավարձով, ապա 2000 հայ գաղթականներին բաժին էր հասնում 1 հոգևորական՝ 50 ռ. ամսական աշխատավարձով[12]:

1915 թ. աշնանը Պետրոգրադում ներքին գործերի մինիստրության կառավարչի, գաղթականական հանձնաժողովի և Պետական խորհրդի անդամ սենատոր Կոնի նախագահությամբ գործող հատուկ ենթակոմիտեի կողմից ընդունված հրահանգների համաձայն, ներքին գործերի մինիս-

[6] ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1080, թ. 1:

[7] Նույն տեղում, թ. 2:

[8] Նույն տեղում, թ. 1:

[9] Մատենադարան, ֆ. 1, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թղթապանակ № 288, գ. 326ա:

[10] Նույն տեղում, գ. 261², թ. 119—120:

[11] ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆ. 50, գ. 1, գ. 102, թ. 8:

[12] Նույն տեղում:

տրության կողմից ձեռնարկվեցին մի շարք միջոցներ կաթոլիկ և բողոքական գաղթականների կրոնական կարիքները բավարարելու ուղղությամբ: Վերոհիշյալ ենթակոմիտեներում քննարկվեց նաև հայ գաղթականների կրոնական հոգատարության կազմակերպման հարցը: Հաշվի առնելով արևմտահայ հոգևորականների սակավությունը, ենթակոմիտեն 1915 թ. դեկտեմբերին որոշեց արևմտահայերի կրոնական պահանջմունքների բավարարման գործը հանձնարարել տեղական արևելահայ հայ առաքելական հոգևորականներին[13]:

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Էջմիածնի կաթողիկոսարանի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ իրականացվեցին մի շարք կազմակերպչական ձեռնարկումներ, որոնք իսկական երաշխիք հանդիսացան արևմտահայ գաղթականների մշակութային ժառանգության փրկության գործում:

[13] ՀՍՍՀ ՊՊԿԱ, ֆ. 50, ց. 1, գ. 102, թ. 1:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ФЕВРАЛЬ—МАРТ 1989 г.)

1. Пасхальная проповедь Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I в Кафедральном Соборе святого Эчмиадзина, 26 марта 1989 г. (стр. 3—4).

2. Обмен поздравительными телеграммами и посланиями между Его Святейшеством Верховным Патриархом и Католикосом Всех Армян Вазгеном I и предстоятелями сестер-церквей в связи с празднованием православного Святого Воскресения Спасителя (стр. 5—7).

3. Поздравительные послания Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I трем первосвященным престолам, предводителям церковных епархий и церковным общинам Армянской Апостольской Церкви в связи с празднованием православного Святого Воскресения Спасителя (стр. 8—9).

4. Письмо президента США Джорджа Буша Его Святейшеству Католикосу Всех Армян Вазгену I, 2 марта 1989 г. (стр. 10).

5. Вручение Католикосу Всех Армян Вазгену I высокой государственной награды, 31 марта 1989 г. (стр. 11).

6. Председатель Совета Министров АССР В. С. Маркарянц в Первопрестольном Святом Эчмиадзине, 27 февраля 1989 г. (стр. 12).

7. Телеграмма-соболезнование Его Святейшества Вазгена I Патриарху—Католикосу Всея Грузии Илии II, в память о жертвах 9 апреля сего года в городе Тбилиси, 11 апреля 1989 г. (стр. 13).

8. Проповедь Его Святейшества Католикоса Вазгена I в Кафедральном Соборе св. Эчмиадзина, 19 февраля 1989 г. (стр. 14—17).

9. Встреча Святейшего Католикоса Вазгена I с избирателями во дворце культуры г. Эчмиадзина. Речь Его Святейшества во время этой встречи, 21 марта 1989 г. (стр. 18—23).

10. Сообщение канцелярии Первопрестольного св. Эчмиадзина Об утверждении соглашений ряда организаций зарубежных стран с благотворительной целью оказания помощи зонам бедствия в Армении (стр. 24—25).

11. Визит Его Святейшества Вазгена I в США с целью координации и взаимосотрудничества церковных и национальных организаций по оказанию помощи зонам бедствия Армении, 1—14 февраля 1989 г. (стр. 26—62).

12. Церковная хроника, новости.
О проповедях, литургиях и других событиях Первопрестольного св. Эчмиадзина в феврале—марте 1989 года. (стр. 63—66).

13. Архиепископ Шаге Аджемян—Проповедь в Кафедральном Соборе на Пасхальный Согельник. 25 марта 1989 г. (стр. 67—68).

14. Иеромонах Абель—Проповедь в Кафедральном Соборе, 23 марта 1989 г. (стр. 69—71).

15. Заседание подкомиссии Всемирного Совета Церквей в Кипре. 27 февраля—5 марта 1989 г. (стр. 72).

16. Священник Месроп Пеплиян—Торжественная литургия в Софии в день Свв. воевод Вартана Мамиконяна 1036 мучеников и Тезоименитства Верховного Патриарха и Католикоса Всех Армян Вазгена I, 2 февраля 1989 г. (стр. 73—74).

17. Иеромонах Микаел Аджанглян—Посещение Ленинакана и Спитака Патриаршим экзархом Греции и предводителем армянской церковной епархии Дамаска преосвященным епископом Восканом Галпагяном, 9 апреля 1989 г. (стр. 75).

18. 475-летие со дня основания Акатарского монастыря Св. Богородицы, 14 августа 1989 г. Благословенное послание Его Святейшества Католикоса Вазгена I в связи с этим юбилеем (стр. 76—77).

19. Архимандрит Хажак Парсамян—Чин масленицы в Армянской Церкви (исследование)—(стр. 78—85).

20. К. Костанянц—«Летопись землетрясений в Армении» «историографические сведения)—(стр. 86—90).

21. Авегис Арутюнян—Эчмиадзинский католикосат и вопрос о спасении в годы Первой Мировой войны духовно-культурных ценностей армянских беженцев (исследование)—(стр. 91—94).



"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(FEBRUARY—MARCH 1989)

1. The sermon of Holy Easter of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, given in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 26-th March 1989 (pp. 3—4).

2. The cables and letters of greeting exchanged between His Holiness Vasken I, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the spiritual heads of the Sister Churches, on the occasion of the feast of Holy Resurrection (pp. 5—7).

3. The congratulatory letters of His Holiness to the three hierarchical Sees of the Armenian Church, all the diocesan prelates and church communities, on the occasion of the feast of Holy Resurrection (pp. 8—9).

4. The letter of Mr. George Bush, the President of the United States, to His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, 2-nd March 1989 (p. 10).

5. Delivery of the State honorary decoration to His Holiness, 31-st March 1989 (p. 11).

6. The President of the Armenian S. S. R. ministers' council Mr. V. S. Markariantz in the Holy See, 27-th February 1989 (p. 12).

7. Cable of condolence of His Holiness to Ilya II, the Patriarch-Catholicos of All Georgia, for the victims of the tragic events of this year in Tbilisi (p. 13).

8. The sermon given by His Holiness Vasken I. in he Holy Cathedral of St. Etchmiadzin, 19-th February 1989 (pp. 14—17).

9. The meeting of His Holiness with His electors in the House of Culture in Etchmiadzin. Follows the address of His Holiness given during the meeting, 21-st March 1989 (pp. 18—23).

10. The communiqué of the Holy See's Chancellory, dated 25-th March 1989, about the establishment of contracts between the Special State Commission of Armenian S. S. R. and the representatives of different religious organizations of some countries in abroad for the realization of the reconstruction projects in the devastated regions of Armenia (pp. 24—25).

11. The visit of His Holiness Vasken I to the United States, to assure the help to the regions devastated of Armenia by the earthquake by the means of the national and ecclesiastical organizations of the Diaspora, 1—14-th February 1989 (pp. 26—62).

12. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of Church festivities in the Holy See during the months of February-March 1989 (pp. 63—66).

13. Archbishop Shahe Ajemian—Sermon delivered in the Holy Cathedral during the day of Easter eve, 25-th March 1989 (pp. 67—68).

14. Reverend Abel—Sermon delivered in the Holy Cathedral, 23-th March 1989 (pp. 69—71).

15. Meetrng of theologians organized in Cairo by the World Council of Churches, from 27-th February until 5-th March 1989 (p. 72).

16. Father Mesrob Benlian—Solemn liturgy devoted to commemoration of the Day of Saint Vardan, in the Armenian Church of Sofia, 2-nd February 1989 (pp. 73—74).

17. Reverend Mikayel Atchabahian—The visit of Bishop Vosskan Kalpakian, the primate of the Armenian diocese of Damascus, to the cities of Leninakan and Spilak (p. 75).

18. Celebration of the 475-th anniversary of the foundation of Hadgkadar Holy Virgin monastery (Romania), 14-th August 1988. Follows also the benediction message of His Holiness delivered on this occation (pp. 76—77).

19. Reverend Khajag Barsamian—The ceremony of the Oil Bearers in the Armenian Church (study)—(pp. 78—85).

20. K. Kosdaniantz—«Chronicle of earthquake happened in Armenia» (bibliographical informations)—(pp. 86—90).

21. Avedis Harootiunian—The catholicossate of Etchiadzin and the protection's problem of the spiritual-cultural values of the Armenian refugess during the first World war (study)—(pp. 91—94).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(FEVRIER—MARS 1989)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 26 mars 1989 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la sainte fête de Pâques (pp. 3—4).

2. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion de la fête de la Sainte Résurrection de notre Seigneur Jésus-Christ (pp. 5—7).

3. Lettres de felicitation de Sa Sainteté aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise apostolique arménienne à l'occasion de la fête pascale (pp. 8—9).

4. Lettre du président des Etats Unis Georges Bush adressée le 2 mars 1989 à Sa Sainteté Vasken Ier (p. 10).

5. Remise de la décoration honorifique d'Etat à Sa Sainteté Vasken Ier (31 mars 1989)—(p. 11).

6. Visite au Saint-Siège d'Etchmiadzine de Monsieur V. S. Markariants, président du Conseil des Ministres de la R S. S. d'Arménie (27 février 1989)—(p. 12).

7. Télégramme de condoléances de Sa Sainteté Vasken Ier adressé à Sa Sainteté Ilia II, Patriarche-Catholicos de toute la Géorgie, pour les victimes des événements tragiques qui ont eu lieu à Tbilissi (p. 13).

8. Homélie de Sa Sainteté prononcé le 19 février 1989 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 14—17).

9. Rencontre de Sa Sainteté avec ses électeurs dans la Maison de Culture de la ville d'Etchmiadzine. Suit le discours de Sa Sainteté au cours de cette rencontre (21 mars 1989)—(pp. 18—23).

10. Communiqué de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant les accords conclus le 25 mars 1989 entre la Commission Spéciale d'Etat de la R. S. S. d'Arménie et les représentants de différentes organisations religieuses de certains pays étrangers pour la réalisation des projets de reconstruction dans les régions sinistrées d'Arménie (pp. 24—25).

11. Visite de Sa Sainteté aux Etats Unis en vue d'organiser une collecte par l'intermédiaire des organisations religieuses et nationales de la diaspora arménienne pour la reconstruction des régions de la zone sinistrée d'Arménie (1—14 février 1989)—(pp. 26—62).

12. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois février-mars 1989 (pp. 63—66).

13. Sermon de l'archevêque Chahé Ajamian prononcé le 25 mars 1989 dans la cathédrale de Saint-Etchmiadzine la veille de Pâques (pp. 67—68).

14. Sermon du Père Abel prononcé le 23 mars 1989 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 69—71).

15. Réunion de théologiens organisée au Caire par le Conseil Oecuménique des Eglises (du 27 février au 5 mars 1989)—(p. 72).

16. Père Mesrop Benllan—Messe solennelle et commémoration de la fête de St. Vartan dans l'église arménienne de Sofia (2 février 1989)—(pp. 73—74).

17 Père Mikaël Atchapahlan—Visite de l'evêque Voskan Kalpakian, prélat du diocèse des Arméniens de Damas, à Léninakan et à Spitak—(p. 75).

18. Célébration du 475e anniversaire de la fondation du monastère de la Sainte Vierge d'Hadjkatar (Roumanie). Message de bénédiction Sa Sainteté publié à cette occasion (14 août 1988)—(pp. 76—77).

19. Père Khajak Parsamian—«La cérémonie des Porteuses d'huile dans l'Eglise arménienne» (étude)—(pp. 78—85).

20. K. Kostanlants—«Chronique des séismes survenus en Arménie» (informations bibliographiques)—(pp. 86—90).

21. Avétis Haroutiounian—Le catholicossat de Saint-Etchmiadzine et le problème de la protection des objets de valeur spirituelle et culturelle appartenant aux émigrés arméniens pendant la première guerre mondiale (étude)—(pp. 91—94).